

Գեղար Սեփան



ԳԵՂԱՐՍԻ
ԼՐԱԴԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

929/831.381 Արդարյան

ԳԵՂԱՄ ՍԵՎԱՆ


ԳԱՌՆԻԿ ԱԴԴԱՐՅԱՆ

(ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ)

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՎԱՆԱՎՈՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ

A 85124

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1998



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ գրականության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Բ. Գ. Բ.

Վ. Հ. ՓԱՐՔԱՄՅԱՆ

Գիրքը հրատարակության էն երաշխավորել
գրախոսներ Բ. Գ. Դ. Ա. Կ. ԵՂԻՍՉԱԲՅԱՆԸ և

Բ. Գ. Դ. Գ. Ա. ՀԱՅՐՅԱՆԸ

ՍԵՎԱՆ Գ.

Ս. 413 Գառնիկ Աղդարյան (Կյանքը և ստեղծագործություն-
նք) /Պատ. խմբ.՝ Վ. Հ. Փարքամյան/ ՀՀ ԳԱԱ գրակ.
ին-տ., Եր., «Գիտություն» հրատ., 1998, 132 էջ:

Մենագրությունը իր լրացումն է բերում հեղինակի երկհա-
տոր («Սփյուռքահայ գրականության պատմության ուրվա-
գծեր», Երևան, 1980, 1997) ուսումնասիրությանը՝ ներկայացնելով
լիբանանահայ գրող, հրապարակագիր և հասարակական գործիչ Գառ-
նիկ Աղդարյանի կյանքը և ստեղծագործական ուղին:

Գիրքը հասցեագրվում է գրականության մասնագետներին, դա-
սախոսներին և ուսանողությանը, ինչպես նաև բնօրրոգող լայն հան-
րությանը:

4603020100

Ս

703(02) — 98

ԳՄԴ 83.32

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998

ՀԵՂԻՆԱԿԸ ԵՎ ԻՐ ՀՆՐՈՍԸ

Գեղամ Սևանը հանկարծամահ եղավ 1991 թ., հեռու-տացույցի առջև, Ղարաբաղի մասին հերքական հաղորդումը դիտելիս: Այս գիրքը կարդալիս բնթերցողը չի կարող չանդ-րադառնալ այն փաստին, որ Գառնիկ Աղդարյանը ևս հան-կարծամահ եղավ 1986 թ. նոյեմբերին, երբ պատրաստվում էր մասնակցել ՀԽՄՀ հորելյանական երեկույթին: Կյանքից հեռանալու այս նմանափայ հանգամանքները կարող էին և զուգադիպություն լինել, եթե չլինե՞ր նրանց անհատականու-թյունների նմանությունը: Գրեթե սերնդակից, գաղափարակից-ներ և գրչակիցներ էին Գեղամ Սևանը և Գառնիկ Աղդարյանը: Գաղափարի մարդիկ էին, այսինքն՝ մարդիկ, որոնք ապրում են ոչ այնքան անձնական կյանքով, որքան հասարակական, այս-պիսի մարդկանց գաղափարական ելակետները կարելի է վի-ճարկել, բայց չի կարելի նրանց շահագրել: Այսպիսի մարդիկ շատ խորն են վերապրում ազգի, ժողովրդի, մարդկության նակատագրերը: Դրա համար է, որ նրանց սրտերը շուտ են մաշվում: Այսպիսի մարդկանց ոչ մի կերպ չի կարելի շփոթել գաղափարի մակաբույծների (նմատ. Օտյանի «հեղափոխու-թյան մակաբույծները») հետ:

Սա մարդկային մի տիպ էր, որ ծնվեց XIX դարի երկ-րորդ կեսին, մի ամբողջ հարյուրամյակ խոր կնիք դրեց մարդ-կային հասարակության զարգացման վրա: XX դարի վեր-ջին այդ տիպը կարծես սկսում է տեղի տալ: Լավ է, որ գա-ղափարական մոլեռանդությունը վերանում է. այն շատ ա-վերներ գործեց մեր դարի հատկապես առաջին կեսին: Բայց գաղափարի մարդկանց պակասը մենք, կարծում եմ, դեռ շատ ենք զգալու... Մարդկանց, որոնք բարձրանում էին բոլոր տե-

սակի անձնական շահախնդրություններից. նյութից՝ իրենց
ընտրած գաղափարներին, այսինքն՝ հանրությանը, ուրիշնե-
րին. ժողովրդին ծառայելու համար...

Գեղամ Սևանն ու Գառնիկ Աղդարյանը այդպիսի մարդիկ
էին: Նրանք կոմունիստներ էին. նրանց դավանած գաղափա-
րախոսությունը այսօր ենթարկվում է ամենախիստ բնադա-
սության, որը երբեք արդարացի է, ավելի հաճախ՝ անարդա-
րացի: Այդ գաղափարախոսության անունով ոնիրներ գործ-
վեցին. բայց նաև այդ գաղափարախոսությունը տասնամ-
յակներ հույս էր միլիոնների համար, ուղեցույց էր, որը շատ-
շատերին փրկում էր կեցության հանիքներում խեղդվելուց:

Գեղամ Սևանն ու Գառնիկ Աղդարյանը անմասն չմնացին
կոմունիզմի ծայրահեղություններից ու սահմանափակությու-
ններից. այդ երևում է նաև նրանց գրական ժառանգության
մեջ: Բայց նրանք նաև կրողը եղան այն բարձր ձգտումների,
որոնք պարունակում էր կոմունիզմը: Եվ, որ նրանց դեպ-
քան շատ կարեւոր է, իրենց կուսակցական պատկանելությու-
նը նրանց չկարեց ազգային կյանքից, ազգային խնդիրներից:
Հնարավոր է, իրենց կյանքի ինչ-որ պահերի ինտերնացիո-
նալիզմը նրանց էլ ներկայացավ իբրև վերազգային արժեք-
ների պաշտամունք: Բայց այդ մարդիկ շատ հալ էին մինչև վերջ
այդպիսի մոլորության մեջ ապրելու համար: Եվ ապրեցին ու
այրվեցին ազգային հոգսերով ու խնդիրներով: Գեղամ Սևանը
իւր կյանքի վերջին տասնամյակներում զբաղված էր սփյուռֆա-
նայ գրականության ուսումնասիրությամբ և գրեց իր երկհատոր
«Սփյուռֆանայ գրականության պատմության ուրվագծերը»,
որը անգնահատելի ծառայություն եղավ ազգային մշակույթի
ամբողջական պատկերը ստեղծելու գործում: Իսկ Գառնիկ
Աղդարյանի ազգային գործունեության մասին պատմել ավե-
լի լավ, քան Գեղամ Սևանն է անում, երևի հնարավոր չէ.
հիանալի գիտի միջավայրը, ժամանակը, մարդկանց, որով-
հետև ինքն էլ նույն բուրայում է թրծվել, աշխատել է Գառ-
նիկ Աղդարյանի և մյուսների հետ մինչև Հայաստան տեղա-
փոխվելը...

Բնքերցողի ուշադրությունը կուգի հրավիրել ներկա գրքի գոնե մի բանի էջերի վրա: Դրանք նվիրված են արտագաղթի և ցեղասպանության խնդիրներին, ավելի նիշտ՝ այն բանին, թե ինչպես էր վերաբերվում դրանց Գառնիկ Աղդարյանը: Եվ այս դեպքում կատարված ծավալուն հաղվածքները միանգամայն տեղին են. զգում ես այն ներքին կրակը, որը այրում է Աղդարյանի էությունը, և հաս, թե ինչքան այդ ամենը համահնչուն է իր՝ Գեղամ Սևանի էությանը: Սևանի գիրքը գրված է գրեթե մի տասնամյակ առաջ, իսկ Աղդարյանի՝ նրա կողմից բնավոր հողվածները՝ ավելի վաղ: Բայց այդ ամենը այնքան քառն ու մառնոգիչ է հաս այսօր: Եվ իսկապես, մենք էլ այսօր չպիտի է ցավով հարց տանք մեզ, թե ուր և ինչու են գնում մեր հայրենակիցները, հազարներով ու հարյուր հազարներով լինելով միակ հայրենիք՝ Հայաստանը:

Կամ ցեղասպանության խնդիրը: Տեսե՛ք՝ ինչ զայրացկոտ տողեր է գրում Գառնիկ Աղդարյանը հայոց մեծ ցեղասպանությունը իրագործողների հետևորդների մասին, որոնք Ստամբուլում կանգնեցրել են Թալեաթ փաշայի արձանը. նրանց ամերիկյան և այլազգի հովանավորների մասին, որոնք առաջնորդվում են ոչ թե մարդկային բարոյականության օրենքներով, այլ ամենակոպիտ շահախնդրությամբ. և նրանց այդ նույն շահախնդրությունը չէ՞ր, որ 1915-ին արձակեց քուրճերի ձեռքը...

Եվ, վերջապես, Գառնիկ Աղդարյանը այն գործիչներից էր, որ կարողացավ վեր բարձրանալ կուսակցականության ճեղ սահմաններից: Կուսակցական երկպառակությունները վերջին հարյուրամյակում Հայաստանի կյանքում խիստ բացասական դեր են կատարել: Իհարկե, կուսակցությունների գոյությունը օբյեկտիվ իրողություն է, պատմական զարգացման ներկա փուլի անխուսափելի հատկանիշը: Բայց նեղ-կուսակցական մտածողությունից վերանալը այսօր խիստ անհրաժեշտ է մեզ: Ահա թե ինչու հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Աղդարյանի մանվանը նվիրված էջերը, որոնցում պարզվում է հայ տարբեր կուսակցությունների համակրական վերաբեր-

մունքը Աղդարյանի հանդեպ: Ասել է թե նրա մեջ աեսնում էին ոչ այնքան կուսակցական հակառակորդին, որքան համագգային մտահոգություններով ապրող գործչին:

Գեղամ Աևանի գրում, անշուշտ, կան նաև բույլ էջեր. մասնավորապես երևի պետք էր ավելի հանգամանորեն քննել Գառնիկ Աղդարյանի բուն գեղարվեստական ժառանգությունը: Բայց ես կարծում եմ, այսօր բույլ ու ուժեղ էջերի հաշվեկշռով չպետք է գնահատվի այս գիրքը. այլ իբրև մի շատ ինքնատիպ փաստաթուղթ. որը մեզ օգնում է հասկանալու մեր ազգային կյանքը, սփյուռքը: Այն մեզ օգնում է հասկանալու այն սերունդներին, որոնք ապրեցին XX դարի դրամատիկ ու ողբերգական շրջադարձերի մեջ, կրողը եղան այդ դարի նախապաշարումների և ազնվագույն երազների: Գեղամ Աևանի գիրքը իր սերնդի յուրատեսակ ինքնանկար է:

Այսպես է ինձ ներկայանում Գեղամ Աևանի ոչ մեծ գիրքը իր բնկերոջ, գրչակցի ու զաղափարակցի՝ XX դարի հայ բանաստեղծ ու հասարակական գործիչ Գառնիկ Աղդարյանի մասին...

ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կ Յ Ա Ն Ք Ը

Ու կը քալեմ ես նորեն՝ մօտ մայրերէն անցյալին,
Դիշեւին մէջ կը տեսնեմ փոքրիկ տղա մը արտում.

ԳԱՌՆԻԿ ԱԴԳԱՐՅԱՆ

Բանաստեղծ, հրապարակագիր, քաղաքական ու հասարակական գործիչ, խմբագիր Գառնիկ Հովսեփի Աղդարյանը երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապէս հետո Սիբիա—Լիբանանում հրապարակ իջած սփյուռքահայ գրականութեան լավագույն ներկայացուցիչներից էր: Հետպատերազմյան գրական սերունդ, որը հետագայ տասնամյակների ընթացքում խոշոր դեր կատարեց նշված գրականութեան զարգացման գործում: Այդ սերնդից զգալի մի տոկոս՝ Անդրանիկ Թերզյան, Ստեփան Ալաջաջյան, Գրիգոր Քելիշյան, Շաքե Վարսյան, Արամ—Արման, Գրիգոր Կյուլյան, Սարգիս Յափուջյան, Պետրոս Պարզե, առավել երեցների հետ՝ Առաքել Պատրիկ, Արիս Շաբլյան և այլն— հայրենադարձութեան առաջին բարավանների հետ վերադարձավ հայրենիք: Մնացյալները՝ Զարեհ Մելքոնյան, Սմբատ Տերունյան, Երվանդ Պարսումյան, Վահրամ Մավյան և շատ ուրիշներ եղան անմիջական շարունակողները սկսված գործի, ի մասնավորի բանաստեղծութեան կալվածում՝ «Ժամագրավայր» ունենալով հատկապէս սփյուռքահայ բանաստեղծութեան առաջին սերնդի նշանավոր գեմբերից մեկի, բանաստեղծ Վահե Վահյանի (Սարգիս Ապտալյան) խմբագրած «Անի» գրականութեան և արվեստի ամսագիրը (1946—1955):

Գառնիկ Աղդարյանն իր առաջին բանաստեղծությունը լույս ընծայեց հենց նշված ամսագրում, բացառապէս խոր-

հըրդանշական մի խորագրով՝ «Հող Հայրենի»¹, որն իր ապ-
րած կյանքի ողջ նպատակադրումը եղավ:

Հայրենագուրկ սերունդին ամբողջ կարոտը սիրախ
ես՝ հոգնաքեկ ու աճոճ, տառապանաբ պարմանի,
Պիտի բեգի համար տամ վերջին ավյունը կյանքիս,
վերջին կարիլն արյունիս, օ՛հ, երկիր իմ հայրենի:

Գրականությունների պատմության մեջ շատ քիչ է պա-
տահում, որ քսանամյա բանաստեղծի բնարական նման զե-
ղումը, թեկուզ անկեղծ իհարկե, կատարվի ո՛չ թե բառի փո-
խաբերական, այլ բառացի իմաստով: Գառնիկ Աղդարյանի
կյանքը, նրա նվիրումը հայրենի հողին հենց այդպիսին էր և՛
այս մինչև «վերջին ավյունը», և՛ նաև բառի իսկական իմաս-
տով մինչև «վերջին կարիլն արյունին»:

Ծնվել է 1925 թվականի մարտի 25-ին (նշվում է նաև
մարտի 23-ը), Սիրիայի հայահոծ Հալեպ բաղադրում, երիտ-
թուրքերի՝ դարասկզբին կազմակերպած ու իրականացրած
հայկական ցեղասպանությունից մազապուրծ աիդրանա-
կերտցի (մայրը) և սյուսեցի (հայրը) մի ընտանիքում, որպես
երկրորդ արու զավակ: Գառնիկ անունը տրվեց մոր ցանկու-
թյամբ՝ 1915-ի դաժան օրերին կորած իր երեց եղբոր առ ի
հիշատակ: Գառնիկի ավագ եղբայրը Ալֆոնսն էր, ծնված
1922 թվականին, որ հետագայում պիտի լիներ նույնպես
սփյուռքահայ գրականության, արձակի տաղանդաշատ դեմ-
բերից մեկը և կոշվեր... Արմեն Դարյան:

Դաժան մանկություն ու պատանեկություն են ունեցել
Աղդարյան եղբայրները, որոնք Գառնիկի ծնունդից ութ տա-
րի անց դառնալու էին երեք: Աշխարհ էր դալու Փիեռը: Ալֆոնս,
Գառնիկ, Փիեռ: Այդպիսի անուններ էին նախընտրել կաթոլի-
կական հարանվանության պատկանող ծնողները: Ի դեպ,
անցյալի ծանր տարիների մասին զրեկ են և՛ Արմեն Դարյա-
նը՝ հիանալի պատմվածքներում, և՛ առավել զուսպ և սեղմ
Գառնիկ Աղդարյանն իր հրապարակախոսական հոդվածնե-

¹ «Անի» ամսագիր, Բեյրութ, Ա. տարի, թիվ 6, սեպտեմբեր, 1946:

բում՝ «Տառապանք»² և այլն, մասնավորապես՝ «Սև և կարմիր»³ պատմվածքների հաստրում: «Մեղքը» խորագիրը կրող էջերը նշված հատորից, կենդանի ու մղձավանջային վիպագրություններ են մանկության վիրավոր տարիների, թանկագին մի մեք՝ Զոհրա Ամիրջան—Աղզարյանի տառապալից կյանքի և աղնիվ ու փշրված մի հոր՝ Հովսեփ Աղզարյանի և, ինչ խոսք, մանկություն շունեցած երեք եղբայրների մասին:

«Մայրը... կհիշեր մանկությունը—կարիքը՝ աներես հյուրի պես՝ մտած էր իրենց տունեն ներս ու մեկնելու մտադրություն շուներ բնավ: Հայրը՝ բարի, բայց անդոր, ամեն դժվարության առջև հուսալքվող, եղբայրը՝ իր պատկերով դրեթե իր պատկերով, ու մայրը՝ մրջյունի պես օրնիրուն աշխատող, լվացքի տաշտին դիմաց կամ կարի մեքենային առջև, անժամանակորեն կրած՝ օրերու կուտակվող դառնության տակ: Փնարեց հիշողության մեջ, չգտավ, մոր խնդուքը չկար, մայրը չէր խնդացած երեք, չգտավ: Խնդալը մոռացած էր ան, ինդալ չէր սորված թերև: Կա՛լ— ձեռքը տարավ կոկորդին, հիշողության մեջ արձագանքեց խուլ, հեռավոր հեկեկանք մը: Վերջին պատասք տվավ իրեն, ցուրտ գիշեր մըն էր, վերջին պատասք տվավ իրեն, զնաց խոհանոց: Ինք բնազդաբար գնաց ետեն, մայրը նստած էր աթոռակին վրա, հայրը կողքին ու մոր ձայնը խուլ, հեռավոր հեկեկանքի մը պես.— «Մատներս տերեի պես կդողան, ալ չեմ դիմանար»: Ձեռքը տարավ կոկորդին: Շարժեց գլուխը.— հիշողությունը մոխի՛ր է, մոխիրին տակ անթեղված կրակները՝ հիշատակներ, ունելիով կխառնես մոխիրը, հիշատակները կարծարծվին, կբոցավառին հետրդհետև: Փախտի պես բան մը ուրվագծվեցավ շրթներուն վրա— օր մը երկու եղբայր եկած էին դպրոցեն, սեղանին վրա՝ զգալ մը ոսպաղուր, ու երկու եղբայր կովեցան լրջորեն իրարու փաթթված՝ ինկան գետին— ո՛վ պիտի ուտեր ոսպա-

² «Տառապանք», «Աղզային մշակույթ», Բեյրութ, թիվ 149, 28 սեպտեմբերի 1986:

³ «Սև և կարմիր», «Մեղքը», Երևան, 1979, էջ 8—10:

պուրը: Հանկարծ մայրը բացավ դուռը, նայեցավ, չպոտաց, լուռ նայեցավ միայն: Երեխա էին իրենք, բայց հասկացան, կանգ առին ու փաթթվեցան իրենց մորը:

Ունեւիրով խառնեց մոխիրը: Ինք ութը տարեկան էր, երբ ծնավ փոքր եղբայրը, մայրը ուրախ չէր. «Ուրկե՞ եկավ այս մեկը, երկուբին հետ պուխ չէինք ելլեր, երեքին ինչպե՞ս հասցնենք»: Հայրը՝ «Աստված մեծ է», մայրը՝ «Գոնե աղջիկ ըլլար, կմեծնար, կօպներ ինծի»: Ինք ութ տարեկան էր, հայրը՝ քսավ՝ «Աստված մեծ է», բայց ինք չհասկցավ, ինք միայն նկատեց, թե փոքր եղբոր հետ կարիքը աճեցավ, զրկանքը միացավ կարիքին: Ու մայրը մաշեցավ քիչ մը ևս, հայրը դարձավ քիչ մը ավելի անզոր: Կամպ մը պլպլաց, մարեցավ հեղհեռե, մոմ մը փոխարինեց լամպը...:

Մեծցա՞ն, բայց ինչպե՞ս մեծցան: Տղեկ մը կերթա դպրոց, ծակ կոշիկներ, սառած ծունկեր, կարկանդակ տաբատ, տնօրենը ղինք կուղարկե տուն՝ մասնավճարը բերելու, մայրը կրնկերակցի իրեն ու տնօրենն կխնդրե, որ համբերե քիչ մը, տեղատարափ անձրե, ճահիճի վերածված փողոց, սղեկը կանցնի՝ մինչև ծունկը ջուրերուն մեջ, մյուս ափին կրմոռանա գիրքերու պաշտասակը, մայրը կվազե խենթի պես, կզանե, կուրախանա: Կիրակի օրերուն համար նոր հագուստ մը. «զգուշ զործածե, չաղոտտես», պզտիկ հաճույքներ ու մեծ տրամուխշտուններ, պզտիկ հրճվանքներ ու մեծ կսկիծներ, պզտիկ ուրախություններ ու մեծ տառապանքներ: Բացավ ալպոմը, փնտրեց, գտավ լուսանկարը— հայրը՝ կանգնած, մայրը՝ նստած՝ հղի փոքր եղբայրով, ու կողքին եղբայրն ու ինք, կիրակնօրյա հագուստով: Փակեց ալպոմը արագորեն, ինչո՞ւ բացավ, բաց ալպոմը բաց վերքի պես էր կարծես:

Մեծցա՞ն, բայց ինչպե՞ս մեծցան: Յուրա էր, ձմեռ, կրակաբանք կառնեք սրունքներուն միջև, մայրը կպոտար՝ «հեռացուր քիչ մը, պիտի հիվանդանաս»: Կամպի աղոտ լույսին տակ՝ զլուխը կհակեր գիրքին վրա, կանգ կառներ երբեմն, կնայեր մորը, կդառնար գիրքին, բայց գիրքն էջերուն մեջ՝ մոր սլառներն էր, մոր խոնջները, մոր տառապանքը: Կիրակի գիշերները կհավաք-

վեին կրակարանին շուրջ, ու մայրը կպատմեր իր մանկության մասին — եղեռնը, դադթի ճամփան, մեծ մայրը՝ լքված անպատին մեջ, մեծ հայրը՝ գլուխը ջարդված քարերով, սովը, կիզիչ ավազը, սարսափը: Կպատմեր, կհուզվեր երբեմն, կուշար, կուշային իրենք ևս: Կիրակի գիշերները կհավարվեին կրակարանին շուրջ, ու մայրը բարձրաձայն կկարդար հուզիչ վեպ մը, ի՞նչ լավ, ի՞նչ արագ կկարդար մայրը, վեպի էջերուն հետ խոտվքը կծավալեր հետզհետե, հերոսը հոն էր կռուծեա, իրենց հետ, նստած՝ կրակարանին շուրջ: Կկարդար, կհուզվեր երբեմն, կուշար, կուշային իրենք ևս: Մեծցա՞ն, բայց ինչպե՞ս մեծցան...»:

Այո՛, մեծցան, և երեի հատկապես Արմենն ու Գառնիկը առավելապես ժառանգած մոր՝ Զոհրայի զենքերը: Երրորդը բոլորովին տարբեր նախասիրությունների և նկարագրի տեր էր: Նա իր անվանը ձեռք չտվեց, և, ի դեպ, դրա կարիքն էլ չկար:

Գառնիկ Ազդարյանը նախնական կրթությունը ստացել է Հալեպի Հայկազյան նախադպրանում, ապա նույն քաղաքի Ֆրանսիական ուսումնարանում: 1942 թվականին ընտանիքը տեղափոխվում է Լիբանան (Բեյրութ) մշտական բնակություն: Երեք եղբայրներից միայն Արմեն Դարյանին է վիճակվում հետադաշում ուսանել և ավարտել Վենետիկի Մխիթարյանների Մուրառ-Ռափայելյան հանրահայտ վարժարանը: Գառնիկը հոր ժանրաբեռնվածությունը թեթևացնելու համար մտնում է Լիբանանում ֆրանսիական երկաթուղային ընկերության (ՄՀԲ) գրասենյակը, որպես պաշտոնյա, և այդտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջը՝ ուսման մեջ կոտորտ թողածը ավելիով լրացնելով համառ ինքնազարգացմամբ: Ինքնազարգացում, գումարած մայրենի լեզվի կողքին արաբերենի և ֆրանսերենի հմուտ իմացություն, որոնք կարող էին նախանձը շարժել ուղածղ բարձրագույն ավարտի:

Գառնիկ Ազդարյանը երկաթուղային ընկերությունում իր ունեցած ժանրաբեռնվածությամբ: կողքին, հենց այդ ընկերության գրասենյակներից մեկում, աշխատանքային իր գրասե-

դանը թաքուն վերածած նաև խմբագրական սեղանի, ամբողջ տասնամյակներ հասարակական կարգով կատարում էր նաև խմբագրի պաշտոն՝ աշխատանքից հետո իր օրը մթնեցնելով ղանազան տպարաններում և շատ քիչ անգամ իրականացած խմբագրատներում, որոնք քաղաքական պատճառներով կարճ կյանք էին ունենում։ Գառնիկ Աղզարյանի անգնահատելի վաստակն ունեն կիրանանում (Բեյրութ) լույս ընծայված բազմաթիվ քաղաքական, հասարակական ու գրական շարա-թաթերթ ու պարբերականները, որոնցից մեծամասնությունը խմբագիրն էր կամ խմբագրության անդամը։ Այսպես՝ Ժա-մանակագրական կարգով, Գառնիկ Աղզարյանի անմիջական խմբագրի կամ նրա անվան հետ են նաև կապված «Մշակույթ» (1954—1955), «Գիրք գրականության և արվեստի» (1955—1959) պարբերագրքերը, «Մեր նշանաբանն է՝ Հառաջ» (Իլեւ-էմամ, 1957—1963) շաբաթաթերթը, «Հառաջ գրական», «Էջեր գրականության և արվեստի» (1965—1972) պարբերա-կանները, «Կանչ» (1971—1983), «Աղզային մշակույթ» (1983—1986) շաբաթաթերթերը, որոնց մեջ նա անընդմեջ վարեց ութերորդ էջի «Շաբաթօրյա գրույցները»։

Գառնիկ Աղզարյանը 1976 թվականից ի վեր կանոնա-վորապես աշխատակցում էր Լիրանաճի «Ալ նիզա» օրաթեր-թին և «Ալ թարիր» շաբաթաթերթին՝ ընդգրկվելով այդ պար-բերականների խմբագրական մարմիններում։

Բանաստեղծն իր առաջին ստեղծագործությունները, ինչ-պես ասել ենք, լույս ընծայեց «Անի» ամսագրում, ապա նաև սկզբնական շրջանում «Ժողովուրդի ձայն», «Առավոտ» օրա-թերթերում և, վերջապես, վերոհիշյալ հայկական մամուլում, իսկ հետագա տարիներին դրանք ամփոփվեցին առանձին ժողովածուների մեջ։ Նա սփյուռքահայ բանաստեղծների աչն երջանիկներից էր, որի ձևագիր բանաստեղծությունները նաև լույս ընծայվեցին հայրենիքում։ Այսպես՝ 1954 թվակա-նին Բեյրութում, ապա 1957 թվականին Երևանում, «Սովե-տական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր Սոե-փան Կուրտիկյանի «Պաշարի մարտական դիրքերում» նա-

խաբան խոսքով լույս տեսավ Գառնիկ Աղդարյանի «Պատեն-
շին վրա» խորագրով անդրանիկ ժողովածուն: Նույնը 1963-ին,
բանաստեղծ Իլյա Սելվինսկու առաջաբանով, ուսուցչին լույս
ընծայվեց նաև Մոսկվայում: Այնուհետև հրապարակվում են
Գառնիկ Աղդարյանի «Մատյան ցավի և հատուցման» պոեմը
(Բելյուսթ, 1965 թվական), որը առաջին մրցանակի է արժա-
նանում եղևոնի հիսնամյակի առթիվ Թեքիյան մշակութային
միության կազմակերպած պոեմի մրցույթում: Բանաստեղ-
ծական այս հատորներին հաջորդում է «Վազգեն Շուշանյան»
փորձառավար ուսումնասիրությունը (Բելյուսթ, 1966 թ.), ա-
յա ձեռագիր վիճակում հայրենիք ուղարկված «Ապրիլ-մեռ-
նիմ» ժողովածուն՝ Սիլվա Կապուտիկյանի «Նորից պատենշի
վրա» խորագրված խոսքով (Երևան, 1968), որին հաջորդում
է «Ան և կառմիր» (Բելյուսթ, 1978 թ. և Երևան, 1979 թ.) հա-
տորը, այս անգամ՝ Զորի Բալայանի «Կրկին «Պատենշին վը-
րա» ներածականով:

Այս բոլորից դուրս 1970 թվականին Փարիզում լույս
ընծայվեց «Մատենաշար սիյուռքահայ բանաստեղծության»
շարքով մի հատորյակ, որը նվիրված էր արդեն լայն ճանա-
չում գտած բանաստեղծի հատընտիր ստեղծագործույթյուն-
ներին: Գառնիկ Աղդարյանը 1948 թվականից Լիբանանի կո-
մունիստական կուսակցության անդամ էր, թվական, որից
հետո սկսվում է նրա քաղաքական-հասարակական բուռն
գործունեությունը: 1949 թվականին էր, որ Բելյուսթում հիմ-
նադրվեց «Գրական շրջանակը»: Այդ շրջանակի հիմնադիր
անդամներից էր նաև նա, 1971 թվականից հետո՝ կազ-
մակերպության նախագահը: Կազմակերպություն, որ հետ-
պատերազմյան առաջին տասնամյակներից իսկ լիբանանա-
հայ գրական կյանքում ակնառու դեր կատարեց և դարձավ
սիյուռքահայ գրական նոր սերնդի հասունացման դարբնոց-
ներից մեկը:

Սկսած 1957 թվականից՝ Գառնիկ Աղդարյանը բաղմիցս
եղել է Խորհրդային Հայաստանում և իր բոցաշունչ ելույթնե-
րով մեծ սեր է վայելել հայրենիքում: Գառնիկ Աղդարյանի

վերջին ալյուր Հայաստանի գրողների միության IX համագումարին էր (մայիսի 20—21, 1986 թ.), որտեղ իր սրտառուչ ելույթով առինքնեց ունկնդիրներին և խորապես հուզեց ճակատագրապաշտ իր զեղումներով, որտեղ ասվեցին ի միջի ալյուր և հետևյալ նախագատությունները.

«Սիրելիներ, այս խոսքը երկարեցավ, գուցե չեղավ այն՝ որ պետք էր ըլլար՝ գրողներու համագումարի ամսփոնեն: Ո՞վ գիտե, թե՛րևս վերջին անգամն է այս. (ընդգծումը մերն է, Գ. Ս.) և ուրեմն դժվար էր դիմանալ, ինչպես կրեսն, «սիրտը պարպելու» փորձություն: Արդեն 11 տարի է, որ կիրանանի մեջ «ինչպե՞ս ես» հարցումին կը պատասխանեն «դեռ ողջ եմ»-ով: Եվ, համենայնդեպս, էականը մեր ապահովությունը չէ, էականը ձերինն է, այս հողինը, հրաշափառ այս հայրենիքինը, հայոց ճանապարհի հավերժություն համար...»⁴:

Այստեղ ևս, ինչպես իր առաջին բանաստեղծության մեջ, ասվածը՝ «Ո՞վ գիտե, թե՛րևս վերջին անգամն է», իրականացավ նույնպես բառացի իմաստով և պատահեցավ անսպասելին. 1986 թվականի նոյեմբերի 30-ին, Բեյրութում, երբ լիբանանահայ հասարակությունը հավաքված էր տոնելու Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը, սպասում էր լսելու նաև նրան, նրա խոսքը, որը անպակաս էր նման ձեռնարկներից, առաջին անգամ լինելով կյանքում, նա շհայտնվեց լեմի վրա: Եվ... հասավ գույժը: Գառնիկ Աղդարյանը շկար ալլես: Դավաճանեց սիրտը: Մի խոսքով՝ ամբողջ կյանքում «պատենելի վրա» մնալուց հետո, ընկավ նաև այն սլահին, երբ պետք է ելույթ ունենար ամբիոնից, որ իր պայքարի պատենելներից մեկն էր նաև,՝ երեկ՝ զլխավորներից մեկը: Մահվանից մի տարի անց Արմեն Դարյանը՝ եղբայրը, նրա վերջին օրերի մասին գրել է նաև հետևյալը.

«Ամբողջ օրը կորսվեցավ ծխախոտի ծուխերուն մեջ: Ուրաթ ինքզինք մոռնալ ուզեց համենալով ապարանին մեջ,

⁴ Գառնիկ Աղդարյան, Միակ հավերժականը հողն է, հայրենիքը, հողին վրա համախմբված ժողովուրդը՝ հայրենի պետականության հովանիին տակ, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 135, 22 հունիսի 1986:

քանի մը անգամ փոխելով ձևավորումը նոյեմբեր 29-ի 66-րդ տարեդարձին նվիրված «Ազգային մշակույթի» թիվին:

Շարաթ հետմիջօրեին, մտածեց հաջորդ օրը՝ նոյեմբերի 29-ի տոնակատարության իր քսելիքներուն մասին, փորձեց մեկ առ մեկ պատկերացնել իր ունկնդիրներուն դիմագիծերը, ըստ իր վաղեմի սովորության: Ի՞նչ նոր բան կրնար ըսել անոնց: Բայց ի՞նչ ավելի նոր բան քան հին ու հավերժական Հայաստանը՝ այդ հայրենածարավ հոգիներուն համար: Ու հիշեց իր շատ սիրած Վաղգեն Շուշանյանին վերջին կտակը: Ճիշտ ու ճիշտ քսանամյակ մը առաջ, հրապարակավ խոսեր էր անոր մասին և իր խոսքը ամփոփեր էր գրքուշկի մը մեջ: Գտավ դայն ու իր հոգին հորդեցավ անոր երգեցիկ լեզվին քաղցրությամբ, սիրտը լիացավ անոր արի ու առնական անկեղծությամբ: Հետո՝ մտածումները արագորեն հանձնեց թուղթին, երազելով այն երանելի օրը, երբ պիտի կարենար անկաշկանդ և անհոգ նվիրվիլ միմիայն գրականության՝ ի՞ր «աճողական գոհունակության համար և ոչ թե գրականությունը հարստացնելու հավակնությամբ»:

Կիրակին դինք գտավ ոտքի: Վերջին անգամ մըն ալ աչք նետեց նոթագրութչուններուն վրա. ծալեց թուղթերը և դրավ բաճկոնին ծոցադրպանը, հանձնարարելով կնոջը՝

— Արփիկ, շուշանա՛նք, կը սպասեն, միայն քառորդ ժամ ունիս պատրաստվելու համար:

Ու այդ քառորդ ժամվան մեջ՝ պատահեցավ այն ինչ որ պատահեցավ՝ ուղիղ տարի մը առաջ, այսպես կիրակի օր մը: Նոյեմբերի վերջին կիրակին՝ որ կը զուգադիպեր Հայաստանի խորհրդայնացման 66-րդ տարեդարձի վաղորդայնին⁵:

Բ

Իր հրապարակագրական հոդվածներից մեկում Գառնիկ Ադդարյանը «Որո՞ւն պիտի ուզեիր նմանիլ» հարցն է տալիս ինքն իրեն ու պատասխանում... «Արակո՛ն»ին:

⁵ Առմեն Գառյան, Վերջին օրերը, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 207, 29 նոյեմբերի 1967:

«Զեմ խոսիր բանաստեղծին մասին,— գրում է նա,— տաղանդը կամ հանճարը նվեր մը չէ՝ զոր կտրելի է ընծայել կամ ստանալ, ցանկանալով չէ որ կարելի է ունենալ լույսն ու կրակը իր բառերուն, Արակոնը Արակոնն է, աշխարհի բոլոր մայրերը շնն կրնար արարել իր կրկնակը...

կը խոսիմ մարդո՞ւն մասին...

կը խոսիմ մանավանդ, մանավանդ դիմադրութեան մարտիկի՞ն մասին...:

Անոր մասին, որուն բանաստեղծութունները զրահեցին ազատութեան ֆրանսացի մարտիկները նացիներու գրավման տակ,

Անոր մասին՝ որ մարտիկ էր ինք, կյանքը հազար անգամ վտանգող՝ գրավման զեմ մղված պայքարին մեջ, պատրաստ ընծայաբերելու կյանքը՝ հայրենի հողի ազատագրութեան ի խնդիր,

Անոր մասին, որ դիտեր իր արյունով խմբագրել ընդհատակյա մամուլը, բառերը վերածելով փամփուշտի, և ձայնը՝ դրոշի՝,

Անոր մասին՝ որ ունեցավ պատիվը Դիմադրութեան բանաստեղծը ըլլալու, ինչպես Դիմադրութունը ունեցավ պատիվը զինք ունենալու իրրի երգիչ...:

Կերեակայե՞ք, Փարիզի մայթերուն վրա նացի կրունկները, պատանդները, գնդակահարութունները, կեղբոնացման կայանները, և Արակոնը, Արակոնը՝ դիմադրութեան աննկո՞ւն մարտիկ, որ սարսափելի այդ տարիներուն հրատարակեց բանաստեղծութուններու ութը գիրք, ութը քերթվածներու հատոր՝ նացի գրավման տակ, դիմադրութեան բովին մեջ, կերեակայե՞ք...:

Մեծատառ Մարդը. մեծասիրտ Մարտիկը, որուն պիտի ուզեի նմանիլ...»⁶:

Այս ցանկութունը՝ նմանիլ Արակոնին, առաջին հերթին, որպես Մարդու և մարտիկի, իր կյանքի գնով իսկ Գառնիկ Աղ-

6. Գառնիկ Աղլաւչան, Մարդը, որուն պիտի ուզեի նմանիլ, «Կանչ» շաբաթաթերթ, Բեյրութ, թիվ 7323, 2 հունվարի 1983:

դարյանին հաջողվեց իրականացնել: Նախ և առաջ նրա համար, որ հենց լիբանանյան հայրենիքը, որի հարադատ զավակն էր Գառնիկ Աղդարյանը՝ «զարմանալիորեն» կնամանվեր «գրավյալ Ֆրանսիային — լիբանանյան հողերում կեսեն ավելին գրավված է սիոնիզմի նոր նացիներու կողմն, գրավման հորդաները կը սրբապղծեն սպիտակ ձյունը լիբանանյան լեռներուն, սպիտակը կը վերածվի կարմիրի, այդ լեռներու զավակներուն արյան կարմիրին, հարավը կը խաշվի հազար անգամ և հազար ձևով, խոշտանգումներ, զնդակահարություններ, կեզրոնացման կայաններ, ի՞նչ պիտի ըներ Արալոնը՝ եթե հիմա ըլլար մեզի հետ...»⁷:

Արալոնը չէր կարող լինել Լիբանանում, իհարկե, բայց Արալոնին նմանվել ցանկացող բանաստեղծ և մարտիկ Գառնիկ Աղդարյանը արեց իր կարելին և հաջողվեց նրան խորհրդանշել ֆրանսիացի մեծ բանաստեղծին Լիբանանում: Եվ ապա, չէ՞ որ սփյուռքը, հենց սփյուռքն ինքը՝ «60 տարիներն ի վեր դիմադրական անընդմեջ պայքար է արգեն, դիմադրություն՝ գոյատևման համար ու ընդդեմ ուժացման համայնակու ալիքներուն, դիմադրություն՝ որպեսզի մեր իրավունքները ունենան իրավատեր, հողը, թրքական հին ու նոր նացիներու կրունկին տակ հեծծող հայրենի հողը ունենա պահանջատեր, դիմադրություն՝ այսօր և այստեղ, թուրք կանգնելու համար լիբանանահայ անփոխարինելի մեր կեզրոնին սպառնացող վտանգներուն դեմ. ի՞նչ պիտի ըներ Արալոնը՝ եթե հիմա ըլլար մեզի հետ...»⁸:

Արալոնը, պարզ է, այստեղ ևս չէր էլ կարող «մեզ հետ» լինել, բայց Գառնիկ Աղդարյանը՝ իր գիտակցական ողջ կյանքում, որպես բանաստեղծ, բառիս լայն առումով և որպես մարտիկ հրապարակագիր, սփյուռքում արեց իր կարելին գոյատևման համար և ընդդեմ ուժացման պայքարում՝ մնալով ամենաառաջավոր դիրքերի վրա: Այստեղ ևս նա խորհրդանշում էր ֆրանսիացի բանաստեղծին: Այո՛, Արա-

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:



42158
A 11

կոնը եթե լիներ հայ, սփյուռքահայ, պիտի աներ այն, ինչ պիտի անեն նրանք, ովքեր բարեբախտաբար չկրեցին «խարանը» սփյուռքահայ լինելու և կոշիկցին Եղիշե Զարենց ու Պարույր Սևակ...: Եվ սփյուռքում նաև... Գառնիկ Աղդարյան:

Եվ բնավ զարմանալի չէ, որ Գառնիկ Աղդարյանի՝ Մոսկվայում լույս տեսնող բանաստեղծությունների ողեսերեն ժողովածուի (1963) նախաբան խոսքում ողես բանաստեղծ Իլյա Սելվինսկին, գրելով Գառնիկ Աղդարյանի մասին, ասել է հետևյալը. «Կան բանաստեղծներ, որոնց կյանքն ու ստեղծագործությունը նման է նշանակետին ուղղված նետի: Այդպիսին էր Դեմյան Բեդին, այդպիսին էին Մայակովսկին, Զարենցը, Արագոնը... իր մարդկային ու գրական ընդհանուր նկարագրով նրանց է հարում նաև Գառնիկ Աղդարյանը. նա իսկական բանաստեղծ-տրիբուն է»⁹:

Գառնիկ Աղդարյանի մահը համատարած սգի մատնեց հայրենիքից սկսյալ, գրեթե անխտիր, սփյուռքահայ բոլոր գաղթօջախները, և այս հատկապես նրա համար, որ նրա մահվամբ սփյուռքը կորցրեց մի անխոնջ մարտիկի, գաղափարական անշեղ ուղու վրա կանգնած մի տրիբունի, որը, հասուկենտ բացառություններից մեկը սփյուռքում, կարողացել էր համակրանքը վայելել նույնիսկ նրանց, ովքեր չէին բաժանում մասնավորապես նրա քաղաքական դիրքորոշումը: Զէին բաժանում, բայց հսկանաչնդեպս պնդատում էին նրա անկաշառ սերը գեպի հայրենին և անսակարկ նվիրվածությունը իր հավատամբին: Այստեղ բնորոշվում էր նաև մարդը, որ հանուն մաքսիմալիս գիտեր նաև հասկացության ուղիներ փնտրել իր հակառակորդների հետ, ջանալ համոզել, թեկուղ մտնել վեճի մեջ, որը այնուամենայնիվ, իրագործել հաջողվում էր ու հաջողվեց շատ քչերին: Դրա համար էլ իր մահը խոր արձագանք գտավ սփյուռքահայ մամուլի հակադիր էջերում, սգի մատնեց նաև արար մտավորականներին: Այս բոլորից առաջ ու վերջ հուզիչ էր հայրենական մամուլի անմիջական և հե-

⁹ Զոհի Բալայան, Կրկին «Պատենշին վրա», Սև և կարմիր, Երևան, «Սովետական գրող», 1979, էջ 3:

տաղա արձագանքը և ի մասնավորի վերաբերմունքը հայրենի պետականության: Գառնիկ Աղգարյանն այդ ամենը նվաճել էր իր կյանքով ու գործով և, ինչո՞ւ չէ, նաև որպես տաղանդավոր բանաստեղծ, իր ողջ ստեղծագործությամբ:

Կորստի անմիջական օրերին՝ «Անկոտրում, հավատի մարդը» խորագրի տակ, հայրենի գրականության նշանավոր դեմքերից մեկը՝ Սիլվա Կապուտիկյանը, ի միջի այլոց դրեց նաև հետևյալը. «Նորից մեր՝ առանց այն էլ տաղնապներով լեցուն կյանքի մեջ խուժեց մի նոր բոթ. մահացել է Գառնիկ Աղգարյանը:

Դժվար է պատկերացնել սփյուռքը և, մանավանդ, Բեյրութը, տարիներ շարունակ կյանքի և մահու մեջ տարուբերվող Բեյրութը, առանց Գառնիկ Աղգարյանի, առանց նրա աներեր, ժայռի նման իր ամրակուռ քարափներին կառչող, հույս ու դիմակայում ներշնչող գոյության, առանց նրա՝ մամուլում, հավաքույթներում, բնմերից ու ամբիոններից հնչող՝ մերթ սուր ու հատու, մերթ մեղմ ու հոգեպարար խոսքի: Անմոռաց Վահրամ Մավյանից հետո այս էլ երկրորդ ամենակսկծալի մահն է, որ սգում ենք մենք: Մեր ժողովրդի աշխարհացրիվ բեկորները ի մի բերող, դեռ երիտասարդական կամք ու կորուսվող գործող՝ սփյուռքի ամենազորավոր ուժերից մեկի այնքան անժամանակ դադարումն է, որ մորմոքում է մեղ»¹⁰:

Այո՞, նրա բացը Բեյրութում դժվար պիտի լիներ պատկերացնել, թվում էր, որ նրա կառուցած... պատնեշը ինչ-որ տեղ զրկվեց իր ամենազորավոր ուժերի մեկից, այն պատնեշը, որի անառիկ մնալով էր ամենաշատ մտահոգված ինք, և այս՝ շինաշենով իր կյանքը: Այդ մասին էր վկայաբան Զորի Բալայանը, կրկին, նրա կորստի անմիջական օրերին, վկայակոչելով իր դեռևս թարմ հուշերը.

«Իր մահից կես տարի առաջ նրա հետ շատ էինք հանդիպում, ճամփորդում Հայաստանում (ինչպես ասել ենք, եկել էր ՀԳՄ 9-րդ համագումարին—Գ. Ս.): Տեսնելով, որ Գառ-

¹⁰ Սիլվա Կապուտիկյան, Անկոտրում հավատի մարդը. «Հայրենիքի ձայն», Երևան, 10 դեկտեմբերի 1986, № 51 (1115), էջ 4:

նիկը հաճախակի է դեղերի դիմում, առաջարկեցի մի երկու շաբաթ էլ մնալ, ամրապնդել առողջությունը: Նա միայն ժպտաց իր գերող ժպիտով, ուղղեց արծաթին տվող խիտ մաղափունջը և ասաց. «Մի՞թե կարելի բան է ասանկ թեժ ատեն: Ինձ բարեկամներս կսպասեն: Հոն՝ մարտադաշտը...»¹¹:

Գառնիկ Աղդարյանը չէր կարող, չէր ուզում, հակառակ իր վաստառողջության, ասանց իրեն թողնել այն տեղը, լիբանանյան մառտադաշտը, չէր կարող, բայց կարող էր խնայել իր առողջությունը, սիրտը: Պարզվում է, որ այդ էլ շարեց. մահվանից մեկ օր առաջ, ինչպես վկայում էր հյւրայրը, «Ամբողջ օրը կորսվեցավ ծխախոտի ծուխերուն մեջ...» և աշխատեց «Աղգային մշակույթի» տոնական համարի վրա: Տագնապ հարուցող սիրտ և ծխախոտի անվերջ ծուխ... Այսպիսին էր նա. չէ՞ որ բանաստեղծ էր իսկապես: Եվ այդ մասին էին խոսում սփյուռքում լույս բնծայված մահախոսականները, նրա կյանքին ու գրականությանը հատկացված էջերը՝ ԱՄՆ-ից Ֆրանսիա, Ֆրանսիայից մինչև արաբական արևելք՝ ներսուելով քաղաքական տարբեր, նույնիսկ հակադիր դիրքերում կանգնած հայատառ մամուլը:

Բուլղարահայ ճանաչված օտարադիր հայուհին էր գրում խորունկ վշտով. «Այնժամ, Մայիսին (ՀԳՄ IX համագումար — Գ. Ս.) առաջին և վերջին անգամ բլլալով տեսա Գառնիկ Աղդարյանը՝ բանաստեղծը, հրապարակագիրը, բոցաշունչ լրագրողը... Սակայն վստահ եմ, որ շատոնց ծանոթ էինք իրարու, որովհետև ան միշտ այդ ջղուտ, սրտցավ, բարյացակամ, բոցավառ ու անընկճելի հայն էր, որ դարեր շարունակ իր թևերուն վրա կր կրեր իր անմահ հավատքի բեռը, հավատքը, թե կարժե կյանք մը նվիրագործել հանուն ժողովուրդի մը գոյության: Գուցե ասոր համար ես համոզված էի, թե Գառնիկը անմահ է...»¹²:

¹¹ Զորի Բալայան, Անավարտ երգը շուրթերին, էջ 5:

¹² Սևդա Սևան, Բեյրութի շի պատասխաններ, «Աղգային մշակույթ», Բեյրութ, 1 փետրվարի, 1987, թիվ 167, էջ 5:

վկայակոչելով իր հուշերը՝ Գրիգոր Շահինյանը հետևյալ ձևով էր բնորոշում բանաստեղծին և մարդուն.

«Հատկանշական է, որ Գառնիկը գրեց բարության և մարդկայնության մասին (Համաստեղի գրականության մասին Գառնիկ Աղդարյանի կարծիքը գրված է «Ահեկան»-ի համար—Գ. Ս.): Պարզ է, որ բարությունը բնորոշ մեկ հատկանիշն է Համաստեղի գրականության. նույնքան պարզ է, սակայն, որ սեփական բարությունը մղած էր Գառնիկը գրելու այս հատկանիշի մասին:

Գիտակից այս բարության կրնկերանար անհիշաչարությունը: Այս իրողության առաջին փաստը ունեցա դարձյալ Ահեկանին կապված մանրադեպով մը: Նոր լույս տեսած էր Գառնիկին «Ապրիմ—Մեռնիմը»: «Հինն ու նորը մեր իրականության մեջ» վերնագրված հոդվածով մը անդրադարձա անոր, ժամանակավրեպ գտա աշխարհայացքը, որ հոն կը հայտնվեր: Գոհ չմնաց հոդվածեն և իր դժգոհությունն ալ չբաժակեց: Բայց ոչ մեկ ձևով փոխեց իր վերաբերումը Ահեկանին կամ ինձի հանդեպ»¹³:

«Գառնիկին համար մեկ բան մնաց անփոփոխ,— ան շարունակեց մեզի սովորեցնել Հայաստանը:

Եթե կարելի ըլլար քանի մը բառերով բնորոշել իր կյանքը, պիտի ըսեի թե ան կը խտանա հավասար սիրուն մեջ հանդեպ դիրքն ու Մայր Հայրենիքին: Ամբողջական էր նվիրումը երկուքին հանդեպ»¹⁴:

Իսկ լիբանանահայ բանաստեղծ, արձակագիր, Ս. Գ. հնչակյան կուսակցության հավատավոր, հասարակական դործիչ Պեպո Սիմոնյանը գրում էր.

«Հայրենիքը կենդանի և շոշափելի իրականությամբ շրջող ներկայությունն է Գ. Աղդարյանի հայրենաշունչ բա-

¹³ Գրիգոր Շահինյան, Քաղցր հուշեր Գառնիկեն, «Ազգային մշակույթ», Բելրուս, 1 փետրվարի 1987, թիվ 167, էջ 4:

¹⁴ Նազաբեկ Թովալյան, Վերջին դիշերը անցուց դիրքերուն հետ, «Ազգային մշակույթ», 8 փետրվարի 1987, թիվ 168, էջ 5:

նաստեղծություններուն մեջ՝ ի հակադրություն սփյուռքահայ բանաստեղծության մեջ տիրական մտածողություն դարձած վերացական և մշուշապատ հայրենիքի մը պատկերին:

Ժողովուրդի ընկերային բարօրության համար պայքարի դաշտ իջած վանգվածներու ապրումներուն, հայրենադուրկ պանդուխտ հայությունը հայրենասիրական կողմնորոշումի առաջնորդող անկեղծ գեղեմներու ու անձնական հույզերեն ծնած քնարական պահերու վիպությունը ըլլալն բացի «Պատնէշին վրա»-ն՝ է՝ նաև հայտնությունը բանաստեղծի մը, որ կառաջադրեր բանաստեղծ-բաղաբացի հասկացողության իրազեկումը իր անձին մեջեն՝ հայկական սփյուռքի գրական կյանքին մեջ ևս...»¹⁵:

Բեյրութի Ռ. Ա. կուսակցության պաշտոնաթերթ «Զարթոնք» օրաթերթը, Գառնիկ Աղդարյանի մահվանն անդրադառնալով, հրապարակեց հետևյալ տողերը.

«Գառնիկ Աղդարյանի մահը ցնցեց մեր գրական ու մշտավորական շրջանակները մայր հայրենիքին մինչև հեռավոր ափերը սփյուռքի: Մինակության ու կորուստի ցավը ապրեցան գրեթե բոլորը, իրենց մեջ և իրենց կողքին բան մը պակսած զգացին շատ շատերը: Ու գրվեցան սրտառուչ տողեր հայրենի թև արտասահմանյան մեր մամուլին մեջ: Արժանիորեն: Որովհետեւ, իր գաղափարական պատկանելիութենէն անկախ՝ մարտիկ գրողն ու մտավորականն էր ան, և իր դիրքերն ու հողվածները կը մարտնչէին մեր ազգային լինելության համար, մեր պետականության հզորացումին համար, մեր առհավական իղձերուն իրականացման համար:

Եվ անոնք տակավին պիտի մարտնչին ընդերկար»¹⁶:

Իսկ Հ. Հ. դաշնակցության Բեյրութի պաշտոնաթերթ «Ազգակ»-ը գրեց.

¹⁵ Պեպո Սիմոնյան, Գրական դիմաստիկը Գառնիկ Աղդարյանի, «Ազգային մշակույթ», 8 մարտի 1987, թիվ 170, էջ 6:

¹⁶ «Զարթոնք» օրաթերթ, «Ազգային մշակույթ», 8 փետրվարի 1987, թիվ 168, էջ 5:

«Հայրենական նվաճումներուն արձագանքները հոգեփող ապրումները և լուսաշող ապագայի մը հաշվույն խմորվող հույսերը չէին կրնար անարձագանք մնալ հայ բանաստեղծին սրտին: Եվ երիտասարդի խանդով ու կիրքով մուսաները հարստացող Գառնիկ Աղդարյանը, առաջին իսկ օրեն, տեր կանգնեցավ Ե. Չարենցի Թե ուզում ես երգդ լսեն՝ ժամանակիդ շունչը դարձիւր» պատգամին»¹⁷: «Աղդակը», ի դեպ, հասուկ էջ էր հատկացրել Գառնիկ Աղդարյանի գրականությանը:

Եվ այսպես անթիվ-անհամար էին հոգւած, նամակ ու հեռագրերը, ինչպես ասացինք՝ հայրենիքից սկսած մինչև հեռավոր դադթօջախները:

Բայց առավել հուզիչը հայրենի գրող ու մտավորականների, սփյուռքահայ քաղաքական ու հասարակական գործիչների ու գրողների անկեղծ ու սրտառուչ խոսքերին ընկերակցող ձայնն էր արաբ գրողների ու գործիչների:

«Գառնիկ Աղդարյանը երևույթ մըն էր այն իմաստով, որ ան որպէս գրող և բանաստեղծ առօրյա ներկայություն մըն էր պայքարին մեջ»¹⁸:

Գնահատանքի, մեծարումի տողերը արաբ գրողներից միայն իր մահվան կապակցութեամբ չէր, որ հնչեցին: Գառնիկ Աղդարյանը նաև մի մշտական ներկայություն էր արաբական մամուլում դեռևս տարիներ ամբողջ: Դա էր պատճառը, որ լիբանանյան «Ալ-Թարիք» երկամսյա հանդեսը, իր 1985 թվականի համար 4-ում (սեպտեմբեր) ընդարձակ տեղ էր հատկացրել Գառնիկ Աղդարյանին՝ ծննդյան վաթսունամյակի առիթով: Բաժինը բացվում էր հանդեսի խմբագրապետ, ծանոթ գրող ու գրաքննադատ Մոհամետ Տաքրուպի ողջունի ջերմ խոսքով: Հրապարակվել էին ընդարձակ հատվածներ մեզ արդեն հայտնի ուսու անվանի բանաստեղծ Իլյա Սելվինսկու

¹⁷ «Աղդակ» օրաթերթ, «Ազգային մշակույթ», Բեյրութ, 15 փետրվարի 1987, թիվ 169, էջ 4:

¹⁸ Էլիաս Շաֆեր, Մշտագո ներկան Գառնիկ Աղդարյան, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 169, 15 փետրվարի 1987, էջ 4:

ակնարկից, նաև Գառնիկ Աղդարյանից երեք բանաստեղծություն և «Հավելվածը» պատմվածքը՝ «Սև և կարմիր» հատորից:

Ողջույնի խոսքում, որ թարգմանաբար հրատարակել էր «Ազգային մշակույթը» (թիվ 97, 29 սեպտեմբերի 1985), Մահամետ Տաքրուպը ասել էր նաև հետևյալը.

«Տևապես, ամեն անգամ, որ մեծ գեպը մը կը պատահի— հաղթանակ մը, կամ աղգանշանը հաղթանակի մը, կամ մեր քաղաքական ու ազգային կյանքին մեջ՝ ծիւ մը արձակույ սկզբնավորություն մը, ամեն անգամ որ ի հայտ կուգա երկվույթ մը՝ իր իսկ կազմավորումը ավետող, և կամ ամեն անգամ որ հերոս մը կը կանգնի ու կընթանա գեպի նահատակություն, զգեստելով հայրենիքի և ազատութեան թշնամիները, մենք գիտենք, վստահաբար և անհրաժեշտաբար, թե պիտի կարդանք բան մը Գառնիկ Աղդարյանեն, «Ալ-նիտա» օրաթերթի մշակութային էջին մեջ: Տևապես ժամադրութեան մեջ ենք իրեն հետ, և տևապես կը գտնենք զինք՝ ճշտված ժամադրութեան կամ երրեմն անկե առաջ, իր տառերուն ընդմեջեն, որոնք կը պարփակեն կրակ ու գուրգուրանք, և թաքուն բան մը՝ հանդարտ, խորունկ ու գեղեցիկ թախիծի, որ առավել կը գեղեցկացնեն տառերը և առավել կարծարծեն կրակը:

Բառեր հայրենիքին, մարդուն ու գեղեցիկ թախիծի մասին»:

Հայրենիքին, մարդուն ու կյանքում գեղեցիկ թախիծին էին նվիրված նրա կյանքի տարիները և դա էր առաջնայինը, որով նրա մահն ընդունվեց մեծ վշտով:

Մենք ծովածավալ արձագանքներից միայն նմուշներ տրվեցինք, ընտրելով տարբեր քաղաքական հոսանքների ներկայացուցիչների ու թերթերի հոգված ու կարծիքները, որոնցից անմասն չմնացին նաև կրոնական տարբեր հոսանքների ներկայացուցիչները: Եվ այս՝ սկսած Ամենայն Հայոց Հայրապետ Վաղգեն Ա-ից: Իսկ այդ բոլորի պագաթնակետն այն էր, որ Արմենյուրեսը ի լուր աշխարհի հաղորդեց, որ Գառնիկ Աղդարյանի հիշատակին, նրա անունով է կոչվել Երևանի թիվ

133 միջնակարգ դպրոցը, մի որոշում, որ 1987 թվականի մայիսի 30-ին պաշտոնական հանդիսությամբ դարձավ իրականություն:

Դա, այդ մեծ պատիվն ու հավերժացման վկայականը, հայրենիքի տուրքն էր Գառնիկ Աղդարյանին և նրա անունից սփյուռքում հանուն ազգապահպանման մարտնչող մտավորականությունը:

Իսկ մինչ այդ, բանաստեղծի կենդանության օրոք, հայրենիքը նույնպես բարձր էր գնահատել նրա ծառայությունները և Գառնիկ Աղդարյանին պարգևատրել էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով, արժանացրել նրան հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անվան մրցանակին:

Հայաստանում նրա մահվան մասին լույս ընծայված ընդարձակ մահախոսականը, որը ստորագրել էին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և Հայաստանի Գրողների միության վարչությունը, իր վերջընթեր առդերում առես խտացնում էր բանաստեղծի կյանքի մասին մեր վերելաբարձրածները:

«Աղդարյան մարդուն բնորոշում էր մի կարևոր հատկանիշ. նա ի ծնն մարտիկ էր, մեկը նրանցից, ում համար արդար գործի հաղթանակի համար մղվող պայքարը, սևիական ժողովրդի ճակատագրով ապրելը կազմում էր կյանքի ողջ իմաստը: Նրա համար գրիչը զենք էր, կյանքը՝ պայքար»¹⁹:

¹⁹ «Հայրենիքի ձայն», Երևան, 10 դեկտեմբերի 1986, № 57, էջ 4:

ՍՏԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԽՄԲԱԳԻՐԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ

Գառնիկ Ադդարյանի գրական ու հասարակական-քաղաքական կյանքում, մեծ լինելով նրա գրական-ստեղծագործական բերքի նպաստը, հատկապես՝ բանաստեղծության կալվածում, այնուամենայնիվ, նա իր գիտակցական կյանքի ողջ ընթացքում առավելապես աչքի ընկալված խմբագրական ու հրատարակագրական գործունեությամբ: Գործունեություն, որ ընդգրկեց մասնավորապես «Մեր նշանաբանն է՝ Հառաջ» շաբաթաթերթը (Իլև-էմամ), որի անփոփոխ գլխավոր խմբագիրն էր նա 1957—1963 թվականներին, և «Էջեր գրականության և արվեստի» պարբերագիրքը (1965—1972), որի վրա ավելացան նաև «Կանչ» (1971—1983) և «Ազգային մշակույթ» (1983—1986) շաբաթաթերթերում վարած պաշտոնական կամ «անպաշտոն» գլխավոր խմբագրի պարտականությունները: Ժամանակաշրջանի քաղաքական՝ պատճառներով հաճախ անուն փոխած նշված մամուլում, առաջնային դեր կատարելուց բացի, Գառնիկ Ադդարյանը որպես գլխավոր մասնակից, խմբագրական կազմի անդամ, անմասն չմնաց նաև «Մշակույթ» (1954—1955), «Գիրք գրականության և արվեստի» (1955—1959), «Հառաջ Գրական» պարբերականներից, որոնց, առանձին ժամանակաշրջաններում, խմբագրի պարտականությունը վստահվեցին Պետրոս Մինասյանին, Գասպար Տերտերյանին և Գեղամ Սևանին: Շաբաթաթերթ ու պարբերականներ, որտեղ իրենց գործուն մասնակցությունն ու աշխատակցությունն էին բերում լիբանանյան նշանավոր հայ

դեմքեր, ինչպիսիք էին՝ Հարություն Մադեյանը, Հովհաննես Աղբաշյանը (Խիկար), Արմեն Դարյանը, Գեղամ Սեանը, Գրիգոր Նրեցյանը, Պողոս Թութունջյանը, Գասպար Տերտերյանը, Պետրոս Մինասյանը, Սարգիս Վահագներ, Սահակ Թութճյանը, Թորոս Թորանյանը և շատ ուրիշ մտավորականներ։ Նշված անուններից Գեղամ Սեանը 1962 թվականին ներգաղթեց հայրենիք։ Մնացյալներից (ութսունական թվականներին) Պետրոս Մինասյանը արտագաղթեց Կանադա, Սարգիս Վահագներ՝ ԱՄՆ, իսկ Հովհաննես Աղբաշյանը մահացավ 1985 թվականին, Լիբանանում։ Ինչ էլ եղած լինեին վերիվայրումների տոն տվող պատճառները, նրանք, ովքեր հիշատակվեցին վերևում, համոզված հայրենասերներ էին և այդպիսին էլ մնացին։ Վերջնական վճիռը պատկանում է անաշու պատմությանը։ Այնուամենայնիվ, մի բան պարզ է ու հստակ, որ ժամանակահատվածում Գառնիկ Աղդարյանի գլխավորությամբ և անշահախնդիր մասնակցությամբ հանդես եկող տվյալ քաղաքական և գրական գործիչների կատարած աշխատանքը բարձր գնահատվեց ամենուրեք և առաջին հերթին հայրենիքում՝ Խորհրդային Հայաստանում։ Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունը, որ հատկանշվում էր մեր հիշատակած շաբաթաթերթերի ու պարբերականների գործունեությամբ, նույնիսկ թեմա դարձավ դիսերտացիոն աշխատանքների համար։ Սփյուռքահայությունը քաջ հայտնի հայրենի մտավորականներից մեկը՝ Կարլեն Դալլաքյանը, որը հետագայում վարեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի պարտականությունը, 1964 թվականին լույս ընծայեց իր աշխատանքներից մեկը՝ խորագրված հենց այսպես. «Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից» (Նրևան, «Հայաստան» հրատարակչություն), որտեղ ծանրության կենտրոն դարձավ «Ժողովուրդի ձայն» (1938—1947) և «Մեր նշանաբանն է՝ Հառաջ» (1957—1961) թերթերի գործունեությունը։ Հատկապես երկրորդինը, որտեղ առյուծի բաժին ունեւր նա՝ Գառնիկ Աղդարյանը։ Իսկ ի՞նչ հիմնահարցեր էր իր առջև դրել նշված շաբաթաթերթը,

որ իրավամբ երևույթ էր սփյուռքահայ կյանքում, կամ ինչի՞ էր միտում առհասարակ:

Ինչպես Կ. Դալլաքյանն է համադրում հիշյալ գրքի «Վերջաբանի փոխարեն» խոսքում, շաբաթաթերթը իր մշտական արժարժումների նյութ ուներ արաբական արևելքի խնդիրները՝ ղեկավարվելով դեմոկրատական սկզբունքների պաշտպանության համոզունքով. միջազգային քաղաքականություն հարեցրում հետամուտ էր խաղաղության պաշտպանությանը և պատերազմի հրձիգների արկածախնդրությունների մերկացմանը. իսկ սփյուռքահայ իրականության բնագավառում ձգտում էր դեմոկրատական ուժերի համախմբման, սփյուռքի և մայր Հայաստանի կապերի ընդլայնման, հայ և արաբ ժողովուրդների բարեկամության սերտացման¹:

Այո՛, խտացրած վիճակում սրանք էին Լիբանանի կոմկուսի հայկական բաժանմունքի օրգան՝ «Մեր նշանաբանն է՝ Հառաջ»² շաբաթաթերթի միտումները իր գոյության վեց տարիներին: Միտումներ, որոնք շարունակվեցին նաև հետագայում, տարբեր անվանումների տակ լույս ընծայված նրա, այսպես ասած, շարունակական (սլարբերական) մամուլում: Իր խմբագրական և այլ հոգվածներում Գառնիկ Ազգարյանը անշեղորեն իրականացնում էր խմբագրի բաղմարնույթ աշխատանքները, հանդես գալիս հոգվածներով, որոնք առավել հստակեցված, որպես շաբաթօրյա ղրույցներ, լույս ընծայ-

¹ Տե՛ս Կ. Դալլաքյան, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1964, էջ 227—229:

² «Մեր նշանաբանն է՝ Հառաջը»՝ լույս է տեսել կիրակի օրերին, ութ մեծադիր էջերով: 1958 թվականի ընթացքում, երբ Ամերիկյան ներխուժել էր Լիբանան, թերթը որոշ ամիսներին նյութական դժվարությունների պատճառով լույս ընծայվեց նույնպես մեծադիր չորս էջով: Ավելի բոն մեկ տարի «Մեր նշանաբանն է՝ Հառաջը» անվանադրությունը տպագրում էր ալ կարմիր գույնով, ալունհատե մշտապես՝ սև: Նրա էջերում նշված հայ մամուլորականներից բացի հանդես են եկել նաև արաբ նշանավոր քաղաքական-հասարակական գործիչներ, ինչպես՝ Խալեդ Բեքդաշը, Ֆարաժուլա Հըլուն, Նիկոլա Շաուին, Հասան Քրայթիմը, Փորժ Հաննան, Անտուան Տարերը, Ամին ալ Անուարը և ուրիշներ: Տե՛ս նույն աղբյուր, էջ 66:

վեցին «Կանչ» և «Ազգային մշակույթ» շաբաթաթերթերում ավելի քան մի տասնամյակ, մինչև իր մահը՝ հայ լրագրությանը պարզեցնելով անմոռանալի սյունակներ։ Եվ պիտի ասել՝ անասելի պայմաններում, առանց կայուն, խմբագրության համար տանելի պայմանների, առանց նվազագույն վարձատրության, հաճախ ուժերերի տարափի Դամոկլյան սրի նման կախված, բառացիորեն մահվան սպառնալիքի տակ։ Նկատի ունենալով մեր ուսումնասիրության ծավալային կարելիությունները և նկատի ունենալով, որ այս վերջին շաբաթաթերթերում առավել բնութագրական էր նրա հրապարակագրությունը, մենք հարմար գտանք կենտրոնանալ Գառնիկ Ադգարյանի «Կանչ» և «Ազգային մշակույթ» շաբաթաթերթերում լույս ընծայած շաբաթօրյա զրույցներին, որոնք միշտ որպես ստորագրություն ունեին «Գ. Ա.»՝ անվան և մականվան սկզբնատառերը։ Սկզբնատառեր, որոնց վիճակվել է առանձնանալ սփյուռքահայ լրագրության հերոսապատումում, որպես և՛ բնույթով, և՛ բովանդակությամբ եզակի ու անկրկնելի էջերի նշագրեր։

ՀԱՅՐՆՆԻՔ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Գառնիկ Ադգարյանի հրապարակախոսության և հրապարակագրության սամենարուոն շրջանը, անկասկած, իր կյանքի վերջին տարիներն էին և այս, հատկապես, հրապարակագրության կալվածում։ Մի կալված, որտեղ գրսևորվեցին Ադգարյան լրագրողի փայլուն արժանիքները։ Գրի առնչված և յուրաքանչյուր շաբաթ լույս ընծայված նրա հոդվածները ինքնըստինքյան ամփոփումն ու խտացումն էին տասնամյակներ ամբողջ անշեղորեն կիրառված իր իսկ սկզբունքների ու հավատամքի, որոնք, ինչ խոսք, իրենց գեղարվեստական գրսևորումն էին գտել նաև նրա գրականության մեջ։

Ինչպես մարդն ու իր դործը, այնպես էլ տարբեր գրական ժանրերում տարիներ ամբողջ լույս ընծայված նրա գրչի ար-

գասիքները միշտ ընթացյալն ուղիղ, գաղափարախոսական անշեղ ընթացքով: Այդ ուղիղ ու անսասան ընթացքի հիմքում առաջինը, որ բացահայտորեն լուսանելի էր դառնում, հավատքն էր իր դեռևս պատանեկան հասակից ընտրած ուղու և սերն ու նվիրումը հայրենիքի նկատմամբ: Հավատք՝ որ վարակիչ էր բաղմահազար ընթերցողների համար և համոզիչ նրանց համար, ովքեր ունկնդրում էին նրան: Հիսնական թվականներից սկսյալ՝ Գառնիկ Ադդարյանը հաճախ էր հանդես գալիս բեմերից և՛ Լիբանանում (Բեյրութ), և՛ նաև ոչ քիչ անգամներ հայրենիքում, իսկ, ինչպես ասվեց, վերջին տասնամյակում քաղաքական աննպաստ դեպքերը ստիպեցին նրան առավել թափ տալ հրապարակագրությունը:

Հարյուրավորների հասնող նրա շաբաթօրյա զրույցներում առանձնանում են մի քանիսը, որոնք, թվում է, կրկնակի բացահայտում են այն հիմնականը, որի կրողն ու տարածողն էր նա: Վերջին անգամ, 1986 թվականի մայիսին, հայրենիքից վերադարձից անմիջապես հետո «Ազգային մշակույթ» շաբաթաթերթի «շաբաթօրյա զրույցներում», 29 հունիսի 1986 թվականին, Գառնիկ Ադդարյանը պրեց «Հայաստանեն ի՞նչ բերիր...» հոդվածը: Ի դեպ, նրա հրապարակագրության փայլուն ձևաբերումներից մեկը՝ նշված գրությունը, ո՛չ պատահաբար ու ո՛չ հասցեայ հրապարակվեց նաև նույն շաբաթաթերթի 14 դեկտեմբերի 1986 թվականի համարում, երբ դեռևս նոր էր լրացել նրա մահվան երկրորդ շաբաթը: Դա իսկապես շատ էր բնորոշ ու բնորոշող: «Հայաստանեն ի՞նչ բերիր...» գրությունը հիմնված էր հայրենիքից վերադարձող բանաստեղծին, նրա տան հարևան «մանշուկի» ուղղած սովորական ու ընթացիկ այն հարցին, որի սպասվող պատասխանը ակնկալիքն էր... խաղալիքի՝ հայրենիքից բերված հավանական խաղալիքի նշումով: Բնական ու բանական այս հարցը, սակայն, որ երևի նաև ուներ իրական հիմք կամ կարող էր ունենալ, առիթ էր տվել բանաստեղծին ընդլայնել ու խորացնել սահմանները տրված անմեղ հարցի ու, թողնելով կարճ ժամանակ անց, բավարարումը երեխային, հենց թեկուպ

Բեյրութից գնված խաղալիքով, համենայն դեպս պատասխանել ալոց, ալսինքն՝ իր բազմահազար ընթերցողներին, թե, ի վերջո, ինքը... ի՞նչ բերեց Հայաստանից: Իհարկե, հարևան երեսօրի հաջար կարևորը խաղալիքն էր և եթե մոռացվել էր դա, ապա հեշտ էր նրան... «խաբեկը», կամ սխալն ուղղելը: Բայց հիմնականը մյուսն էր, տրվելիք այն հարցի պատասխանը, որին սպասում էին հայրենակարոտ զանգվածները: Զանգվածներ, որոնց դժվար թե խարել հաջողվեր, այն էլ ութսունական թվականներին, վերակառուցման նոր ժամանակներում, երբ ավելի քան ջրի երես էին ելել արդեն իսկ ոչ անհայտ շատ իրողություններ: Ծիշո է, կար ու մնում էր «մանչուկին» հարցման պատասխանը, բայց էականը երկրորդն էր..

«Փորձե՛ք գտնել պատասխանը,— գրում է Գ. Աղդարյանը,— մեկ բառով արտահայտել բերածներուդ մեջ ամենեն կարևորը, շատ բաներ բերիր անշուշտ, հոգիդ, մտածումդ լեցուն են անպատմելի բաներով, բայց ո՞ր մեկն է ամենեն էականը, զոր պիտի ուղեիր մեկ բառով փոխանցել սա մանչուկին (ակնկալվածը խաղալիքն է անկասկած. Գ. Ս.), սփյուռքահայ բոլոր երեսաներուն, բոլոր սփյուռքահայերուն (ընդգծումը մերն է. Գ. Ս.) ամենեն էականը՝ մեկ բառով:

Այս մեկը գտնե՛ շատ ճիգ շուղեր, բառերը կը խուժեն, բայց բառ մը կը բարձրանա բոլորեն վեր, կը խոյանա, կը պարտադրի ինքզինք, մեկ հատիկ բառը՝ ամենակալ, ամենազոր, գլխատառ—ՀԱՎԱՏՔ...»¹:

Այո՛, ՀԱՎԱՏՔ: Սա է եղել Գառնիկ Աղդարյանի բերածը սփյուռքահայությունը, և դա տասնամյակներ ամբողջ, իր դրականության և խմբագրական ու լրագրական գործունեության ողջ ընթացքում, և նաև այժմ, երբ իր հայրենիքից վերադարձավ վերջին անգամ: Այսինքն՝ առաջին օրից մինչև վերջին օրը... և եթե ներկա դեպքում մի անգամ ևս տեսնելուց հետո հայրենիքը, ապա տասնամյակներ ամբողջ առանց

¹ Գառնիկ Աղդարյան, Հայաստանին ի՞նչ բերիր, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 160, 14 դեկտեմբերի 1986:

տեսնելու, պարզապես մտքի և նաև... արյան թելադրանքով: Որովհետև, ինչպես ինքն էր գրում նշված հոդվածում.

«Ոչինչ, ոչինչ կը փոխարինե հողը, հայրենի հողը, ծառը միայն հողին հետ նույնացած արմատներով է ծառ, հողեն խլված՝ գերան է անավիշ, հողը պատվանդանն է, վեմը՝ մեր ներկային ու գալիքին, մեկնակետը՝ իր իսկ, հողին իսկ ընդարձակման, իր մարմինն տարանջատված մասերու վերամիավորումով: Միակ հավերժականը՝ հողը, հայրենին...»²:

Սրբազան նման ճշմարտության հայտնաբերումը, իհարկև, սեփականությունը չէր Գառնիկ Աղդարյանին: Դասիսուր կլինեիր սփյուռքահայ և՛ գրականության, և՛ լրագրության պատմության համար: Աղդարյանը հմայված էր Վազգեն Շուշանյանով, ինչպես հմայված էին նաև իր սերնդի և ոչ միայն իր սերնդի ներկայացուցիչները: Եվ Վազգեն Շուշանյանն էր, որ գրել էր դեռևս տասնամյակներ առաջ.

«Ոչինչ ավելի թանկագին է երկրի վրա, քան հայրենի հողը: Կանցնին բոլոր փառքերն ու բոլոր որոտընդոտ երգերը, երբ անոնք չեն բխիր հայրենի երկրի ընդերքներեն: Կանցնին բոլոր պերճանքներն ու բոլոր պալատները, երբ իրենց շուքը չեն ձգեր հայրենի ջրերուն վրա: Կանցնին մարդիկը իրենք, հեռագնաց հովերուն պես, կանցնին փոշիի ամպերու և թեթև եղանակներու պես, եթե իրենց մաղարմատներով չեն խրած երկրին բուսահողին մեջ»³:

Վ. Շուշանյանի հավատքով էր սնվել նաև Գառնիկ Աղդարյանը. դրանք սփյուռքահայ գրականության կազմավորող սերնդի շարունակվող գեներն էին հիսունականների սերնդի մեջ: Այն գեները, որոնք ընձյուղեցին նույնիսկ այնպիսի քաղաքականորեն փակ մի գաղթօջախում, ինչպիսին Ստամբուլն ու Թուրքահայ գրականությունն էր.

² Գառնիկ Աղդարյան, նույն տեղում:

³ Վազգեն Շուշանյան, Օրագիր, 16 փետրվարի 1940, «Հայրենիք» ամսաթերթ, մայիս-հունիս, 1943:

Մառ ըլլալու-
Ուրիշներէն ծառ սեպկելու

նկատվելու
համարվելու
հարգվելու

Աննշան բույս-ազագուն տունկ-անարժեք քույր չըլլալու
Նախապայմանը մեկ է-
Հող ունենալ ոտքին տակ
Հողը բռնել - հողին կառչիլ
Աւամառ նետել հողին մէջ
Աւամատանալ-խորանալ⁴:

Այդքանը միայն կարող էր ասել Զարեհ Խրախունին՝ տողա-
տակային խոր իմաստ հաղորդելով բանաստեղծութեանը: Բայց
Գառնիկ Աղդարյանը չի բանանում, ինչ խոսք, նշեց ոչ միայն
հասցեն, Խորհրդային Հայաստանը, որպէս հող ու հայրենի-
քի, այլ նաև վեմը՝ մեր ներկային ու գալիքին, մեկնակե-
տը՝ իր իսկ, հողին իսկ ընդարձակման, իր մարմինն տա-
րանջատված մասերու վերամիավորումով: Եվ այստեղից,
երկրորդ, նաև «հավատք, հողին վրա արարող մայր ժողո-
վուրդին նկատմամբ», և երրորդ՝ «հավատք՝ պայծառ մեր
ներկային նկատմամբ», դեռևս չորրորդ՝ «հավատք՝ հայրե-
նի պետութեան նկատմամբ» և, ի վերջո, հինգերորդ՝ «հա-
վատք՝ մեր ժողովրդի լինելիութեան, մեկ ժողովուրդ ըլլա-
լու մեծ ճշմարտութեան մասին»⁵:

Այո, Գառնիկ Աղդարյանը, սկսելով հարեանի մանչուկից,
ողջ սփյուռքահայութեանը բերեց հավատք ու ապրելու, տո-
կալու... «Հորիզոն»...

Այդ ամենակենսականի մեջ էր նրա հրապարակագրու-
թեան ալֆան ու օմեգան: Եվ այդտեղից է, որ նույնիսկ լրա-
գրային սովորական թվացող լուրը դառնում էր անսովոր և
հիմք ծառայում շարաթօրյա զրույցներին:

⁴ Զարեհ Խրախունի, Նախապայման, «Ամպ ու ավազ ամբերուս», Ստամ-
բուլ, 1982, էջ 52:

⁵ Գառնիկ Աղդարյան, Հայաստանն ի՞նչ բերիր, «Ազգային մշակութ»,
Բեյրութ, թիվ 160, 14 դեկտեմբերի 1986, էջ 8:

Կարճ լուրերի մեծ խորհուրդը բացելու, այն հարկ եղած ձևով ըմբռնելու և սփյուռքահայության փոխանցելու մեջ էր նաև Գառնիկ Աղդարյան հրապարակագրի կարևոր արժանիքներից մի ուրիշը: Արժանիք, որ այսօրվա մեջ առանում էր գալիքը, վաղվա օրը: Եվ դա սփյուռքահայության ամենակենսական ու հիմքային պայքարներից մեկի, զլխավորի՝ աղգապահականման համար բացառապես կարևոր գործոն էր: Թեև ինքը կարճ ու ամփոփ լուրերի միջից ավյուն ու կորով ներարկել գաղթահայությանը, սնել ապրելու, էականը՝ հայ մընալով ապրելու ու գոյատևելու համար: Գառնիկ Աղդարյանը հրազատես չէր, իհարկե, քաջ գիտակցում էր, թե ո՞ւր է դրնում սփյուռքը և կամա թե ակամա ինչ է վիճակված սփյուռքին: Բայց նաև հաստատ հավատքն ու համոզումն ուներ, որ սփյուռքը կա ու լինելու է, քանի կա հայրենին, որպես մայր ու ապավեն: Դրանից էլ մեկնած՝ նա անհաշտ պայքար էր մղում հատկապես սփյուռքահայության գոյապայքարում մեծ դեր վիճակված հայ մամուլի որոշ ներկայացուցիչների կամավոր կուրուքյան դեմ, որոնք գիտակցաբար շրջանցում էին հայրենիքում կատարված դրական երևույթները և քար լուծյան էին մատնում հայրենիքից ստացվող այն հաղորդումները, որոնք կարող էին նոր լիցք հաղորդել, հուսադրել իրենց հնթակա պանգվածներին:

Այստեղ հարկ է նշել, որ Գառնիկ Աղդարյանը, լինելով խմբագիր, լրագրող ու հրապարակախոս, հատկապես այն գործիչներից էր, որոնք սփյուռքահայ իրականության վերջին տասնամյակներում և ի մասնավորի Արաբական արևելքը ճարակած քաղաքական բարդ պայմանների մեջ, 1975 թվականից այս կողմ, ունեցան գիտակցությունը հայ պանգվածների համախմբման ու գործեցին հայ տարբեր աղափարական հոսանքների մեջ առկա տարաձայնությունները կարելի չափով հարթելու հաշվին: Եվ այս՝ մեկնելով սփյուռքահայության գերագույն շահից, նրա, ինչպես ասացինք, հայապահականման մտահոգություններից: Դրա արդյունքն էր, իրբանանում հատկապես, հայ համայնքի դրական շեղոթության

դիրքորոշումը պատերազմի ողջ ընթացքում, որը կանխեց հայությանը պատճառովիլիբ մեծ կորուստները: Մի բան, որ բարձր զնահատեցին նույնիսկ հակադիր, այլազգի բոլոր կողմերը՝ քիչ բացառություններով: Բայց հակառակ նման ողջախոհության, Գառնիկ Աղդարյանը չէր կարողանում հանդուրժել հայ մամուլի այն ներկայացուցիչների գործելակերպը, ովքեր աշխատում էին հեռու պահել իրենց հետևորդներին կենսականորեն անհրաժեշտ սնուցող ակերից: Եվ առաջինը դրանցից հայրենիքից հասնող լուրերն էին, նրա հաջողությունները, ձեռքբերումները, նույնիսկ նրա առօրյա ուրախությունները: Ոչապրավ էր «Ազգային մշակույթի» շարաթօրյա զրույցներից 1984 թվականին լույս ընծայված «Միականինները» շարքը, որը հասցեագրված էր լիբանանահայ մամուլի հայտնի օրգաններից մեկին՝ «Ազգակ»-ին: Գառնիկ Աղդարյանը խորը ափսոսանքով էր նշում այս վերջինի դիրքորոշումը, որ եղել էր տասնամյակներ ամբողջ Հայաստանից հասնող լուրերի նկատմամբ: Այն լուրերի, որոնք Արմենյուրենը, հատկապես վերջին տարիներին, հասցեագրում էր առանց բացառության բոլորին: Այդ լուրերը, եթե զարգարում էին սփյուռքահայ մամուլի շատ էջեր, ապա այս վերջինի մոտ մնում էին անարձագանք:

Միականությունը, կամ երևի՝ լրիվ կուրությունը առհասարակ և հատկապես հոգվածին առիթ տվող Հոկտեմբերյան երևույթ— իրողությունների մասին, որոնք տեղի ունեցան հիշյալ տարվա ընթացքում, աննախընթաց էրեբունի—Երևան տոնահանդեսներով, Երևանի մարզահամերգային համալիրի հանդիսավոր բացմամբ, Վրաստանի մայրաքաղաքում հայկական թատրոնի 125-ամյակին նվիրված մեծ հանդիսություն, այդ հանդիսության ընթացքում «Պատվո նշան» շքանշանի հանձնման արարողություն, որի ընթացքում խոսեց այն ժամանակվա Վրաստանի Կենտկոմի առաջին քարտուղար է. Ա. Շևարդնաձեն և վկայեց հետևյալը, թե «հավատարիմ հղբայրությունը վրաց և հայ մարտիկներին համատեղ ահեղ պայքարի է դուրս բերել ընդդեմ օտարերկրյա զավթիչ-

ների: Մարտնչելով միևնույն շարքում, ընդհանուր թշնամուդեմ, նրանք պաշտպանում էին իրենց ազգային անկախությունը, իրենց հողերի ամբողջականությունը: Իսկ պաշտպանելով միմյանց, մեր ժողովուրդներից յուրաքանչյուրը, ըստ էության, պաշտպանում էր իրեն»⁶:

Եվ վերջապես, Գլաձորի համալսարանի 700-ամյակին նվիրված տոնակատարությունները, Երևանի հանդիսավոր նիստը, Եղեղնաձորի համաժողովրդական հանդիսությունները, Գիտությունների ակադեմիայի, Մաշտոցի անվան Մատենադարանի և Երևանի պետական համալսարանի միացյալ գիտական նստաշրջանը և դեռևս հոբելյանական հանդիսավոր նիստի ընթացքում ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանի այն խոսքերը, թե «Գլաձորի օրինակը աներկբա վկայությունն է այն բանի, թե ինչի է ընդունակ մի ժողովուրդ, որը ձգտել է իր հոգևոր պանծերը պահպանել, մեծ բանաստեղծ Պարույր Սևակի խոսքերով ասած՝ թրի դեմ գրիչ պարզելով, բռնության դեմ՝ գոյատևման կամք»:

Այո, այս բոլորը լուսթյան էին մատնվել հայ կոշվող մամուլի ներկայացուցիչներից մեկի կողմից, որը չէր կարող անտարբեր թողնել հայրենասեր հրապարակագիրն: Եվ մանավանդ այն դեպքում, երբ գիտեր, թե այդ բոլորը սփյուռքահայ զանգվածների համար ինչքա՞ն և կենսականորեն անհրաժեշտ էր իմանալ: Իմանալ, հանուն գոյատևման դաժան պայքարի:

Գառնիկ Աղզարյան հրապարակագիրը գիտեր սեղմ ու կարճ տողերի ու հոդվածների մեջ անառարկելիորեն պատին սեղմել ախոջանին, իսկ իր կյանքի վերջին տարիներին ոչ միայն գրել ու քաշվել մի կողմ, այլ նաև ոտնակոխելով արհեստական, դիտումնավոր պատենշները, անձամբ էլ գնալ ու գրույց ու վեճի բռնվել հակառակորդի հետ: Այս բոլորի արդյունքն այն էր, որ նրան հակադիր ճակատի գործիչները, եթե

⁶ Գառնիկ Աղզարյան, Միականիններ - Ա. «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 51, 4 նոյեմբերի 1984:

չէին էլ սիրում, այնուհանդերձ թեկուղ ներքուստ... հարգում էին:

Գառնիկ Աղդարյանը, ինչպես ասվել է, բանաստեղծ էր, արձակագիր, հրապարակախոս, բայց այսօր դժվար է նախապատվությունը տալ գրանցից սրեւ մեկին, հատկապես, եթե մի կողմ թողնենք երկրորդին, ապա երևի համաքայլ էին ընթանում բանաստեղծն ու հրապարակագիրը: Նա բանաստեղծ էր նաև իր հրապարակագրության մեջ, իսկ իր բանաստեղծությունը սփյուռքահայ բանաստեղծության մեջ նոր, ինքնուրույն ոճ էր ձևոք բերել՝ հարուստ հրապարակագրական տարրերով, և այս բոլորը հանուն պարզ ու առավել հասկանալի դառնալու, մի բան, որ հեռու էր պարզունակությունից և միտում էր խոսել բոլորին, հասկացվել բոլորից, ազդել զանգվածների վրա: Որովհետև Գառնիկ Աղդարյանը հավատացած էր, որ զաղթաշխարհի մեջ հիմնականը, էականը ազգային մշակույթի քարոզչությունն է և սրբազան պարտականություն է վիճակված՝ տվյալ մշակույթի դորձին: Ինքն այդ սրբազան խենթերից մեկն էր: Բացառապես շահեկան «Շաբաթօրյա զրույցներից» մեկն է «Աղգային մշակույթ» հոդվածը, որտեղ ինքն իսկ մեկնաբանում էր շաբաթաթերթի անվան էությունն ու նպատակը:

Եկարելիի կամ պատահականության արդյունք է անունը այս թերթին, որ կշարունակե ու կընթանա «Կանչ»-ի 13-ամյա ճանապարհով:

Այնուհանդերձ, ինքնին խորհրդանշական է այս անունը— Աղգային մշակույթ...:

Արդարև, եթե բոլոր ժողովուրդներուն համար ազգային մշակույթը հարստություն է, ավանդ է ու հողին հետ, հողին չափ, խարիսխ է ազգի գոյության ու գոյատևման, մեզի, աշխարհացրիվ սփյուռքահայերու համար, հաց է, ջուր է և օդ, միակ երաշխիքն է հայապահպանման մեր ճիգերու արդյունավորման, պատվա՛րն ու ամբարտա՛կը՝ ձուլման ու ալլա-սերման ալիքներուն դեմ մեզ համեմատաբար պաշտպանող,

միակ զրա՛հը՝ ազգային մեր ինքնությունն ու ինքնություն-
թյունը բազմաթիվ ու բազմապիսի վտանգներուն դեմ պահ-
պանող, հա՛ց է, ջո՛ւր է և սե՛ր...:

Այո, աշխարհացրիվ հայություն ենք, հողեն հեռու և հո-
ղին կարոտով տոշորող ու մեր միա՛կ հուշար, միա՛կ պատ-
վարը, միա՛կ զրահը ազգային մշակույթն է՝ անցյալի հա-
րուստ ու անկորնչելի իր ժառանգով և այնտեղ, Մայր Հայրե-
նիքի մեջ արձանագրած նորանոր ու զարմանահրա՛շ իր նը-
վաճումներով:

Բայց բարեբաստիկ կարելի մըն է կամ ողջունելի պա-
տահականություն մը, որովհետեւ այստեղ, կիբանանի մեջ և
այնտեղ, ամբողջ Սփյուռքի տարածքին, կողմնացույցի պես
կմատնանշե գոյության, գոյատեւման, փրկության ճանապար-
հը՝

Ազգային մշակույթ...»⁷:

Գառնիկ Աղդարյանն ինքն ևս կողմնացույց էր կիբանա-
նում և սփյուռքի տարածքին՝ հանուն գոյության ու գոյատեւ-
ման:

Այդ գոյության ու գոյատեւման պայքարին էր հիմնակա-
նում ուղղված իր բանաստեղծության ու հրապարակախոսու-
թյան առյուծի բաժինը: Առաջինի քննարկումը թողնելով հա-
մապատասխան բաժնում, երկրորդին անդրադառնանք «Չար-
տասանված ճառ» և «Ամենօրյա Սարգարապատ» հոդվածնե-
րի տեսանկյունից: Հոդվածներ, որտեղ նույնպես միախառնը-
վում էին, զրեթե նույնանում՝ բանաստեղծն ու հրապարա-
կագիրը:

Գառնիկ Աղդարյանը իր հրապարակախոսական ելույթ-
ներում և հրապարակագրութուններում, նաև բանաստեղծու-
թյուններում ու պոեմում՝ «Մատչան ցավի և հատուցման»,

⁷ Գառնիկ Աղդարյան, Ազգային մշակույթ, «Ազգային մշակույթ»,
Բեյրութ, թիվ 1, 20 նոյեմբերի 1983, էջ 8:

հաճախ է անդրադարձել տղգապահպանման խնդրին՝ վկայակոչելով մեր պատմության ուղենշային թվականներն ու եղելությունները և նրանց շարքում առաջինը՝ Ավարայրի ճակատամարտը, Սարդարապատը և, ի վերջո, Մուսա լեռան հերոսամարտը։ Այս բոլորի մեջ իրավացիորեն ինչ-որ նմանություն եղբեր էր գտնում սփյուռքի տարածքում տարվող գոյության պայքարի միջև։

Կարգավորվ այս մասին նրա գրած չափածո տողերը և հոգվածները, թվում է, թե նրանք ինչ-որ տեղ տողացի փոխադրումներ են մեկից մյուսը, նայած թե ինչպես են հանդես բերվել... որպես ճա՞ռ, թե շաբաթօրյա զրույցներ, հոգվածներ, թե եղեռնի հիսնամյակի առիթով ստեղծված պոեմ կամ այլ առիթներով լույս աշխարհ եկած ստեղծագործական ստեղծվածներ։ Մի խոսքով՝ բոլորի մեջ էլ առկա է եղել բանաստեղծը՝ միաձուլված հրապարակագրին, որը ոչ թե նվազեցրել է չափածո խոսքի ուժը, այլ, ընդհակառակը, շիկացրել է այն։

Ահա Սարդարապատի ճակատամարտի 62-րդ տարեդարձի առիթով հրապարակված նրա «Ամենօրյա Սարդարապատ» հոգվածը, որը, որպես հույժ այժմեական, վերահրատարակվել է նաև նույն տարեթվի 69-րդ տարեդարձի օրերին։ Այժմեականությունը պահպանվել է ոչ թե նշված ճակատամարտի հույժ անկյունադարձային ու ուղենշային հանգամանքի համար, այլ, որ առավել հիմնականն է ու կարևորը, դրանից քաղված ու ի մասնավորի քաղվելիք դասերի հաշվին։ Եվ դրա մեջ է հրապարակագրի ուժն ու հմայքը։ Նրա խոսքերի ուտանելիությունը, որը իրավամբ կոդմնացույցի, հայ մամուլի աշխատողի համար բացառիկ պատասխանատու դեր ու արժեք է վերապահել նրան։

«Եղավ Սարդարապատը, որովհետև կար Ավարայր...:

Ու մեկ է դասը, դասը Ավարայրին ու դասը

Սարդարապատին...:

Դա՛սը — կուսակցական — գաղափարական — դասակարգային պայքարները բնական երևույթներ են, գիտականորեն բացատրելի երևույթներ, մեր ժողովուրդը բացառություն չէ

ու բացառություն չի կրնար ըլլալ այդ մարդն ներս, բայց երբ կա ԱՐՏԱՔԻՆ վտանգը (սպիտակ ջարդը, ձուլումը. Գ. Ս.), որ կրնա տանիլ ամեն ինչ, և՛ ժողովուրդ, և՛ գաղափար, և՛ կուսակցություն, հրամայականը մեկտեղումն է ու միասնականությունը, հրամայականը փրկությունն է հիմքին ու խարխսին — ժողովուրդին ու հողին, առանց որոնց իմաստեղուրկ են արդեն ամեն պայքար ու ամեն կարգախոս, առանց որոնց կռիվը կզագրի արդեն՝ կռվողներու շփոթության իսկ պատճառով»⁸:

Ասված է բանաստեղծության պես՝ ներքին հուր ու այրումով և խոր հավատքով, և ինչ որ ասված է, եթե պարզ ու մեկին ճշմարտություն է, այնուամենայնիվ, սփյուռքում, նոր խոսք է ու դաժան պայքարների ու տրված անթիվ ու անհամար զոհերի դնով ձեռք բերված փորձառություն:

«Կռիվը մեր պիտի գտնե օր մը վախճան՝
Կռվողներու շփոթության հետևանքով»⁹:

Իսկ այս սողերը՝ չափածո շարադրանքով, արդեն պոեմից են, որոնք ինքնաբեր մղումով տարիներ անց ենթագիտակցության ծալքերից ներս են մղվել հողվածի մեջ, հողվածը դարձրել «դաժան» բանաստեղծություն իր ներքին չափ ու կշռությամբ, իր ներքին բանաստեղծականությամբ:

«Դա՛սը — ԱՐՏԱՔԻՆ վտանգին դիմաց կուսակցական ամեն նեղմիտ կամ ցուցամոլ արտահայտություն, հատվածական պառակտումի ամեն հրահրում, միասնականությունը խափանող ամեն դիրքավորում համազոր է լավագույն պարագային խելակորույս ու աղետաբեր խոստորումի, և հոռեզույն պարագային՝ կամա-ակամա, գիտակից-անգիտակից դավաճանության:

Դասը — հավա՛տքը, անխա՛խտ հավատքը թե մատները

⁸ Կառնիկ Աղդարյան, Ամենօրյա Սարգարապատ, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 181, 24 մայիսի 1987, էջ 4:

⁹ Կառնիկ Աղդարյան, Մատյան ցավի ու հատուցման, Բեյրութ, 1965, էջ 29:

միանալով է, որ կկազմեն բոունցք, բոունցք բոունցք չէ՝ երբ պակսի ճկույթն անգամ, և բոունցքն է միայն, ժողովուրդի մը հավաքական բոունցքն է միայն, որ կդառնա անանցանելի տարիսպ՝ ԱՐՏԱՔԻՆ վտանգին դեմ:

Սարգարապատը...

Եվ շարունակվող մեր Սարգարապատը հիմա՝ ամբողջ Սփյուռքի տարածքին...»¹⁰:

Եվ վերջապես Մուսա լե՛ռը՝ իրրե դյուցազնապատում, խորհրդանիշ, ոգի... հանուն ազգապահպանմանը Սփյուռքում.

«...Բայց Մուսա լե՛ռն է, որ դարձավ խորհրդանիշը Հայկական դիմադրության: Ո՛ւր է գաղտնիքը — գուցե անոր համար՝ որ կար, ինքը, լե՛ռը որպես լեռնացումը հայոց աննվաճ արիության, գուցե անոր համար՝ որ գտնվեցավ Ֆրանց Վերֆել մը, որ սքանչելի իր վեպով աշխարհով մեկ տարածեց համբավը Մուսա լեռան և դարձավ արժանի՝ մեր հավերժական երախտիքին: Համենայն դեպս, ինչ ալ ըլլա պատճառը, փա՛ստ է թե Մուսա լեռը խորհրդանիշ մըն է այսօր, վտանգին դիմաց՝ հայոց ամրակուռ միասնականության խորհրդանիշը, Ավարայրը Սարգարապատին կապող «Ոսկի կամուրջ» մը յուրօրինակ, եղեռնի արյան ծովուն ընդմեջեն դեպի վեր խոյացող հրաշակերտ կոթող մը, անփոխարինելի ու անկապտելի ավանդ մը, որ միայն ձերը չէ, միայն մոտավորեցիներինը չէ, հայ ժողովրդինն է ու հայոց պատմությանը հավերժորեն...

Ու Մուսա լեռան ոգին՝ Սփյուռքի մեջ ևս — հակառակ բոլոր խոչընդոտներուն ու վերահաս վտանգներուն, հակառակ նահանջի ու հուսալքման բոլոր երևույթներուն, Սփյուռքը կրթիավարե միշտ հոսանքին դեմ, կիյնա, կվիրավորվի, բայց կկանգնի վերստին, ձեռով մը Մուսա լեռան հերոսամարտ մըն է, որ կմղե Սփյուռքը՝ իր գոյության, գոյատևման ու պահանջատիրական պայքարին ի խնդիր, այն տարբերությամբ, որ այս անգամ պատահական փրկարար նավու մը չէ, որ կըս-

¹⁰ Կստենիկ Աղդարյան, Ամենօրյա Սարգարապատ էջ 7:

սլասն, այլ իր թիկունքին ունի վերածնած ու հզոր Մայր Հայ-
րենիքը, իր թիկունքին ունի ձե՛ղ, հայրենի փողովո՛ւրդ ու
հայրենի սեփուխո՛ւն...»¹²:

Հողվածը գրվել է որպես «Չարտասանված ճառ», որը
սկսաք է ասվել Մուսա լեռան հերոսամարտի 70-ամյակի տո-
նակատարությանը՝ հայրենիքում: Կամքից անկախ սլաճառ-
ների արգելք են հանդիսացել բնդառաջել հրավերին: Հողվածը
լույս է բնծայվել տոնակատարության նշված օրը, Բեյրութ-
թում: Այստեղ ևս ենթադրատակցական ներքին շերտերից բա-
նաստեղծն է խոսել, գրեթե մի քսանամյակ առաջ գրած իր
սլոնմից գրեթե տողացի փոխադրումներ կատարելով...

«Սվյո՛տնն ամբողջ՝ Մուսա լեռ է հիմա, տղա՛ս,
Մուսա լե՛ռ մը դյուցազնական,
Ու ես, ու դուն՝

Քեկորները մեծ եղևունին

Կանգնած ենք միշտ լեռան վրա մեր գոյության:
Կանգնած ենք մենք՝ հիսուն տարվան,
Հիսուն վե՛րի ապստոնե՛րո՛ւն վրա դաժան,

Ու կը կովինե՛ք:

Կիյնա մե՛կը հիմա այնտեղ,
Կը մե՛նա մե՛կն հիմա անբաղ,
Բայց կը կովի՛նք մենք շարունակ՝
Մուսա լեռա՛ն վրա անձայր:

Սո՛վ է հանախ, ու երաշտի
Մարախնե՛ր կան բազմահազար,
Մո՛ւր է հանախ, ու խավարի
Չղչիկներ կան մահագութկան,

Դասալճման սողոսկումներ կան տակավին,
Եվ վատության քափանցումներ դեռ դավադիր,
Բայց կը կովինե՛ք մենք շարունակ՝
Մուսա լեռան վրա անձայր:

¹¹ Գառնիկ Աղդարյան, *Չարտասանված ճառ*, «Ազգային մշակույթ»,
Բեյրութ, թիվ 96, 22 սեպտեմբերի 1985, էջ 8:

Մո՛վն է ետին,
Բայց այս անգամ
Ոչ քե ծովը անորոշին,
Ուրկե կրճան գալ նավերը ողորմության,
Կրճան չզգալ գուցե քնով,
Այլ հաւազաւո՛

Մովն հայրենի»¹²:

Սրանք մտքերի կրկնություններ չեն, թեպետ բառացիորեն նույն մտքերն են արտահայտում: Սրանք բանաստեղծի ու հրապարակադրի ենթագիտակցական ոլորտներից մինչև վերջ, անվերջ վեր բարձրացող առօրյա ապրում ու կիրք դարձած այն ապրում ու հուզումներն են, որոնք մերթ հանգավոր ու՝ մերթ սովորական տողերի ջրվիժումով կլանել են ողջ գոյությունը Գառնիկ Աղգարյան մարդու, գործչի և տասնամյակներ ամբողջ այրել ու մրրկել են նրա հոգին, որպես ազգապահպանման մարտիկներից մեկի՝ նրան պահելով միշտ մարտնչող բանաստեղծության ու հրապարակագրության պատենշների վրա, այսպիսով հավատք ներշնչելով խոսքի ու գործի ամենաառաջնահերթ միասնության հարցում:

¹² Գառնիկ Աղգարյան, Մատյան ցավի և հատուցման, էջ 54—55:

ԱՐՏԱԳԱՂԹ... ՁՈՒԼՈՒՄ

Գառնիկ Ադդարյանը՝ որպես բանաստեղծ և հրապարակագիր, անմասն ու անտարբեր չէր կարող մնալ, ութսունական թվականներին հատկապես, հայ ժողովրդի պատմությանը մթազնող այն տիտուր ու անհեռանկարային փաստերից, ինչպիսիք արաբական արևելքից ու իրանյանից սկսվող ու դրնալով մեծ ծավալ ստացող արտագաղթն էր դեպի Եվրոպա, հեռավոր ամերիկյան ափեր ու Ավստրալիա: Արտագաղթը դարձել էր ազգային մեծ հոգս ու ցավ, և այդ հոգս ու ցավերին ինքզինք նվիրաբերած որևէ մտավորական չէր կարող չեզոք դիրքերում մնալ, երբ վտանգված էր տեսնում հենց իր, հայ ժողովրդի մի կարևոր սոսկոսի վաղվա օրը: Գառնիկ Ադդարյանը հենց առաջին տարիներից էլ սկսեց գրել այդ մասին, գրել ոչ միայն հոգվածներ, այլև բանաստեղծություններ, որոնք այս անգամ արդեն հասցեագրված էին արտագաղթերից ամենագաժանին... հայրենի հողից ծայր առածին: Բանաստեղծն ու հրապարակագիրը, իհարկե, ուզում էր նախ և առաջ հասկանալ այդ բոլորի պատճառ հանդիսացած գործոնները, և եթե ինչ-որ տեղ արարական արևելքից ու, ինչպես ասացինք, ի մասնավորի իրանյանից հեռացողներին տոն տվող պատճառները դատապարտելի լինելով հանդերձ հասկանալի էին դառնում, ինչ-որ տեղ նաև մղում նրան համոզելու, պահանջելու, խնդրելու նման, որ չհեռանան, ապա հայրենիքը լքողների հասցեին նրա գրիչը, ներքուստ արդարացման գործոններ որոնելով հանդերձ, անողոք էր դառնում և նաև դաժան, երբ նման մարդը մանավանդ դուրս էր գալիս նրա երբեմնի ծանոթն ու «Անհավատալին»: Նման այրող

շաբաթօրյա զրույցներ էին «Կրկնակի կրակ», «Ի՞նչ ըսել», «Նամակ ամերիկահայ բաւեկամիս», «Ինչի՞դ է պետք էդ Ալստրալիան, ջա՛նըս...», «Ճիշդ» և այլ բաղմաթիւ հոգ-վածներ ու առանձին բանաստեղծություններ: Եվ այս վերջին-ների մեջ հատկապէս «Ապրիմ-մեռնիմ» ժողովածուի առա-ջին իսկ բանաստեղծությունը՝ «Արտագաղթը»:

Գառնիկ Աղդարյանը հասկանում էր, որ «ամեն անհատ կամ ընտանիք ինք կը տնօրինեն իր ճակատագիրը և ոչ ոք կընա պատվարներ դնել ուրիշին առջև ու ոչ ոք իրավունքը ունի մեկնումներու, թեկուզ կորստարեք մեկնումներու ճա-նապարհը փակելու, երբ կացութիւնը, ինք տարիներն է վեր շարունակվող այս կացութիւնը (կիրանանում 1975 թվա-կանից սկսած քաղաքացիական պատերազմը, ապա Իսրա-յելի ներխուժումը. Գ. Ս.) հասած է հոն՝ ուր հասած է, և ա-պահովութեան վիճակը այս է ու ընկերային-տնտեսականը՝ այն, ի՞նչ ընել, լուծեցան մեջ տագնապիլ գուցե, գուցե պո-ռալ իր ցավը և ըսել, հաստատել թե դուն այստեղ ես, և ինչ ալ ըլլա, ինչ ալ պատահի՝ պիտի մնաս այստեղ, բայց անկե անդին՝ ի՞նչ ըսել...»¹:

Լայնախոհ ու արի նման կեցվածքը կեղծ ու շինծու տո-նայնութիւն չունեն, իհարկե, և այստեղից էր սկսվում նրա խոսքերի հետագա համողչականութիւնը, որ հիմնված էր պարզապէս այն հեռատեսութեան վրա, որ նոր կայ-քերի վաղվա օրն էր և այն, որ թողնվում էր ետևում, արդեն երկրորդ հայրենիք, ավելի ճիշտ՝ երկրորդ Հա-յաստան դարձած կիբանանը: Եվ ամենակարևորը՝ հոգվա-ծագրի անաչառ կեցվածքն էր նոր հորիւզոններում արդեն իսկ հաստատված գնացածների հասցենին, նրանցից շատերի, նույնիսկ նոր գործունեութեան նկատմամբ գնահատանքի խոս-քերով, որոնք նույնպէս կեղծ ու շինծու չէին: Անկեղծութեան նման մոտեցումը, սփյուռքահայ հրապարակագրութեան

¹ Գառնիկ Աղդարյան. Ի՞նչ ըսել..., «Աղգային մշակույթ», Բեյրութ, Թիվ 14, 26 փետրվարի 1984, էջ 8:

խնդրո առարկա թեմայում, քչերին էր տրված: Այսինքն՝ շարության, քինոտության բացակայությունը, պարզապես անաշու դատումի փաստը Գառնիկ Աղղարյանի խոսքը դարձնում էին վարակիչ ու, էականը՝ համոզիչ առաջին հերթին:

«Շարժանկարի մը պես՝ հիշողությանս պատառին վրա հիմա կը տողանցեն ծանոթ, մտերիմ դեմքեր, որոնք գացին, այնտեղ են հիմա, իոս Անջելեսի մեջ ու այլուր, սփանչելի տրդաֆ, որոնֆ այնտեղ ալ սփանչելի գործ կը կատարեն այժմ (ընդգծումը մերն է. Գ. Ս.), բայց հետո՞, շարժանկարը կանդ կառնեն, հետո՞ — սերունդ մը, երկու, երեք, հարթող զլանը ժամանակին, համայնակուլ ալիքներ՝ որոնք վաղը կրնան տանիլ, անխուսափելիորեն պիտի տանին այսօր այնտեղ իրագործվող սքանչելին անդամ, այս պարագային ևս՝ ի՞նչ ըսել և ի՞նչ ընել: իոս Անջելեսը, Մոնրեալը կամ Սիտնեյը Բեյրութ չեն, ճիշտ է, Բեյրութը նույնիսկ, ինչպես Հալեպը կամ Թեհրանը, չէ երաշխավորված հավերժության համար, բայց այստեղ տարբեր են առարկայական պայմանները, այստեղ, ինչ ալ ըլլան ազդեցությունները, համախումբ ենք ու կենտրոնացած, այստեղ շկան ալիքները համայնակուլ... Այլ այստեղ մոտիկ ենք բռնադրավյալ մեր հողերուն և մեր Մայր Հայրենիքին...»²:

Սեղմ տողերի մեջ ասված է ամեն ինչ. կիրանանում ձուլման վտանգը դամոկլյան սուր չէ համենայն դեպս, և, ի վերջո, այստեղ՝ կիրանանում, մոտ ենք և՛ «բռնադրավյալ մեր հողերուն», և՛ մեր «Մայր Հայրենիքին»: իոս Անջելեսում և այլուր շկան և եթե այսօր չէ, վաղը չեն լինելու և՛ բռնադրավյալ մեր հողերի, և՛ նաև մեր Մայր հայրենիքի նկատմամբ սնուցված... կարոտը: Դա է, որ կորցնելու ենք, դրա համար էլ բոլոր մեկնումները տխուր են, դաժան ու «զուժկան»...:

Գառնիկ Աղղարյանը իր հողվածներում չի փակում էտդարձի ճանապարհները և «խնդրելու պես պահանջում է» կամ

² Նույն տեղում:

«սահանջելու պես խնդրում», որ եթե անխուսափելի են մեկնումները, ապա թող դրանք լինեն առժամյա, վերադարձի, առաջին իսկ բարենպաստ առիթով՝ «վերադառնալու որոշումով»: Բայց զոհեր թողնելու նման «գիվանագիտությունը» նույնպես վկայումն է բանաստեղծ ու հոգվածագրի քաղաքական հասունության ու լայնախոհության:

Արարական արևելքից և լիբանանից արտագաղթը, իհարկե, հաշմեց տվյալ գաղթօջախները, բայց նկատելի աշխուժություն հաղորդեց այն գաղթօջախներին, որոնք գրեթե դժգունել էին: Վերադարձնումը այս վերջինների, ինչպիսիք հանդիսանում են, թեկուզ առաջժամ, երբ գրվում են այս սուղերը, ԱՄՆ-ը, Կանադան (հարաբերաբար նոր գաղթօջախ) և այլն, տալիս են այն պատրանքը, որ լիբանանը (լիբանանահայությունը), կատարելով պատմական իր պարտքը, աշխարհում թե ակամա այն փոխանցել է սփյուռքի նոր կայքերին, որտեղ շատացել է համախմբված հայության թվական կողմը, որտեղ գնալով բաղձանում են թերթ ու ամսագրերը, հաշկական դպրոցներն ու եկեղեցիները և ակումբները: Դա փաստ է: Այդ փաստը անձամբ ստուգել է նաև տողերիս հեղինակը՝ 1986 թվականին Կանադա կատարած իր գործուղման ընթացքում, այսինքն՝ Նույնիսկ Կանադա (Մոնրեալ, Թորոնթո) կատարած այցելությանը: Նման աշխուժացման փաստ, ավելի քիչ տարողունակությամբ, արձանագրվել է նաև 1984 թվականին Ֆրանսիա (Փարիզ) արված այցելության առթիվ, բայց պիտի խոստովանել, որ երկու դեպքերում էլ անձնական դիտարկումները չեն ժխտում Գառնիկ Ադգարյանի հենց 1986 թվականին լույս ընծայած հոգվածի եղբակցությունները, որոնք մի անգամ ևս հաստատում են հրապարակագրի հայտնած կարծիք ու պնդումների ճշմարտությունը, և այս՝ հակառակ արտաքին անառարկելի թվացող երևույթների:

«Մեր իրավունքն է կրկնել, անընդհատ կրկնել թե լիբանանահայությունը է ու կը մնա անփոխարինելի՝ սփյուռքահայ լինելության համար, և անգամ վիրավոր, լիբանանահայ կյանքը ազգային-հասարակական քե կրթական-մշակութային իր

ուժակաճուրճամբ, ավելի ծանր կը կշռէ, Բան սփյուռքի ամբողջ մնացյալը (ընդգծումը մերն է. Գ. Ս.): Ուրիշներն ու ուրիշներուն ըրածը չենք արհամարհիր, քա՛վ լիցի, և այս իրողությունը չենք ալ վերագրեր սեփական մեր շնորհքի: Պարզասկես պատմությունը բերած է այնպես՝ որ այստեղ, միա՛յն այստեղ, այսպիսի համախումբ ու միատարր ներկայություն ենք և Հիրանանի առարկայական պայմանները մեզի ընձեռած են կարելիություններ զորս կարելի չէ գտնել որեւէ այլ տեղ: Խնդրե՛մ, եթէ առարկողներ կան, թող ապացուցեն հակառակը, միայն թէ մեր կարելիություններուն (և անոնց հաշվեկշիռ-արդյունքին) չհակադրեն պարագայական ու ժամանակին մեջ սահմանված աշխուժություններ, որոնց առաջացման մեջ՝ ինքնին մեծ է դերը նաև անոնց, որոնք ծրնած ու կազմավորված են Հիրանանի մեջ և ապա մեկնած են դեպի հեռավոր ամիսներ»³:

Մահվանից չորս ամիս առաջ ստորագրված «շաբաթօրյա զրույցների» մի հոդվածից մեջ բերված այս տողերը, որոնք պատգամի ուժղություն ունեն և կարող են ուղենիշ հանդիսանալ շատ ու շատ կաղմակերպությունների ու անձանց համար ի սփյուռք աշխարհի, որոնք, խանդավառվելով որոշ գաղթօջախների «պարագայական և ժամանակին մեջ սահմանված աշխուժություններից», հիմքային մեծ կարելիություններ են ծախսում հեռանկարային հիմքերից զուրկ խոշոր ձեռնարկների համար և, առավել ամփոփալին նաև, այդ բոլորը ինչ-որ տեղ հակադրում են լիբանանահայ գաղթօջախի գալիքին: Այս բոլորով մի՞թե անվերանայելի սխալ չեն գործում... Այդ, իհարկե, ցույց կտա ապագան. բայց չէ՞ որ այն ժամանակ սխալն ուղղել անհնար կլինի:

Գառնիկ Ազդարյանը իր հոդվածները ստորագրում էր, և այն էլ իր անվան ու ազգանվան սկզբնատառերով միայն՝ Գ. Ա.՝ մեկնած նման խորը ու մեծ համազգային նշանակություն ունեցող մտահոգություններից: Նա նման մեծ տարո-

³ Գառնիկ Ազդարյան, Ինչի՞ց է պետք էդ Ավստրալիան, ջա՛նս..., «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 139, 20 հուլիսի 1986, էջ 8:

զուխյուն ունեցող հոգսերը կիզակենտում էր՝ խորհել ու լրջորեն մտածել ստիպող հարցականների առաջ դնելով ընթերցողներին: Եվ չէր հանդուրժում, դառնում էր անխնա ու ձաղկող, երբ տեսնում էր, որ սփյուռքում խախտվում են հայապահպանման հիմքերը: Լիբանանահայ գաղութի վաղվա օրվա հանդեպ յուրաքանչյուր ոտնձգություն, ելնելով թեկուղ առաջին տկնարկից սովորական թվացող մի նամակի բովանդակությունից, զգաստ էր դարձնում նրան և ստիպում «բաց նամակ» գրել շաբաթօրյա զրույցներում: Նման մեկնակետուններ «Նամակ ամերիկահայ բարեկամիս»-ը՝ դեռևս գրված շատ ավելի վաղ, բան այն, որի մասին խոսեցինք: Պատասխան նամակը գրված էր մի ծանոթի, որի առդերում հայտնվել էին հետևյալ «անընդունելի» երկու մտքերը՝ հակառակ «ընդունելի» համարված նրա արտագաղթելու փաստին:

Առաջինը՝ «Լոս-Անժելոսի օլիմպիական խաղերուն, այն պահուն՝ երբ ամերիկյան դրոշը բարձրացավ, կը հավատա՞ս, արցունքներս չկրցա զսպել»⁴: Հայտնել էր ծանոթ նամակագիրը և, երկրորդը՝ «Չեմ հասկնար դեռ ինչո՞ւ կը սպասե աշտեղ, բոլորդ կը սպասեք աշտեղ, այդ դժոխքին մեջ, հուշս չկա, հեռանկար չկա, բոլե առաջ եկեք, ամեն ինչ լուծարքի ենթարկեցեք ու եկեք...»⁵: Հոգվածում այս երկու մեջբերումներին էլ հաջորդում էին հոգվածագրի առաջինը հեղնական, բայց երկրորդում խիստ ու խոցող պատասխանները, որտեղ դուրս էին պոռթկացել հոգվածագրի հոգում առկա տվայտանքները, մյուս կողմից էլ կրկնում էին նրա՝ մեղ հայտնի ասասան համոզմունքներն ու կեցվածքը Լիբանանի վաղվա նրկատմամբ:

«Գաղթի՛ր, ազա՛տ ես,— կրկին լայնախոհ գրում էր Գառնիկ Աղգարյանը ու շարունակում.— երջանի՛կ ալ ես, ըսելիք չունիմ, բայց ո՛չ այս մեկուն՝ հազար անգամ ո՛չ, այս

⁴ Գառնիկ Աղգարյան, Նամակ ամերիկահայ բարեկամիս, «Աղգային մշակույթ», Բեյրութ, թիվ 43, 9 սեպտեմբերի 1984, էջ 8:

⁵ Նույն տեղում:

մեկուն իրավունքը չունիս, մեր մնալ-չմնալը մե՛նք, մնացողներս է, որ կորոշենք, դուն գացիր, Աստված՝ հետդ, մեզ հանգիստ ձգե, մեզ հանգիստ ձգեցեք... Կըսեմ՝ հոգնակի՝ ձր-գեցեք, որովհետեւ գիտեմ թե դուն մինակը չես, նմանօրինակ նամականեր, Ամերիկայեն Բեյրութ, կը բաղմանան հետդհետեւ, նամակաները չեն բավեր, կա հեռախոսը, հեռախոսը չի բավեր, կան Ամերիկա այցելողները, որոնք կվերադառնան նրման «խորհուրդներով» բռնաւորոված, մենք լռեցինք, երբ մեկնեցաք, մեկնելէ ետք՝ դուք ևս լռեցեք գոնէ: Լռեցեք՝ եթե տակաւին դուզն գիտակցությունը ունի՞ մեր ժողովուրդի լինելության, դաւերու ընթացքին արյամբ գրված լինելության, եթե տակաւին ձեր հոգիներեն ներս Արարատ ունի՞, ունի՞. նշույլ մը կուսավորչի կանքեղեն...»⁶ (ընդգծումը մերն է. Գ. Ս.):

Այդ պոռթկումները դառնում էին ահազանդի հզոր «ճիշ», երբ տեսնում էր, որ արտագաղթը, ձուլումը ստանում էր արդեն ահաբեկող բնույթ, ստանում զանգվածային գաղթի հանգամանք և, ավելին՝ դեռևս ընդգրկում էր նաև մայր հողն ու հայրենին:

Կրակը՝ կրակ էր իհարկե, երբ խոսքը վերաբերում էր երկրորդ հայրենիքին՝ Լիբանանին, բայց այն դառնում էր... «կրկնակի կրակ», երբ խոսքը հայրենիքից կատարվող արտագաղթին էր վերաբերվում: Նման արտագաղթի մի փաստ, առկա մի փաստ, որի լուրը հասել էր իրեն, բացառապես խոցել էր նրա հոգին ու ստիպել առաջինը գրիչ վերցնել՝ ասելու համար, դատարկելու համար իր հայրենանվեր հոգին.

«Ամիսներն ի վեր կը փորձես շմտածել այդ մասին... կը փորձես այրող այդ մտածումը թաղել մոռացումի մոխիրին տակ, մոռացումը հաճախ եթե չարիք է ու աղետ, փրկություն է երբեմն, հրաշագործ սպեղանի է կոտտացող վերքի մը վըրա, կը ծածկես մոխիրով, խորր, շատ խորը, այլևս չհիշես, չհիշես բնավ...:

⁶ Նույն տեղում:

Ամիսներն ի վեր կը փորձես, բայց ի զո՞ւր...»⁷:

Այո, շկարողացավ ստացված լուրով կոտտացող վերքը ծածկել մոխիրով, որովհետև լուրը, իր համար, բացառապես անսպասելի էր... «Ի՞նչ արեց». «Ծննդավայրդ Եգիպտոսն էր, մանկություն, նախակրթարան, պատանեկություն, հետո՞, հետո՝ հորիզոնը փակ էր, ի՞նչ պիտի քլլար, ի՞նչ պիտի քլլայիր՝ Աստված գիտե, բայց բախտդ բերավ, ինչպես կըսեն, տարագիր հայու բախտդ լուսավորվեցավ հանկարծ, հայրենիքը, մայրը, բացավ իր թևերը ու ողջագութեց քեզ, հոգն էր, անփոխարինելին, հեռավոր ափերու վրա թուփ մըն էիր, ամեն հովե տարուերվող, այնտեղ, հայրենի հողեն ներս, արձակեցիր արմատներ ու դարձար ծառ, հպարտ, հաստաբուն ծառ մը, որ հովանին կը տարածեր շրջապատին վրա, դարձար բժիշկ, բժշկապետ, հռչակավոր սրտաբան, կը ղեկավարեիր միջազգային ժողովներ ու բոլորը քեզի կը նայեին ակնածանքով, կը հեղինակեիր մասնագիտական հատորներ ու կը թարգմանվիր բազմաթիվ լեզուներով, մանրադատումներդ կը հրատարակվեին հանդեսներու մեջ ու առանձին գիրքերով, ամեն հովե տարուերվող թուփ էիր, դարձար բարձրաճակատ ծառ՝ իր ավիշը հողեն, հողեն ստացող և իր բերքը դարձյալ վերագարձնող հողին...:

... Ի՞նչ ըրիր...»⁸:

Եվ վերջապես... երկրորդ լուրը, որը ոչ շատ ուշ առաջինից, դեռևս մի երկու տարի հազիվ անց, այսինքն առաջին՝ «Լիրանանի մեջ պայթող ամենօրյա ռումբերու շարքին» ռումբի նման պայթող աղետալի առաջին լուրից հետո՝ երկրորդը... «սրտի տազնապից վրա հասնող մահը»... «Ի՞նչ ըրիր»...

Եվ եզրակացությունը.

«Սիրտ մը կրեցավ ցավի, կարոտի, տառապանքի, անդրադարձի, խղճահարություն, անդարմանելի գիտակցության

⁷ Գառնիկ Աղաբաբյան, Կրկնակի կրակ, «Ազգային մշակույթ», Բեյրութ, Թիվ 8, 8 հունվարի 1984, էջ 8:

⁸ Նույն տեղում:

բեռան տակ և այդպես, լուս, քունին մեջ, հանկարծորեն դադարեցավ բարախելէ...:

Ու մնաց կրկնակի կրակը:

Կրակը հողեն, հայրենի հողեն իւր անջատման, Մայր Հայրենիքեն անվերադարձ իւր մեկնումին...»⁹ (ընդգծումը մերն է. Գ. Ս.):

Հաճախ փոքր, սեղմ, բայց տարողունակ նովէլներ էին նրա հրապարակագրական հոդվածները: Նման ոճը հետագայում մշակվեց նաև «Սև և կարմիր» ժողովածուի մեջ՝ առավել հագեցնելով գեղարվեստականությամբ: Բայց ինչպես տասի ենք, գեղարվեստական ուժի բարիքն ունեին նաև իւր սոսկ հրապարակագրական շատ գրեկորումներ, և «Կրկնակի կրակը» այլ տասնյակների շարքում գրանցից էր: Բնավ պատահական չէր այդ ոճը, դա կախում ուներ ստացված ցավի տարողությունից: Նթե ուժեղ էր, խորը հոգս ու ցավը՝ հրապարակագրի գրչի տակ ակամայից խոսում էր բանաստեղծը: Ցավը ազդում էր իւր խառնվածքի բանաստեղծական կողմի վրա՝ հոգվածը շատ անգամ դարձնելով զարմանալիորեն լիրիկական, դաժանորեն լիրիկական, իսկ ոչ քիչ անգամներ արդեն ճշնշելով ու մի կողմ թողնելով հրապարակագրին, նրան հուշում էր այն մյուս կողմի մասին, որ բանաստեղծն էր: Թեպետ գրանից տուժեց բանաստեղծությունը, ոչ միշտ, բայց և ոչ քիչ անգամներ՝ նախ քանակական խմաստով, ապա նաև որակական հատկանիշներով: Առօրյա հոգսերի բազմազանությունը նրան չթողեցին ապրել սոսկ որպես բանաստեղծ, դա անհնար էր նրա համար, արյան ու մահերի մղձավանջային առօրյայում. լիրանանյան պատերազմի պայմաններում նա միշտ պատենելի վրա էր, և ամեն օր ոչ միայն կովի պատենելներից, այլ նաև այլ հորիզոնականներից նրա վրա էին տեղում այլ մղձավանջային մտահոգություններ և գրանցից էր նաև աւտագաղթի մղձավանջը և՛ սահմանի իւր կողմից, և՛ նաև իւրը նկատած՝ սահմանի մեր կողմից: Այս վերջինի առնչու-

⁹ Նույն տեղում:

Սլամբ դեռևս շատ վաղ, վաթսուներկան թվականներին, նա գրեց, ինչպես սպասելի էր, ցավի պատճառած ահագնությունից ո՛չ թե հոգված, այլ բանաստեղծություն: Այդ ցավը նա շմանրացրեց, կամ գրեթե «շմանրացրեց» շաբաթօրյա գրույցների շրջանակներում:

«Էթել հիմա Հայաստանը, միևնույն է, թե անցյալ դարերում լքել Ավարայրի դաշտը և մենակ թողնել Վարդանին, միևնույն է, թե առանց դիմադրելու, հակառակորդին հանձնել Անիի բանալիները»: Սիրվա Կապուտիկյանի այս խոսքերն էր նա ընտրել իր «Ապրիմ-մեռնիմ» ժողովածուի «Արտազադր» բանաստեղծության բնագրան: Բանաստեղծություն, որից մեջ ենք բերում առանձին մասեր.

Քու՞ն եմ արդյոք, քե՞ սերուն – բառ մը դարձած
բորենի.

Ժամի՛հներն իր կյանք մտածումիս մեջ, ու ես
Կապրիմ հողեն անջատված հունտերուն մանր լսին.
Հողին կսկիծը կապրիմ հասկին համար բևաբել:

Կնալիմ վեր – կտունկը. հուզաբարավ մեմունջով,
Հարց կոտա – ու՞ր, ու՞ր կերբաս, կրկին դարի՞ր
բլլալու,
Կրկին ինձմե խնդրելու խապրիկ ու հու՛յս հեռավոր,
Ո՞ւր կերբաս, ո՞ւր, լիված բույն, մոռցած մայր ու
ստնտու:

Այնպես րե՛կ՝ որ նակտիս չրլլա ամոքն այս անջինջ,
Հոգիես ներս շողա հրապույրը փորձուրյան,
Երե պիտի օր մ'իյնամ – իյնա՛մ բող երգը շուրթիս,
Ավարայրին մեջ մեր նոր, իբրե գինվո՞ւր Վարդանանց:

Միայն դաժան այդ բառին խոցը սրտիս մեջ չզգամ.
Թշնամիին չհանձնեմ բանալիեն՝րն Անիին,
Միայն բլլամ ընթացին մեջ ես հալոց պատմուրյան,
Միայն ընթացքի անոր՝ բլլա վերելք անսկիզբ:

Մայր, մի քողուր որ մեկնիմ՝ բեզի համար ու ինձի...¹⁰

¹⁰ Կառնիկ Աղաբաբյան, Արտազադր, Ապրիմ մեռնիմ, Երևան, «Հայաստան», 1968, էջ 11, 13:

ԼԻԲԱՆԱՆ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Մեռնիլ գիտնալ որպեսզի ապրիլ ստիլիս. բարեկամ...

Գ. ԱԳԳԱՐՅԱՆ

Գառնիկ Աղղարյանը Սիրիա-լիրանանյան կոմունիստական կուսակցության (հետագայում կուսակցությունները սկրսեցին գործել առանձին-առանձին) շարքերն անցավ զեռնսվաղ՝ 1948 թվականին: Հետաքրքրական է, որ կոմունիստական մամուլի էջերում նրա առաջին ստեղծագործությունը նվիրված էր երիտասարդ բանվոր, կոմունիստական կուսակցության բյուրոյի անդամ, ներգաղթի կոմիտեի նախագահի տեղակալ Պողոս Նաղրյանի հիշատակին, որը զոհ էր գնացել հայրենադարձությունը ձախողելու քաղաքականություն որդեգրած տեղի դաշնակցություն կուսակցության դավադրությանը: Գերեզմանատանը, սգո միտինգի ընթացքում բազմահազար ժողովրդի ներկայությամբ արտասանված բանաստեղծության ցասումնալից տողերը, սրտի խորքից պոռթկացող արտահայտությունները տարակույս չէին թողնում հեղինակի դադափարական հակումների մասին¹: Բանաստեղծությունը «Ժողովուրդի ձայն» օրաթերթում լույս տեսավ սգո միտինգից մի քանի օր անց, 1947 թվականի մայիսի 18-ին՝ «Ողբ հերոսի մը համար» խորագրով: Գ. Աղղարյանի բանաստեղծությունների մեջ դա զադափարական մարտիկի սպանությանը նվիրված առաջին ցասումն էր, ցասում, որ հետագա տասնամյակներին պիտի ունենար ոչ քիչ հասցեատերեր: Դաժան փաստ է, բայց, համենայնդեպս, Լիրանանի կոմիտեը դար-

¹ Սուրեն Նաղրյան, Գառնիկ Աղղարյան, երկեր, երեան, «Սովետական գրող», 1988, էջ 4:

ծով նահատակների կուսակցություն և այս հատկապես 1958 թվականին՝ Լիբանան ամերիկյան ափհանման և 1975 թվականից հետո անցնող տարիներին, ներքաղաքական պատերազմի և խորացելյան ներխուժման հետևանքով:

Արաբ կոմունիստների կողքին ընկան նաև բազմաթիվ լիբանանահայ ընկերներ: Նահատակներ, որոնցից յուրաքանչյուրի մահվան հետ անասելի վիշտ ու տառապանք էր ապրում նաև ինքը՝ բանաստեղծը: Այդ վիշտն ու տառապանքը հաճախ էին վերածվում կրքոտ հրապարակախոսության և ո՛չ քիչ անգամներ նաև բանաստեղծության, որովհետև նրանք, այդ երիտասարդ զոհերը, ընկնում էին հանուն Լիբանանի, հանուն նրա անկախության: Գառնիկ Աղդարյանը ընկնող յուրաքանչյուր հերոսի մեջ տեսնում էր «կյանքի և հաղթության» ուժացող սերմը, տեսնում էր վաղվա օրը, գալիքը: 1951 թվականին, նահատակված «Արաբ ընկերոջ՝ Անուարի հիշատակին» իր գրած տողերում Գ. Աղդարյանը ասում էր հետևյալը.

Առանց բեզի,
Առանց տենյին՝ զոր դուն տվիր ամբողջովին,
Առանց լուսին՝
Ձուր խեղդամահ բռին ընդմիջա
Աշխույ մեջ անծայրածիր,
Առանց հոգվույդ՝
Ուր բռնության դեմ խելագար՝
Գեղականաւ եղավ պաստառ,
Առանց մոր մը ցավին հսկա
Եվ աղբկա մը սիրահար՝
Անպատմելի տառապանքին.
Առանց բեզի.
Արյունահեղ այս պողոտան
Մեզ շտաներ պիտի վաղվան²:

Այս տողերում արդարացիորեն կարեորվում էր առանձին հերոսի նահատակումը, ամենակարեորը՝ իմաստավորվում

² Գառնիկ Աղդարյան, Հերոսական, Պատենշին վրա, Երևան, «Հայպետհրատ», 1957, էջ 37:

մահը, դառնալով մահ իմացյալ, դառնալով անմահություն,
և դրանով էր, որ մեռնել իմանալով, բացվում էր ճանապարհ-
հը ապրողների, նրանց երջանկության ու վաղվա հույս ու հա-
վատքի:

Գառնիկ Աղդարյանը առանձին հերոսի անկման մեջ վե-
րելքի հիմքն էր տեսնում գալիքի: Իսկ «Անվարը» չէր մնում
հրպես առանձին նահատակի անուն, դառնում էր խորհրդա-
նիշ. ինչ ասել, որ այդպիսիները լիբանանյան պայքարի տա-
րեգրության մեջ ունեցան, դժբախտաբար, շատերը: Այդ շա-
տերից էին նաև երեքը, Գժոյան եղբայրներն ու Գ. Վրթանես-
յանը, որոնք «1957 հունիսի 9-ին Բեյրութի մեջ դաշնակ բար-
բարոսներու կողմե սպանվեցան»:

Ինչպե՞ս ըրին...

Ինչպե՞ս մատենե, մաւղձու մատեն՝

Անմաւղկայի՛ն վայրագությամբ

Մահվան բլրակը սեղմեցին՝:

Անհավատալի էր նման եղեռնագործությունը՝ սիրո ու
կյանքի համար ծնած բանաստեղծի հոգուն, չէին հերիքում
ցասման, նաև վրեժխնդրության պոռթկումները, բայց հար-
կավոր էր շարվել կրքի փոթորկումներին, անհրաժեշտ էր
զսպել անզսպելին ու «բանալ զոնե՛րն հիմա բոլոր՝ մտածու-
մի լույսերուն դեմ»: Ու հիմնականը... Չմոռանալ.

Թե առօրյա պայքա՛րը լոկ

Պիտի բերե հատուցումի ծամբ վերջին:

Այլ խորանալ,

Տեսնել կյանքի հորիզոննե՛րն անծայրածիւ,

Եվ իր ըմբոստ հույզերուն տեղ՝

Կոփել կա՛մքն իր սլոդպատակութ:

Այլ գիտակցիլ

Թե գալիք մե՛րն է ամբողջ.

Մե՛րն է միայն,

³ Գառնիկ Աղդարյան, *Փոխան ծաղկեպսակի, Պատանշին վրա, Երեան, «Հայպետհրատ», 1957, էջ 43:*

Ու հաղթության հաղթ բերի՝
Մեր արյունով է ոռոգված»⁴:

Հիմնականը զսպելն էր վրեժխնդրության պոռթկումները: Այսինքն՝ զսպել սրտի արդար թելադրանքը և մտածել մտքով և շնորհամար, որ ինչքան էլ արյունով ոռոգված լինի ճանապարհը, գալիքը, հենց այդ ճանապարհով էլ... մերն է լինելու: Գառնիկ Աղդարյանը նշելով լիբանանցի արաբ և լիբանանահայ նահատակներին, չէր առանձնացնում նրանց աշխարհագրական տարածքի վրա, նրանք՝ այդ հերոսները, եթե ընկնում էին հանուն Լիբանանի, նշանակում է, որ ընկնում էին նաև հանուն հայ մարդու, առաջինը հանդիսացող հողի՝ Խորհրդային Հայաստանի և, ինչո՞ւ չէ, նաև այն գալիքի համար, որ լինելու էր համայն մարդկությանը: Այդպիսին էր լիբանանահայ կոմունիստի և լիբանանահայ բանաստեղծի հավատամբը: Այստեղից էլ «Պատնեշին վրա» հատորում՝ «Ատելություն» և «Հարյուր հիսունչորս» խորագրված բանաստեղծությունները վերոհիշյալների շարքում: Բանաստեղծություններ, որոնցից երկրորդը 1948 թվականին հասցեագրվել էր «Հունաստանի մեջ գնդակահարված 154 հայրենասերներին», իսկ առաջինը՝ 1952 թվականին հուլյն լեզենդար հերոս Բելոյանիսին և նրան զուգահեռված լիբանանցի նահատակ եղբորը: Եվ այս ամենը, այդ բոլոր տարբեր տարիների ընթացքում գրի առնված բանաստեղծությունները այն պատճառով,

Որովհետև կր սիրեմ քեզ անհունորեն,
Իմ սիրելիս,
Կատեմ զանո՛նք՝ որ կր սպառնամ
Կյանքիդ, կյանքիս – երջանկության:
Որովհետև ժպիտիդ մեջ ես կոեսնեմ
Հորիզոնները խնդության,
Կատեմ զանոնք՝ որ ժպիտիդ լույսին փոխամ
Կուզեմ տեսնել արցո՛ւնք միայն:
Որովհետև անունդ հու՛սե՛ր է անհուն:

⁴ Նույն տեղում, էջ 45:

Այո՞, որովհետեւ բանաստեղծի անսահման սիրո զիմաց եւ սիրո զիմաց իմ, բո ի մեզ նման բոլորի, կանգնած են նրանք, ատելություն կրողների սպանալիքները, նրանց մահաբեր զենք ու դաշույնները: Գառնիկ Աղգարյանը շատ զրեց եւ ատեց ատելությունը, թեկուզ իր «Ատելություն» խորագրով լած բանաստեղծությունում, ե ոչ բիշ անգամներ, երբ զբիշը շատ էր դանադար, բանաստեղծությունից անցավ արձակի, հրապարակագիրը շտպանց, որպեսզի ցասման խոսքը դառնա հանգամանք: Հաճախ էլ երեւի, պարզապես սիրտ շունի երգի վերածելու աչն, որ անզոր էր «երգ» դառնալու: Նրան խոցում էր հատկապես, երբ նահատակվում էր նա, որի նահատակումը թվում էր... «անհեթեթ», նման սպանությունը... անհեթեթություն: Այդ շարքի նահատակություններից մեկն էր 1983 թվականի օգոստոսի 31-ին կատարվածը:

«Չարաբաստիկ փամփուշտ մը փողոցին մեջ կը վիրավորեր «Ալ-Նիսա» օրաթերթի ե «Կանչ» շաբաթաթերթի երկարամյա ցրվիշը՝ Ապու Ալին (Պահիճ Ծմաա), որ երեք օր ետք կը մահանար հիվանդանոցին մեջ, խոր սուգի մատնելով իր բոլոր բնկերներն ու բարեկամները, բոլոր զինք՝ ճանչցողները, որոնց թվին «Կանչ»-ի Արեմոյան Բեյրութի բնթերցողները»⁶:

Այդ շարաբաստիկ մահը բանաստեղծություն չդարձավ նախ նրա համար, որ դադարեցվել էր «Կանչը», իսկ երբ լույս տեսավ «Ազգային մշակույթը», Գ. Աղգարյանը հեռին թվով, բայց անմիջապես (թիվ 3) հիշեց, չէր էլ մոռացել շարքային ցրիշին՝ Ապու Ալին, ե իր շաբաթօրյա զրույցներում ծավալուն սյունակներ նվիրեց նրան, հուզիչ, լիրիկական,

⁵ Գառնիկ Աղգարյան, Ատելություն, Պատենշին վրա, էջ 39—40:

⁶ Գառնիկ Աղգարյան, Մարդը ե թերթը, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 3, 4 զեկտեմբերի 1983, էջ 8:

սիրտ արշուճող, բայց հավատքով լի սյունակներ՝ արված
զործի ու մարդու մասին:

«Ավելի քան քսան տարիս ի վեր, ամեն առավոտ կը
ցրվիր օրաթերթը և ապա, շաբաթ-կիրակի օրերը, հայերեն
շաբաթաթերթը, կը շրջեր քաղաքի փողոցներուն մեջ, կը
բարձրանար հարկերը, շնչասպառ կըլլար հաճախ, բայց ամեն
անգամ, որ կը հանձներ թերթը, անբացատրելի գոհունակու-
թյուն մը կը զգար, հանձնածը թերթ չէր, հա՛ց էր, քիչ մը
հո՛ւլս էր ու հավա՛տք, ավելի քան քսան տարիս ի վեր, ամենադժվարին պահերուն...»⁷:

Շաբաթօրյա զրույցներ, բայց ինչպես ոչ քիչ անգամ-
ներ... բանաստեղծության նման: Եղան նաև այնպիսի կո-
րուստներ, որոնք դարձան... պատմվածքներ: Դրանցից էր
լիրանայան պատերազմի տարիներին նահատակված Հրաչ
Գալանճյանի հիշատակին նվիրվածը՝ «Մահեն ավելի ուժե-
ղը»: Այս այն մարտիկն էր, որ մնաց ու մնացել էր միշտ
պայքարի ամենաթիվ պատանեղների վրա և բնկել զաժան մա-
հով:

«Թաղին մեջ՝ ինքնաշարժ մը կը սուրա և մարմին մը
կապված է ինքնաշարժին: Ինքնաշարժը կը սուրա, մարմին
մը կը զարնվի քարերուն, մարդիկ սարսափահար կը փակեն
իրենց աչքերը, մեկը, ինքզինք կորսնցուցած, կը հայհոյե
բարձրաձայն:

Ինքնաշարժը կը սուրա՝ իր ետին քաշկուտելով մարմին
մը: Ողջ չէ, դիակ է, բայց կը փորձեն զայն սպաննել կրկին
անգամ, որովհետև մահեն ավելի ուժեղ է ան, մահեն ետք՝
կապրի տակավին...»⁸:

Մահից ավելի ուժեղ են նրանք, ովքեր զիտեն, թե ինչի՞
համար են կովում և հանուն ինչի՞ են մահ ընդունելու, զիտեն
մեռնել, որպեսզի ապրել սովորեցնեն հետնորդներին: Բա-

⁷ Նույն տեղում:

⁸ Գառնիկ Աղաբաջյան, Մահեն ավելի ուժեղ, Սև և կարմիր, Երևան
«Սովետական զրոգ», 1979, էջ 91:

նաստեղծը, հրապարակախոսը այդպիսիներից էր: Նա ապրեց ու մահ բնդունեց հանուն Լիբանանի, հանուն լիբանանահայության և այս ի մասնավորի լիբանանյան երկարամյա պատերազմի տարիներին: Այն տարիներին, երբ Լիբանանում «ամենեն աժանը»... մարդն էր:

«Սղության մասին չէ խոսքը, գիները դարձած են առասպելական և աժան բան չկա այլևս, աժան բան չմնաց— եթե առավոտուն համեմատաբար աժան թվի, կեսօրին գինը փոխված է արգեն, ամեն օր՝ քիչ մը ավելի, ամեն ժամ՝ քիչ մը ավելի:

Ամենեն աժանը, Լիբանանի մեջ, մարդն է, սիրելի՛ս, մարդն է, որ այլապես կոչված է ըլլալու ամենեն թանկագինը: 11 տարի է ի վեր այսպես է, մարդուն արժեքը...

Նվ ի՛նչ կարժեն երկիրն ու իր փրկությունը, եթե մարդը պիտի պարպվի իր բոլոր հատկանիշներեն ու վերածվի գաղանի՝ իր նմանները հռչակող: Փրկությունը գուցե պիտի լլվա այն, որ ամենեն աժանները՝ մարդիկ սթափին, միանան, ցուցաբերեն անհրաժեշտ խիզախությունը՝ ամբողջ ձայնով իջնելու համար հրապարակ ու փշրելու համար դժոխային շրջագիծը, որուն բանտարկյալներն են ավելի քան 11 տարիներն ի վեր:

Փրկությունը կրնա դալ, պիտի գա ամենեն աժաններեն՝ մարդոցմե, մարդոց ըմբոստացող բաղմություններեն,

նվ կամ պիտի չդա՛ բնավ...»⁹:

Գառնիկ Աղգարյանի յուրաքանչյուր «շաբաթօրյա զրույց» զգաստության ու սթափության կոչ էր՝ ուղղված Լիբանանին ու լիբանանահայությանը: Զգաստություն՝ ընդդեմ Լիբանանի իսկ լիբանանցի ներքին դավադիրներից և իսրայելական, սիոնիստական ընշաբաղցությունից: Դավադիրներ, որոնք թիրախ էին բնորոժ նույն ինքն Լիբանանը, լիբանանյան հայրենիքը:

⁹ Կառնիկ Աղգարյան, Ամենեն աժանը, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 151, 12 հոկտեմբերի 1986, էջ 8:

«Ո՞վ տակավին չի դիտակցիր լեզվի այս ճշմարտության, վաղը, մյուս օր պիտի դիտակցի, — որ սիոնիստական ընչաքաղցության չկա սահման, կայունությունն ու ապահովությունը պայմանավորված են միայն ու միայն իսրայելական գրավման ուժերու հեռացումով, որքան ատեն որ անոնք այստեղ են՝ ավերը պիտի շարունակվի և արյունը պիտի շարունակե հոսիլ, որքան ատեն, որ անոնք այստեղ են՝ դավը կա ու վտանգը կա, կա քաղցկեղը, որմե կարելի է փրկվիլ վիրահատումով, միայն վիրահատումով»¹⁰:

Խիզախ, խորամիտ այս տողերը և նման տողերով հագեցած հրապարակագրական էջերը խոսում էին հեղինակի անկաշառ հայրենասիրության մասին, որը դիտեր յուրաքանչյուր անարգ փաստի մեջ տեսնել ընդհանրականը, յուրաքանչյուր առանձին դեպք ու ոճրի մեջ՝ թշնամու կողմից հաշվի առնված գլխավոր թիրախը. դրանցից էր, որ սկսած հայ Պողոս Նազրյանից մինչև արաբ Ապու Ալին, նրանց և այլոց նահատակումների մեջ նա տեսնում էր գլխավորը. «Նո՛ւյն քիւրախը՝ Հայրենի՛քը լիբանանյան», և այս՝ առաջին հայրենիք նկատած Հայաստանից հետո: Եվ այս՝ դեռևս վաղ տարիներից: Եվ զգաստության կոչերին զուգահեռ՝ լարված ծուղակների դեմ աշալուրջ լինելու, հայությունը դավ ու սադրանքների մեջ ներգրավելու փորձերի դեմ արթուն մնալու անդադրում կոչերով և, մեկդի դրած գաղափարական տարակարծությունները, միասնական լինելու պատգամներով: Գաղութում միասնականության ձգտում, որի առաջին ու անկոտրում դործիչներից էր նա՝ Գառնիկ Աղզարյանը: Ոչ միայն իր հոգվածներով, այլ անձնական, հոգնել չիմացող դործունենությամբ և նաև ոչ քիչ դեր խաղացող ու խաղացած անձնական հմայքով:

«Հիմա, առավել քան երբեք, կենսական անհրաժեշտություն է ամեն քայլափոխի հիշել, թե մեր ազգային գերագույն շահը,

¹⁰ Գառնիկ Աղզարյան, Կարմիր ձյուն, «Կանչ», Բեյրութ, թիվ 7307, 12 դեկտեմբերի 1982, էջ 8:

ինչպես և Լիբանանիներ, կը պահանջէ պահպանել զրաւան շեղութեամբ, թումր կանգնել կրօնական զգացումները հրահրելու ամեն փորձի դեմ, արիօրեն և միասնորեն դիմակայել ամեն ճնշում ու շանթաժ, անընդհատ ի մօտի ունենալ շրջապատն ու հեռանկարը և շփոնալ, բնավ շփոնալ հայ բաղմությունները Սուրիո մեջ և արաբական ու մահմեդական աշխարհի տարածքին: Հայ բաղմությունները, որոնց ճակատագիրը առնչված է, շատ մօտեն առնչված է մերինին հետ...:

Ուշադրութեամբ, ծուղակ է...

Լիբանանցին, ընդհանուր առմամբ, երկու ուղիով ինկած է անոր մեջ, թեև կը հաւատանք, օր մը, ուշ թե կանուխ, իրավ հայրենասերները պիտի հաջողին քանդել դժոխային շրջագիծը՝ Լիբանանը ազատագրելով բոլոր կապանքներէն:

Մինչ այդ՝

ընենք այնպես՝ որ մենք ևս չիյնանք, մեզ ևս չծղեն
ծուղակ-թակարդ-որոգայթին մեջ...»¹¹:

Հոգւածը գրվել է Գառնիկ Աղգարյանի կյանքի վերջին տարւա առաջին կեսին: Իսկ հոգւածի միտք-բանին եղել է նրա հաւատամքը դեռևս շատ վաղ տարիներէ: Աշաւրբ-ջություն բոլոր դավերի դեմ և վերջապէս միաւնութեան: Միասնութեան և՛ մեզ՝ հայերիս, և՛ լիբանանցիներին համար ամենուրեք և ամեն տեղ: Եղիշե Զարենցի երկրպագուն յուրացրել էր մեծ բանաստեղծի անմեռ պատգամը.

«...Մի գայթակղիք, խոսքը արիութեան, նվիրումի, անձնազոհութեան մասին չէ, մեր պատմութեանը լավագոյնս տված է փաստը անոնց՝ Աւարայրին մինչև մեր օրերը, խոսքը մշտնախնայման է, պահանջատիրական պայքարի ընթացքին, դոնէ և մանավանդ անոր ընթացքին՝ հատվածական ամեն մոտեցում, պատկանելիութեան ամեն ցուցադրութեան, մենատիրական ամեն փորձութեան ձերբազատման, շարքերու անխտրական խտացման, գործին՝ աղմուկին փոխարեն, հստակատեսու-

¹¹ Գառնիկ Աղգարյան, Ուշադրութեամբ, ծուղակ է..., «Ազգային մշակութիւն», թիվ 124, 6 տարի 1986, էջ 8:

թյան՝ պատրանքներով օրորման փոխան, խոսքը այն մասին է՝ որ գիտակցի՛նք, ի վերջո գիտակցի՛նք, թե կարելի չէ բոունցք կազմել՝ մատները անջատելով իրարմե և ձեռքը հակադրելով բազուկին, ճի՛շտ է, այս դասեն շատ առաջ (խոսքը լիբանանցի հարավի մարտիկների միասնության մասին է. Գ. Ս.) կա մյուսը, Սարգարապատի՛նը, բայց հիշողությունը արգեն կապած է ժանգ, ժանգը ժամանակին, որ է՝ ու կը մնա մեր թշնամին՝ ոխերիմ ու դարանակալ...:

Դա՛սը, հարավի մարտիկներո՛ւն դասը՝ իրրե ուղեցույց և գրոշ իրրե...

Եվ այս դասին համար՝
 Չարժե՞ր խոնարհիլ
 Այս հերոսներուն առջև, որոնք անուն չունին,
 Այլ ունին մեկ անուն
 Ազգային դիմադրության նակատ...»¹²:

Ազգային դիմադրության ճակատ ընդդեմ բոլոր դավերի ի սփյուռս աշխարհի, նաև և այս առաջին հերթին՝ հանուն հայապահպանման, հանուն ազգապահպանման:

Հայի համար և արաբի, լիբանանի համար և հանուն լիբանանահայության՝ «Ազգային դիմադրության նակատ»:

Եվ, վերջապես, խոսքը մասնավորելով լիբանանահայությանը, մի անգամ ևս բազմիցս կրկնված այն համոզմունքը, թե

«Այստեղ է ազգային մեր լինելիությունը, հայ դատը, հայ միտքը, հայ մշակույթը այստեղ են նախ և առաջ: Մայր Հայրենիքեն ետք, Մայր Հայրենիքին կողքին՝ Բեյրութն է Սփյուռքի երակներուն արյուն ջամբողը, և ո՛չ մեկ սփյուռքահայ կեդրոն կրնա փոխարինել Բեյրութը, ի՛նչ ալ ըլլա, ի՛նչ ալ պատահի...»

Ապրողը կը տեսնե»¹³:

¹² Գառնիկ Աղաբաբյան, Դա՛սը, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 62, 20 հունվարի 1984, էջ 8:

¹³ Գառնիկ Աղաբաբյան, Ի հեճուկս եղբրամայրերուն..., «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 26, 13 մայիսի 1984, էջ 8:

Այս եղրահանգումը համեմատաբար վաղ թվական ունի, բայց նման եղրահանգումներ հրապարակագրի հոգվածներում բազմիցս են եղել և կրկնվել տարբեր առիթներով, ինչպես այդ երկաց նախորդ ենթագլուխներում: «Ապրողը կր տեսնե», — գրել է Գառնիկ Աղդարյանը, թեպետ քիչ ջրեր չեն հոսել դրանից հետո և ինչ-որ տեղ խախտել են նման հույս ու հավատքի անխորտակելի լինելու փաստը: Ինչ էլ բերի վաղվա օրը, այնուամենայնիվ, Բեյրութն է եղել, ի մասնավորի ետպատերազմյան (Բ. համաշխարհային) տարիներին «Սփյուռքի երակներուն արյունը ջամբողը...»: Կխախտվի՞ նման փաստի առկայությունը, եթե այո՞, այդ դեպքում կա և մնալու է հրապարակագրի երկրորդ հաստատումը, որ «Ոչ մեկ սփյուռքահայ կեղրոն կրնա փոխարինել Բեյրութը...»: Եվ դա տխուր, նույնիսկ դաժան ճշմարտություն է: Բանաստեղծի հոգում բույն դրած այդ անհերքելի ճշմարտությունից էր բխում նրա անգավաճան ու անկոտրում սերը Լիբանանի ու լիբանանահայության նկատմամբ և նաև վախի այն ենթագիտակցական մղումից, որ կարող է պատահել և այդպես: Թեպետ նա հրբեէ չէր ուղում խոստովանել և շխոստովանեց այդ մասին մինչև իր մահը:

ԽԵՄ ՈՒ ՓՈՔՐ ՑԱՎԵՐ

Գառնիկ Ադդարյանի հրապարակագրության մեջ մեծ տեղ են բռնում մարդկային ու ազգային մեծ ու փոքր ցավերին հատկացված հոդվածները, որոնք մի նոր կողմից են լույս սփռում միջազգային քաղաքականության այլևայլ դրոսեորումների նկատմամբ նրա ունեցած կեցվածքին: Լավ ու խորապես ըմբռնելով հետադեմ ուժերի պործունեության ներքին զուպանակները՝ հրապարակագիրը կարողացել է իր շաբաթօրյա զրույցներում, երբեմն շատ սեղմ տողերի մեջ, այս վերջինների իսկ զրած ու ասածների սոսկ փաստագրությամբ, մերկացնել նրանց էությունը և սկուտեղի վրա «մատուցել» իր բնթերցողներին: Նման հոդվածներում Գառնիկ Ադդարյանը, ինչ-որ տեղ, յուրովի է օգտագործել հակոբ-պարոնյանական երգիծանքի տողատակային կծու ծաղրը (սարկազմ)՝ իր հրապարակագրությունը հասցնելով մի նոր, առավել բարձր մակարդակի: Ութսունական թվականներին «Կանչ» և «Ազգային մշակույթ» շաբաթաթերթում նման որակը աչքի է բնկնում հատկապես «Օրաքերթի մը 24 ժամերը», «Թուրք տուրխտ մը Երևանի մեջ», «Հուշատախտակը» և այլ բազմաթիվ հոդվածներում, որտեղ բնդհանրապես ողբերգությունները լույս աշխարհ են հանվում ծիծաղելի երանգով: Երանգ, որ ոչ թե մեղմացնում, այլ կրկնակի ողբերգական է դարձնում մատուցվածը:

Նման հոդվածներից մեկն է «Թուրք տուրխտ մը Երևանի մեջ» զրույցը, որտեղ խոսվում է զբոսաշրջիկների խմբի հետ Երևան ժամանած մի թուրք լրագրողի մասին, որ վերադարձին իր հուշերն է գրել թուրքական «Միլլիեթ» թեր-

թում: Մյուսմթաղ Սոսյալ կոչվող այդ լրագրողը շատ է հուզվել, երբ նրան — խմբի հետ, իհարկե — տարել են Ծիծեռնակաբերդի նահատակաց հուշահամալիրը և երբ ուղևիցող հայ աղջիկն ասել է. «Ինչպես հայտնի է, 1915-ի ապրիլին, Օսմանյան կայսրության հետադիմական իշխանությունը ձեռնարկած է ցեղասպանության մը, որուն հետևանքով մեռած են մեկուկես միլիոն հայեր: Այս բլրակի լանջերուն վրա ձեր տեսած մեկ ու կես միլիոն ծառերը այդ նահատակներու հիշատակը վառ պահելու համար տնկված են»:

Այո՛, հուզվել է թուրք լրագրողը, բայց ոչ մեր հասկացած իմաստով, ինչ որ բնական և բանական պիտի լիներ: Այլ, ինչպես Գառնիկ Աղդարյանն է վկայում... «ըլլալի՞մք բան է, այսֆա՞ն էլ խեղաթյուրում ու նենգափոխում, պոռֆեսորը ինչպե՞ս չհուզվի ու չընդվզի, ինչպե՞ս չգրե», — ու «Միլլիեթ» թերթում ո՛չ պակաս, ո՛չ ավելի գրել է.

«Մարդ իսկապես կը վարմանա, որ իր երիտասարդ սերունդներուն մոտիկ անցյալի պատմությունը այսպես միակողմանի ձևով սովորեցնող հանրապետություն մը գոյություն ունի տակավին Սովետական Միության մեջ, որուն համար կըսվի թե մարդկային հղբայրության սկզբունքներուն վրա հիմնված է և շատոնց պետք է ձերբազատված ըլլար անցյալի վերաբերյալ ազգայնական զգացումներին»¹:

Յիսիգմ է. բայց Գառնիկ Աղդարյանը տիրապետել է իրեն և գրել.

«Ընդունեցիք, սքանչելի է «անցյալի վերաբերյալ ազգայնական զգացումներին ձերբազատման» այս գյուտը, պըրոֆեսորը իրավունք ունի. իրենք տված են օրինակը ու ձերբազատված են լրիվ. Թալիաթի արձանի կանգնո՞ւմը Պոլսո մեջ, հայկական իրավունքներուն լրբենի ուրացո՞ւմը», թուրք պատմաբաններու ահավոր նենգափոխումները, մնացյա՞լը, անոնք ի՞նչ կապ ունին ազգայնական զգացումներուն հետ.

¹ Գառնիկ Աղդարյան, Թուրք տուրիստ մը՝ Երևանի մեջ, «Կանչ», Բեյրութ, թիվ 7313, 19 դեկտեմբերի 1982, էջ 8:

համաթուրանական մոլեղնած քարոզչությո՞ւնը, հախսովե-
տական կատաղի արշավնե՞րը, Թուրքիո ամերիկյան զինա-
նոցի վերածո՞ւմը ընդդեմ Սովետական Միության, անոնք
արտահայտությունն են «մարդկային եղբայրության սկըղ-
բունքճերուն», Թուրքիա ձերբազատված է «անցյալի վերա-
բերյալ ազգայնական զգացումներեն», կը մնա որ Սովետա-
կան Միությունն ու Հայկական հանրապետությունը ևս ձեր-
բազատվին շուտով: Բանան սահմանները թրքական լույ-
սի՞ն դիմաց, որ երբեմն կարմի՛ր է՝ հայոց արշան պես... եր-
բեմն կանաչ՝ Սամ հորեղբոր տուլարներուն նման...:

Ջնաշխարհիկ այս պրոֆեսորը իր նույնքան շնաշխարհիկ
տպավորություններուն մեջ կը հայանե— «Ուղեցույց հայ աղ-
ջիկը չէր գիտեր, թե զբոսաշրջիկներու խումբին մեջ Թուրքիա-
յեն եկած թուրք մըն ալ կար, և կը շարունակեր իր խոսքերը»²:

Դժվար է այս խոսքերի մեջբերումից հետո հանդուցալու-
ծում տալ հոգվածին, բայց Գառնիկ Աղղարյանը գտել է եղ-
բափակիչ խոսքը, գտել է, ինչպես միշտ, կարճ, ազդու և զար-
մանալիորեն խտացած փոքր նախադասություններով, որոնք
չորան են և ունեն ամենաակարեօրը, նաև... հինգերորդը, որ
ընդվզումը, այս անգամ արդեն հայ ընթերցողի, մտցնում են
հունի մեջ, խաղաղեցնում նրան՝ մարդկայնորեն հասկանալի
բովանդակությամբ:

Հիշենք...

«Հայ աղջիկը չէր գիտեր քե...»

«— Իսկ եքե գիտեա՞ր,

Բոլոր հայ աղջիկներն ու հայ տղաք գիտեայի՞ն,

Գիտեայի՞ն նախատակները,

Պատմությո՞ւնը, հո՛ղը,

Բախտավո՞ւր, բախտավո՞ւր, պրոֆեսոր...»³:

Այո՛, և նաև... հինգերորդը՝ ինչքան տողատակային բաղ-
մակի իմաստներով: Այդ հինգ տողերով է Գառնիկ Աղղարյա-
նը եղբափակել հոգվածը:

² նույն տեղում:

³ նույն տեղում:

Քաղաքական մի այլ ցինիզմի մասին է նաև «Հուշատախտակը» զրույցը, որտեղ այս անգամ այն գալիս է ոչ թե Թուրքիայից ու թուրք լրագրողից, այլ նույն հարցի հետ անմիջական կապ ունեցող, բայց մի այլ հորիզոնականից՝ Ամերիկայից, և նրա «սլաշտսլանության մեծարդո սլարոն նախարար Վալնրերից»։ Ո՞րն էր հարցը... Հարցն այն էր, որ «մեծարդո սլարոն նախարարը ամերիկյան ծերակույտին առջև կը գործածեր հակահայ նշանավոր իր վեթոն՝ ապրիլ 24-ը «հայկական ցեղասպանության Զոհերու Հիշատակման Ազգային Օր» հայտարարելու որոշման վավերացման դեմ, հայտնելով թե «նման որոշումի մը վավերացումը կրնա նեղի մատնել Միացյալ Նահանգները՝ լարելով կարևոր դաշնակցի մը հետ անոնց հարաբերությունները...»։

Բայց հարցը այսքանով էլ չի վերջանում։ «Մըսթեր Վալնրերիլըրը ժամանակ կը գտնե զբաղվելու հուշատախտակով մը, պա՛րզ հուշատախտակով մը, ահավասիկ կը հրահանգե վերցնել հուշատախտակ մը, պա՛րզ հուշատախտակ մը...։ Եվ ինչպե՞ս չղբաղվի, ինչպե՞ս չհրահանգե, հուշատախտակի վերացումը կարևոր, շատ կարևոր հարց մըն է, առնչված է աշխարհի ճակատագրին հետ, վերցուցի՞ր, մարդկությունը կրնա շունչ առնել, չվերցուցի՞ր՝ Աստված գիտե թե ինչ կը պատահի...»⁴։

Եվ այսպես՝ Ամերիկայի սլաշտսլանության նախարարը հրամայում է Արլինկթրնի Ազգային Գերեզմանատան Անժանոթ Զինվորի հուշարձանի ստորոտից վերցնել այն հուշատախտակը, որ այնտեղ դետեղվել էր հայերի կողմից, 28 ապրիլ 1985-ին, և որտեղ արձանագրվել էր հետևյալ. «սարսափելի՜ն, անբնդունելի՜ն, անավուր»։

«Ի հիշատակ այն բոլոր հայերուն, որոնք թուրքերու դեմ կռվելով մեռան՝ ի սլաշտսլանություն իրենց իրավունքներուն,

⁴ Գառնիկ Աղաբաբյան, Հուշատախտակը, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 91, 18 օգոստոսի 1985, էջ 8։

Արարայի և Արկոնի ուղղադաշտերուն վրա, Համաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին»⁵:

«Եկուր և իրավունք մի տար Մըսթըր Վայնբըրրին» — ցինիզմին ցինիզմով պատասխանելով՝ գրում է Գառնիկ Աղաբաբյանը. — «Ըլլալի՞ր բան է, եղբայր, ըլլալի՞ր բան է, սա հայերը երբ պիտի գլխի գան, նման ահաբեկչական հուշատախտակ կը դրվի՞, եկած են Ամերիկա, կը վայելեն ամերիկյան «գրախտի» բարիքները, և գերեզմանատան մը մեջ գտնվող հուշարձանը շահագործելով կող կողղեն ահաբեկչության, կը խոտվեն Միացյալ Նահանգներու ներքին ապահովությունը, կը խաղան համաշխարհային խաղաղության ճակատագրին հետ, ամեն ինչ սահման մը ունի, սահման ունին մարդու իրավունքները, դեմոկրատիան, ազատությունը, չըլլալի՞ր բան է...»:

Այո՞, ամեն ինչ սահման մը ունի, բայց սահման չունի Վայնբըրրին լրբենի թշնամությունը կամ թշնամական լրբությունը, հրահանգը արված է, հուշատախտակը վերցված, և տիրահույսի այս Վայնբըրրին, ամենայն շեմ գիտեր ինչով, կը հայտարարե.

«Անկարևոր հուշատախտակի մը համար չարմեր սրել Ամերիկայի և Թուրքիոյ հարաբերությունները»⁶:

Ահա՛ քեզ դեմոկրատիա և մարդկային իրավունքներ: Հոգվածագիրը պարզ ու մեկին ցույց է տալիս զրանց ներքին սնանկությունը, ցույց է տալիս, թե այդ լողունների տակ ինչպիսի ստորություններ են թաքնված, որոնք կարող են ունակութեւ մի ժողովրդի ամենասրբազան իրավունքները: Այդպիսին է քաղաքականությունը ամենուրեք, և դա դեմոկրատիայի միջնաբերդ և մարդու իրավունքների մասին ճամարտակող Ամերիկայի Միացյալ Նահանգներում նույնպէս, երբ խնդրո առարկա են... այլ շահեր: Շահեր, թեկուզ ամենափոքրը, բայց և այնպէս՝ քաղաքական շահեր...

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

«Կը մնա որ ըսենք», — եզրակացնում է Գառնիկ Աղդարյանը.

«— Պարոնա՛յր Վաչնրըրկըրներ,

Գերեզմանատան մը մեջ զետեղված հուշատախտակ մը կրնաք վերցնել, կրնաք զայն նկատել անգամ «անկարեւոր»,

Բայց մյո՛ւսը, յուրաքանչյուր հայու հոգիեն ներս գտնըվող հուշատախտակը կա՛, կը մնա՛, պիտի մնա՛:

Հրամմեցեք, վերցուցե՛ք զայն, եթե կրնաք...»⁷:

Գառնիկ Աղդարյանը հրապարակագրի իր ամբողջ գործունեության ընթացքում պայքարեց յուրաքանչյուր հայի հոգու մեջ գտնվող այդ հուշ-հուշատախտակը վառ ու անեղծ պահելու համար: Իր հոգվածներից մեկում՝ «Անվերնագիր պատմություն» խորագրի տակ, նա գրում էր այսպես.

«Որովհետե հիշողությունը սկիզբն է հատուցման ու մոռացումը կրնա դառնալ վախճանը անոր,

Որովհետե ցավը կրնա վերածվի ուժի՛, տառապանքը՝ դարբնոց է գիտակցության, և ամեն ինչ կարելի է, ամեն ինչ կրնա դառնալ կարելի՝ որքան ատեն որ մեր իսկ արցունքին աղը կարչունե վերքը, չի թողուր որ ան դագրի կոտտալե...:

Ու վա՛յ մեզի՝ եթե արցունքը չորնա...»⁸:

Այդ «վա՛յ մեզին» հաճախ հրապարակագրի գրչի տակ ընդգրկում էր ավելի մեծ տարածք և ներառում էր ողջ մարդկության հիշողությունը.

«Արյունալի՛, եղերական ճանապարհ մը՝ Տեր Զորեն, մեր Տեր Զորեն մինչև ճապոնական Հիրոշիման,

Ու որովհետե Տեր Զորը մնաց (կը մնա) անպատիժ՝ եղան մահվան ճամբարները հիտլեյան, եղավ Հիրոշիմա...

Տեր Զորի ավազներուն մեջ թաղվեցան, այլ մնացին անթաղ՝ հարյուր հազարավորներ, Եփրատը եղավ կարմիր՝ հայու անմեղ արյամբ ու երբ այսօր կրսենք Տեր Զոր՝ կը հասկնանք

⁷ Նույն տեղում:

⁸ Գառնիկ Աղդարյան, Անվերնագիր պատմություն, «Կանչ», Բեյրութ, Բիվ 7419, 24 ապրիլի 1983, էջ 8:

15-ը, Մեծ եղեռնը Ապրիլյան, մեր մեկ ու կես միլիոնը, երբ կրսենք Եփրատ՝ հայոց արյո՞ւնն է, որ կը հոսի գետի պես, Արեւմտյան Հայաստանի տարածքին...:

Հետո նացիական ճամբարները, միլիոններու հրեշտային ողջակիւղումը, և Հիտլերի նշանավո՞ր խոսքը, ձեռնոցի պես՝ նետված աշխարհի երեսին—«Հիմա ո՞վ կը հիշէ հայոց ջարդերը...»

Հետո Հիրոշիման...:

Գուցէ մեկը հարց տա— Հիրոշիման՝ Տեր Զորին և նացիական ճամբարներու կողքի՞ն, նույն ոճրային էությամբ և նույն հրեշտային բնույթո՞վ...:

Այո՞ և անվարա՞ն, պատմութեան իսկ վկայութեամբ...»⁹:
Իսկ պատմութեան դառը, ահա՛

«Ուրբան ատեն որ ոճիր մը, հրապարակավ և առանց բռնի ծամծմելու, չի մատնանշվիր իբրեւ ոճիր, որքա՞ն ատեն որ ոճրագործն ու ոճրագործները չեն նստիր ամբաստանյալի աթոռին վրա, վտանգը առկա՞ է միշտ, ի հայտ կրնան գալ նոր դահիճներ և ի գործ կրնան դրվիլ նոր նախճիրներ, չարիքը ծառի մը պէս է, որ կը ճյուղավորվի հետզհետե և միայն զայն արմատախիլ բնելով է, որ կարգեւակվին նոր ճյուղավորումները, վերջ կը արվի նույն ինքն շարիքին...

Հրամայակա՞ն է արմատախիլ բնել մահաբեր այդ ծառը, որ կը սնվի արյամբ.

Աւատախիլ բնել՝

Սկսելով Տեր Զորեն...»¹⁰:

Իրավացի էր Գառնիկ Աղդարյանը:

Եվ ինչ լավ է, որ գոնե խնայվեցավ նրան տեսնել ու վրկան լինել ճյուղավորմանը շարիքին, որ 1988 թվականի փե-

⁹ Գառնիկ Աղդարյան, Տեր Զորեն Հիրոշիմա, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 39, 12 օգոստոսի 1984, էջ 8:

¹⁰ Նույն տեղում:

տըրվարին, իր իսկ ժողովրդի համար ունեցավ նոր անուն՝
...Սումգայիք:

Այո՛, հրամայական է արմատախիլ անել մահաբեր այդ
«ծառը»...

Նա, Գառնիկ Աղդարյանը, հավատում էր հատուցման և
արդարության գոյությունը: 1985 թվականի մայիսի 12-ին
գրած «40 տարի էտք» իր շաբաթօրյա զրույցներում կարևո-
րում էր ֆաշիզմի ջախջախման քառասնամյակը և ափսոսում,
որ մերը, մեր սպասվող արդարությունը ուշանում է դեռևս...

«Բայց պիտի դա...», — ասում էր նա, — թեև «կրնա ու-
շանալ տակավին»,

Բայց պիտի դա, ուշ թե կանուխ պիտի դա՝ անպայման,
վկա՝ քառասուն տարի առաջ Բեռլին մուտք գործած հայ
հաղթապանծ զինվորը,

Ուղեցո՛ւյց՝ ճանապարհը՝
Ավարայրեն ու Սարգսապատեն
Մինչև Բեռլին...»¹¹:

Այդ հույսն ու հավատքն է մղում նրան գրիչ բռնելու, այդ
հույս ու հավատքով ընկալվ նա՝ կտակելով ու ժառանգելով իր
իսկ սնուցած նույն հույսն ու հավատքը:

Նրա սրտի ու զրչի մեծ ցավերն էին դրանք, որոնց արան-
քում տեղ էին գտնում նաև «փոքրերը»: Փոքր թվացող մեծ,
սեփական ցավերը: Եվ դրանց մեջ նաև այն հողվածինը, որը
կրում էր՝ «Մխիթա՛ր, ո՞ւր է Ազգը...» խորագիրը:

«268 տարիներ առաջ, ի՞նք, շառաքյալը, դրավ սկիզբը
պատմական իր գործին, այնտեղ, Վենետիկի մեջ, հիմնեց
միաբանություն—պատվանդանը, պատվանդանին վրա բարձ-
րացավ շքեղ կառույցը Մխիթարյաններու, կապնի մըն էր՝ որ
արձակեց ճյուղերը, ճյուղերը տարածվեցան ամենուրեք—կե-
րևակայե՞ք, 1892-ին՝ Մխիթարյան վարժարան Մուշի մեջ, հա-

¹¹ Գառնիկ Աղդարյան, 40 տարի էտք, «Ազգային մշակույթ», Բեյրութ,
թիվ 78, 12 մայիսի 1985, էջ 8:

ջողջ տարիներուն նախադիմարաններ Առինչ, Նորշեն, Օղունք գյուղերուն մեջ, 1911—1912-ին՝ Մխիթարյան վարժարաններ Մերախնի ու Խարբերդի մեջ, ջարդեր կոտորած ու հայ վարժարաններու բացում, կղզի՞ էր միայն, լա՞ստ էր միայն, թե օրրա՞ն էր մշակույթի, հայ մշակույթի, խարո՞ւշկ էր, դոր Մեծն Մխիթարը վառեց 268 տարիներ առաջ, խարույկը արժարժվեցավ, բոցավառեցավ, ի հեճուկս բոլոր քամիներուն ու փոթորիկներուն, դարձավ փարոս՝ մտավոր մեր ճանապարհը լուսավորող, փոքր Հալաստան մը ամուր, հաստատ, մինչ մեծը կը հեծժեր արշունարբու բռնութեան լուծին տակ...:

Հիմա դյուրի՞ն է գովարանել, չափեցեք թե ինչպիսի՞ ողեշնշում, ինչպիսի մագնիսական ուժ էր պետք՝ որպէսզի այդ փոքր կղզին մեծնար, ահագնանար ու հմայեր օտարին անգամ, հմայեր Լորտ Բայրըն մը ու բազում, բազում ուրիշներ...»¹²:

Իսկ ի՞նչ էր պատահել... Պատահել էր այն, որ իր «մեկնումեն 236 տարիներ ետք...», տխո՞ւր, սրտաճմլիկ պատկերն էր Ս. Ղազարին, որը խաբեութեան և, միաժամանակ, անկարելի միամտութեան ջուրերը բարձրացել ու սպառնում էին քնկուղի իրենց մեջ...:

Ս. Ղազարը վտանգի տակ էր, մի կողմից՝ Մխիթարյան հայրերի հողային, գործառնական, տնտեսական, ֆինանսական անփորձութեան, մյուս կողմից՝ անհատների և գրամատների շահագործումների պատճառով: Տագնապը սպառնում էր դարավոր մշակութային օրրանին ոչ միայն առաքելութեան անխափան շարունակութեան, այլ՝ իր գոյութեանն իսկ:

Գառնիկ Աղդարյանը նշելով, ինչպէս տեսանք վերևում, Մխիթարի ու Մխիթարյանների եզակի գործի մասին, չրավականացավ միայն խոսք ու կոշերով, այլ անցավ գործնական քայլերի՝ Լիրանանում և սփյուռքի տարածքում հանդանակութեան մղելով նրանց, ովքեր պիտակցում էին, որ դա ա-

¹² Գառնիկ Աղդարյան, Մխիթար, ո՞ւր է Ազգը, «Ազգային մշակույթ», Բեյրութ, թիվ 67, 24 փետրվարի 1985, էջ 8:

ռաջին հերթին հանուն հայապահպանման, հայրենասիրական մեծ գործ է:

«Հրամայականը ա՛յս է հիմա», — գրում էր հրապարակագիրը և թելադրում. — «Ա՛յս է՝ Ամենայն Հայոց Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Հայ Կաթողիկե Պատրիարքին համար,

Ա՛յս է՝ ազգային-եկեղեցական մարմիններուն, բազաբական մշակութային կազմակերպություններուն, բարեսիրական մեծ միություններուն. բազում, բազում բազմամիլիոնատերերուն, հայ պարզ անհատներուն համար անգամ, ի սփյուռս աշխարհի...:

Ա՛յս է՝ ազգին համար,

Որպեսզի վաղը շուղովի ահա՛վոր հարցումը՝

— Մխիթա՛ր, ո՞ւր է Ազգը...»¹³:

Հողվածն ու հնչող կոչը դարձան վարակիչ, սկսվեցին փրկարար քայլերը, ի սփյուռս աշխարհի հանգանակությունները: «Ազգային մշակույթը» այս հարցում ևս ունեցավ իր դերը և տվեց իր լուման: Հայ մամուլի, օտար մամուլի, Փարիզում ստեղծված Հայ Մխիթարյան վարժարանների Միջազգային կոմիտեի՝ ՄԻՔԱՄ-ի կողքին՝ Գառնիկ Ազգարյանի ձայնը ևս նպաստեց գործի հաջողությանը: Կարևորը այստեղ հրապարակագրի անմիջական ու հստակ կողմնորոշումն էր, մի երևույթ, որ հատկապես հայ վարժարանների ճգնաժամային թույլեններին և մասնավորապես լիբանանյան դժնդակ տարիներին հաճախ էր հանդես գալիս և կողմնորոշիչ դեր խաղում: Գառնիկ Ազգարյանը ամենուրեք էր, ամենուրեք, որտեղ ի հայտ էին գալիս ազգային մեծ ու փոքր հոգսեր, որտեղ անհրաժեշտ կարիք էր դրացվում ազգու խոսքի և իրավարարության: Նման սահներին նա կարողանում էր վեր բարձրանալ իր սեփական սահմաններից ու լուծման կարիք ունեցող հարցերին նայել համազգային մտահոգությունների բարձրությու-

¹³ Նույն տեղում:

նից: Նրա կոչերի հասցեատերերը վկայում են միայն ու միայն այդ մասին: Եվ դա սփյուռքյան մեզ ոչ անձանոթ պայմաններում — հատկապես տվյալ տարիներին — ու կլիմայում առաջընթաց ու ինկական հայրենասերին վայել քայլ էր: Կեցվածք, որ նախքան 1988 թվականը և նախքան վերակառուցումը մեր կյանքում, այնքան էլ բնական հրևույթ չէր... Դըժբախտաբար, հուլյնիսկ մեզ համար:

ԲԱՆԱՍՏԵՂՈՐ

ՍԻՐՈՒ ԵՐԳԻՉՐ

Գառնիկ Աղզարյանի պոեզիայում համեմատաբար փոքրը ծավալ ունի սիրո թեման: «Բաժակ մը սեր» խորհրդանշական ենթախորագրի տակ այն տեղ է գտել միայն նրա

1954 թվականին Բեյրութում լույս ընծայված «Պատահելին վրա» ժողովածուի մեջ: Հետագայում, Երևանում (1957 թ.) լույս տեսած համանուն խորագրով հատորում, «Բաժակ մը սեր» բաժինը աննշան հավելում է կրել, իսկ հետագա հատորներում սերը գրեթե իսպառ բացակայել է: Դրա պատճառներից մեկը, երևի, ոչ առաջինն ու հիմնականը, եղել է այն, որ բանաստեղծը կլանված է եղել բուն քաղաքական կյանքով, պայքարի ու այլ առավել «հրամայական» թեմաներով և ինչ-որ տեղ երկրորդական է համարել պոեզիայի մեջ ամենապոետիկ թեմաներից մեկը.

Ես հայրերիս երգի, բերքի ժառանգորդն եմ հաղթական.
Բանբե՛րն հսկառա՝ գալիք լուսե դարերի:
Ես աճցյալի հեռկի, զիրքի պահապա՛նն եմ աննահանջ,
Երգի՛չը հուր՝ համայնական մարտերի:

Ու քեկուզ հեզ, քեկուզ զոդո՛չ, բայց հրդեհվող
բառերով,

Երգում եմ լոկ մասսաների համար ես,
Երկրի բոլոր բանվորներին, բոունցեհերին պալաւոդ.
Ե՛վ իմ անմահ ժողովրդիս համար վեհ¹:

¹ Գառնիկ Աղզարյան, Երգ՝ Երգերիս մասին, էջ 13: (Այս և հետագա բանաստեղծությունները վերցվել են «Պատահելի վրա» հատորից, Երևան, «Հայպետհրատ», 1957 թ.):

Բանաստեղծական այս պլատֆորմը, թվում է, հետին պլան է մղել անձնական թեմատիկան: Բայց մենք այն մըտքին ենք, որ, հակառակ ծրագրային այս մեքենաված տողերի—այդ մասին են վկայում նաև «Բաժակ մը սեր» բաժնի քսաներկու բանաստեղծություններից լավագույնները, դրեթե նըշված քանակի որակական մասը կաղմող կեսը— որ բանաստեղծը ապրելով իր իսկական, խոր, սիրառատ կյանքի տարիները, դեռևս հրիտասարդական ամենավառ տարիներում (1949—1953) «Հոգնել» ու «ուժասպառվել» է սիրուց ու նրա բերած հուսաբեկումից: Այս տարիների սերը, «ուշացած» նաև, հանդիսացել է կյանքում անմոռանալին, նրա առաջին սերը: Գոհար Ոսկերիչյան է կոչվել այն աղջիկը, որին ուժգնորեն սիրել ու նվիրվել է բանաստեղծը, սիրել ու նվիրվել նշված տարիներում և «հուսաբեկումից» հետո մի ամբողջ կյանքի համար չի մոռացել նրան: Նվ այս՝ հակառակ որ սիրուց զուրկ չի եղել նաև նրա ողջ կյանքը, սիրով, սիրո հիման վրա է կնքվել նաև նրա ամուսնությունը, բայց առաջինը մի ամբողջ կյանքի համար եղել ու հանդիսացել է «անխոստովանելի» առաջինն ու վերջինը:

Ողբերգական մի երանգ կա այս բոլորի մեջ, և այդ ողբերգական երանգը փոխանցվել է բանաստեղծի ողջ քնարին՝ սիրո այրող կարոտը միշտ, կարմիր թելի նման անցկացնելով նրա այլևայլ թեմաներով գրված բանաստեղծությունների միջից: Նրա յուրաքանչյուր բանաստեղծություն սիրո արդյունք է, անձնական սիրո, իհարկե, բայց նաև ներքին այն անխոստովանելի, անթեղված անձնականի կայծով բռնկուն: Անձնական թաքցրած ցավից դեպի անանձնականը, անձնական ցավ ու հոգսերի սաստկությունից՝ դեպի ընդհանրականի մղումը:

Բայց նախ այն անձնականի, այն առաջին սիրո մասին, որ Գառնիկ Ադգարյանի բանաստեղծություններում հանդիսացավ նրա առաջին ձեռքբերումները և ձեռքբերումները նաև սփյուռքահայ հիմնական թվականների բանաստեղծության մեջ: Ճիշտ է, այնտեղ դեռևս զգալի էին Վահան Թեքեյանի

և Թեքեյանից Վահե-Վահյանին փոխանցված ալանդները՝
զգալի հետքերը, բայց այդ հետքերն ու ազդեցությունները
մեկնաբանվել էին նորովի՝ լինելով անկեղծ, ապրված հաս-
կապես և ոչ ձեռքբերովի:

Կարունի՞ն հետ, զարունի՞ն պես, սե՛ր ծաղկեցաւ
սիրտիս մեջ:

Առիւ ձեւերն արեւահոդ՝ սյդ վեհանո՛ւյշ աղջկան,
եղար հուզում ու մաւծում ու նվիրո՞ւմ անբեղմեջ.
նվ իմ հոգիս՝ ի՛ր հոգիին կապող ոսկի՝ ծիածա՛ն:

Սուաջի՛ն սեւ, ի՞նչն էր որ բեզ՝ զարնանաշունչ իւ
սիրտե՛ն՝
Ռեւալ սիրտիս իմ ծաւալի, որ փոքրեկե՛ց զայն
այսպե՛ս:

Ինչո՞ւ ամեն աղվորի դեմ ես խնդացի տարփոքն,
Ու լոկ աղջիկն այդ երազուն՝ բացալ երազն ինձմե
հերս?:

«Ինչո՞ւ ամեն աղվորի դեմ տարփոքնն խնդալով հան-
դերձ, լոկ այդ աղջիկը բացալ երազն ինձմե հերս»: Երազը-
այո՞, համենայնդեպս ոչ շոշափելին, այլ՝ երեակայվածը...
այսինքն այն, որ բացվող գալիք դուռն է... ողբերգության:
Բանաստեղծը 1949 թվականին գրած վերահիշյալ տողե-
րից հետո, արգեն երկու տարի անց, 1951 թվականին, հարց
է տալիս, կամ ստիպված է լինում հարց տալ ինքն իրեն.

Իմ այսօրիս մեջ խուժող
դուն արյո՞ւնն ես բոցավառ,
քե՞զ զիս վաղվան կամբռող
սլայֆարի տենդը անմար:
Ի՞նչ ես, ի՞նչ ես, ի՞նչ ես դուն,
—սե՛ր, խնդրոյո՞ւն, զարո՞ւն, կյա՞նք,
քե՞զ բոլորին միաբնակ
ու բոլորեն ավելի՛
Մեծ, բայց անգո ու աննյութ՝
Միտքի սպառանք մը միայն...³:

² Սուաջին սեւ, նույն տեղում, էջ 89:

³ Բյուրեղացում, նույն տեղում, էջ 91:

«Ի՞նչ ես դուն, առաջին սեր, կարելի՞ն, թե միայն անկարելին, միջոց...», զիս վաղվան կամբջող պայքարի որպես տե՞նդ», թե՛ «անգո և աննյութ պատրանք մտքի»։ Թվում է՝ կյանքում հաճախ հաղթանակել է երկրորդը, բայց թողնելով բոցավառված արյան հետևանքը, սիրահարվածին, իհարկե՝ իսկականներին, մղելով իր իսկ անունով անմար պահել արյան պոռթկումը և դա, շմոռանալով ակը, տեղափոխել կյանքի այլ բնագավառներ։

Գառնիկ Աղդարյանը իր պատմեցնների վրա հեռվից միշտ վառ պահեց նրա կերպարը, նրա կերպարի պարզևած խընդոթյամբ նետվեց պայքարներով լի իր կյանքի հետագա տառնամյակների մեջ։ Չմոռացավ նրան, հակառակ այս վերջինի՝ նկատմամբ այն եզրակացության, որ միայն ու միայն «մտքի պատրանք» էր նա։ Այսինքն՝ սերն էր, որ կար ու չկար կյանքում։

Ինչքա՞ն ալ դառն րլլան օրերն՝ ևս պիտի քեզ սիրեմ
նորեն,
Ինչքա՞ն ալ կյանքն րլլա տխուր՝ ևս պիտի քեզ սիրեմ
նորեն,
Օր մը եքն դուն գիս լքես, դուն գիս մոռնաս
ամբողջովին,
Հին օրերու խնք տղուն պես՝ ևս պիտի քեզ սիրեմ
նորեն⁴։

Գոհար Ոսկերիչյանը, թվում է, հաստատեց 1952 թվականին գրված այս տողերը։ Սերը մնաց «անկատար», չհասավ իր վախճանին. բանաստեղծի կանխագուշակումը ճշմարիտ դուրս եկավ, միայն այն տարբերությամբ, որ տառնամյակներ անց, հակառակ ճամփաբաժանման դառն հետեւվանքներին, կողմերը շմոռացան առաջինին։ Չէ՞ որ այդ սերը երկուսի համար էլ առաջինն էր։

Ականջիս մեջ ես կտանիմ ձայնդ բարի,
Աչքերուս մեջ աչքե՛րդ եմ որ կը բարախեմ,

⁴ Աշուղական, նույն տեղում, էջ 96։

Երբ կը քարտէ մամփաներն եւ պայքարի.
Կողմիս դուն ես, իմ սիրելիս, դուն ես նորեն⁵:

Գառնիկ Ադդարյանը վաղ վախճանվեց, հիմա «ձայնը բարի», որ նրանն էր, չի հնչում բանաստեղծի հոգու մեջ, բայց բանաստեղծի ձայնն ու տողերը շարունակում են հնչել արդեն նրա, մնացողի ականջներում.

Մահը նույնիսկ՝ կարծես հիմա կը նահանջի
Սիրո աչս մեծ աչս հաւանո՞ւմ գործըյան դեմ⁶:

Միթե՞ անկատար մնացած այդ սերը սերն էր մեծ, որ նույնիսկ պարտադրում է նահանջել մահվան. Երեւի՝ ճիշտ էր բանաստեղծը. նույնիսկ անկատար, նույնիսկ ընդհատված, երեւի հատկապես ընդհատված սերերը, եթե առաջինն են կյանքում, «ամենամեծերն» են, որ կան: Բանաստեղծը զիտակցել էր այդ, և դրա համար, երեւի, իր առաջին սիրուն նվիրված սիրո բանաստեղծութիւններէից հետո աչքես չգրեց սիրո մասին:

Մեծ սերերը նաեւ լուսնայուն են սիրում:

«Երգում եմ լոկ մասսաների համար ես»:

Այս տողը ընդգրկող մեզ ծանոթ բանաստեղծութեան տակ նշվում է 1954 թվականը: Այսինքն՝ այն թվականը, որից մի տարի առաջ բանաստեղծը զրեթե վերջակիտեց իր «սիրո գիրքը»: Վերջակիտեց, բայց նրեանում լույս բնծայված իր «Պատնեշին վրա» հատորի «Նախերգանք»-ում երգեց նաեւ հետեւյալը.

Ապրիլ հիմա
Գիշերին մեջ դեմք մը փնտրող սիրահարին
Ցաւն անսահման,
Եվ ցավին դեմ՝ բազմակներու պես երկարող
Լսել սիրտիս ե՛րգը կարոտ:

Այլ հիմա լոկ.
Օրերուն դեմ աչս քաղաքացու

⁵ Նույնացում, նույն տեղում, էջ 97:

⁶ Նույն տեղում:

Գիրքս տանի՛լ իբրև դրսշ,
եվ արյան մեջ քե հաղթությամբ՝
Ձայն տեսնել միշտ բա՛րձր ու վեհ,
Միշտ պատենշին վրա՛ այս մեծ⁷:

..Իսկ յուրօրինակ այդ դրոշի ծալքերում, ո՞վ կարող է պնդել, որ չկար... Նրա, միայն բանաստեղծի կողմից տեսանելի նկարը:

«Մենք միասին՝ պիտի ապրենք դաբեր գուցե»:

Ասացիր, որ Գառնիկ Ադդարյանի սկզբնական տարիների բանաստեղծություններում, որոնք հատկապես համընկան իր սիրո պոեզիային, կար Վահան Թեքեյանի զգալի ազդեցությունը, և այս ոչ թե նրա համար, որ սիյուդալահայ քրեարերգության մեջ Վ. Թեքեյանը հանդիսացավ մեծ սիրերգականներից մեկը և նաև առաջինը, այլ նաև նրա համար, որ այս վերջինը վարակիչ դարձավ հասակ առնող սերունդների համար, դարձավ այս վերջինների ուսուցիչը: Նրա շատ սիրային բանաստեղծություններ անգիր էին արվում դեռևս դպրոցական գրասեղաններից: Վահան Թեքեյանի նշանավոր «Անունդ» բանաստեղծությունը դրանց շարքում էր.

Ինչու՞ անունըդ այստեղ չըկարենամ գրել ես
եվ աշխարհի չըհայտնեմ քե քեզ ինչպես սիրեցի...
Երկու վանկերը անոր ես կը գուցեմ գաղտնապես
եվ ան ամբողջ կը քվի սիրո մատյան մը ինձի...
Ինչու՞ անունըդ այստեղ չըկարենամ գրել ես...

Հիմա հեռու իրարմե՝ միայն անունըդ ունիմ
Ռեհնիս վրա, համբույրի մը պես աննյութ և անուշ...
Գիշեր ատեն սենյակիս մենուքյան մեջ մտերիմ,
ես գայն կըսեմ և անա քեզ կը տեսնեմ քաղցրահուշ...
Հիմա հեռու իրարմե՝ միայն անունըդ ունիմ...

Գառնիկ Ադդարյանը չկարողացավ դիմագրել փորձություններ. կար իր սիրած անունը՝ նույնպես երկվանկանի և նույնքան դադտնի պահել ստիպված, գոնե հրապարակա-

⁷ Նույն տեղում, էջ 10:

նությունից զրկված մի սեր՝ ժամանակահատվածի հետամը-
նաց բարքերի որպես արգասիք: Եվ գրեց, բայց ստացվեց
վ. Թեքեյանի «Անունդ»-ի անմիջական արգյունք ոչ հաջողված
մի գործ, շահեկան միայն նրանով, որ «մատնում» էր հերո-
սուհուն և մի անգամ ևս ցույց տալիս բանաստեղծի... «կա-
րոտի կանչը...»: Ոչ հաջողված մանավանդ նրա համար, որ
գրեթե նույնիմաստ տողեր էին, բայց ո՛չ այն պարզության
հանճարեղությամբ, որ վ. Թեքեյան բանաստեղծինն էր: Ու-
սուցիչը մնաց անգերադանցելի և մնաց ոչ միայն ներկա
դեպքում, այլ ընդհանրապես: Ահա և Աղգարյանի «Անունի
մը համար»-ը:

Երկու վանկեր, դողդոջուն՝ շրթներուս դեմ կարտավեն,
Երկու վանկե՛րն անունիդ՝ ամբողջ երա՛գ և համբույր,
Գիշերին մեջ անվախճան՝ ֆեզ կը կանչեմ ես նորեն,
Ու լոռւքան ժայռին դեմ կը փշրվի ձա՛յնս կույր:

Երկու վանկեր դողդոջուն հիմա բերնիս դեմ կուլան,
Երկու վանկերն անունիդ, իմ սիրելի՛, իմ ազվո՛ւր.
Ա՛հ, գիտնայիր այս պահուն քե կը սիրեմ ֆեզ ինչքան,
Ու սիրույս մեջ լսելի կարոտիս կանչը հզոր՝:

Գառնիկ Աղգարյանը, այնուամենայնիվ, իր սիրո կան-
չի ահադնության, սիրո տարիների քաղցր մոռացության գոր-
կում նույնիսկ չէր կարողանում ներամոփոփվել միայն երազ-
ների աշխարհում: Ընդհակառակը, սերը նրա երակներում խը-
թան էր հանդիսացել ավելի կրքով փարվելու իր քաղաքական
պայքարին, և իսկապես անկեղծ էր, երբ գրեց... «Անդրադար-
ձը», և այս՝ դեռևս 1949թ., սիրո առաջին տարվա ընթացքում:

Աչքերուն մեջ բոլորին՝ բայց կը տեսնեմ ես նորեն
Թշվառության աչքը կույր, որ կը նայի մանվան պես՝
Մահուկներուն նորածին ու ժպիտի՛ն անոնց ֆեզ:

Սե՛ր իմ, սե՛ր իմ, դուստր դեռ կյանքը կու լա ի՛ր
ցավեն,
Ու չեմ կրնար ես ֆեզմով, ֆեզի՛ համար լոկ ապրիլ...
Ձիս պայքարին կը կանչե կյանքին քաղվող ամեն ծիլ...⁹

⁸ Նույն տեղում, էջ 104:

⁹ Նույն տեղում, էջ 109:

«Պայքարի այդ կանչը», ի վերջո, բալասան հանդիսացավ, երբ մարեց «կարոտի կանչը»: 1953 թվականին սերը դարձավ... «Տեսիլք», մեզ ու մշուշ, ահադնացող վիշտ, երբ չկար նա՛ն նրա «ձայնը բարի»:

Չկաս, չկա՛ս դուն նիսա, ու տեսիլք ես միմիայն,
Ինչպե՛ս կրցա ես խաբվիլ, կարծել որ դուն ես նորեն,
Կարծել, որ սերս կրճա վերապրիլ պա՛ն մը անգամ,
Ինչպե՛ս տեսա քեզ այսօր. երբ դուն անցյալ ես արդեն:

...Քեզ տեսնելու համար ես՝ լոկ ինձմե՛ն նե՛րս նայեցա¹⁰:

Արդեն ձեռք էր բերվում որակը, իսկական տառապանքը բանաստեղծի ձայնը ինքնուրույն էր դարձնում, իսկական հոգևոր ճակները իրենց հակասականության մեջ ավելի համոզիչ էին, առավել մարդկային և, հատկապես՝ բնական ու իրավ: Արդեն խոսվում էր «հիշատակ» դարձած սիրո մասին և նաև հիշատակը դժվարին դոտեմարտով հաղթահարել կարենալուե կամք ու համոզվածության մասին:

Բայց պիտի վաղն անպայման ես անցյալիս դեմ
կանգնիմ,
Ու գոտեմարտը պիտի բլլա Երկա՛ր, ահավո՛ւր,
Իմ դառնությանը զբաժնած հոգվույս համար վերածին՝
Հիշատակները պիտի բլլան լոկ քույն մը անգոր:
Հիշատակնե՛ր, ձեռ վերջին հաղթերգությունն է
այսօր...¹¹:

Թվում է՝ արդեն վերջ սիրո տառապանքին: Բայց ի՞նչ սեր կարող էր լինել, երբ բառերի վրա հիմնված համոզվածություն էր ուղում վերջակիտել ամեն ինչ: Երբ ընդունելով հանդերձ հիշատակների թունալի լինելու հանգամանքը՝ այս վերջինը հայտարարվում էր... անգոր:

«Տղամարդավարի» այս կեցվածքը, հատկապես լողուն-դային «Ձեր վերջին ողբերգությունն է այսօր»-ով, մի՞թե պը-

¹⁰ Նույն տեղում, Տեսիլք, էջ 111:

¹¹ Նույն տեղում, Հիշատակներ, էջ 112:

լակատային չէր, իսկ ո՞ւր պետք էր թողնել մարդկային, առավել ևս՝ բանաստեղծական սիրտը, որ քիչ անգամ է հպատակվում բանականությանը: Այն էլ՝ երբ սերն էր, խոր ոճ մեծ սերը խնդրո առարկան: Գառնիկ Աղզարյան բանաստեղծը, այս հարցում ևս իրեն պահեց տղամարդավարի, բայց ոչ սլակատային դիմակով ու կեղծ «հերոսականությանը»: Այդ ուղղությանը նրա «խոստովանանքը» խոստովանանք էր իրավ մարդու ու բանաստեղծի, որին կարելի էր հավատալ և սիրել: Այդ անկեղծությունն էր նաև, ինչպես այլ թեմատիկ, այնպես էլ սիրո բանաստեղծություններում առաջնայինը:

Նույնիսկ երև ևս քսեմ քե մոռցա քեզ վերջապես
եվ ոչ մեկ հուշ կա՛րքնես ա՛լ հոգիիս մեջ հիմա,
Նույնիսկ երև վերստին օր մը խնդամ, սիրե՛մ ևս,
եվ ավերուս դեմ՝ շուշան աղջիկ մը սիրտն իր բանա,
Նույնիսկ երև ևս պոռամ քե երջանի՛կ եմ արդեն,
Գիտցիր քե սերն առաջին՝ առաջին նի՛շն է՝ մարդուն,
Ու ծերության մեջ անգամ՝ կը մրմնջե մարդ նորեն՝
Իւ անցյալին մեջ ապրող մանուկի ե՛րգը տրտում¹²:

Բանաստեղծության վերջին տողերը կանխագուշակումներ էին, իհարկե. դեռևս այս բանաստեղծությունները, որոնք երկուսն էլ գրվում էին 1953 թվականին, իրենց հակասականության մեջ ունեցած միասնականությանը, իրար ժխտելով, բայց նաև կյանքն իսկ հաստատելու միտումով խոսում էին և՛ «լսովի», և՛ ապրված փորձությունների մասին:

Բայց հետաքրքիրը նաև կանխագուշակումների ճշտությունն էր, որ իրական դարձավ «Շուշան աղջիկով», որ կոչվեց Արփիկ և դարձավ բանաստեղծի կինը և նաև նրանով, որ բանաստեղծը երբեք չշարժաց, թե երջանիկ է ինք»: «Պողալու» կարիք էլ չկար, չէ՞ որ դա չէր սաղի բանաստեղծին, նրա... անկեղծությանը: Մնում էր մի հարց. ինչպե՞ս պատմել գալիք «շուշան աղջկան» իր «անցյալին մեջ ապրող մանուկի երգը տրտում»: Գտնվեց և այդ բանաստեղծությունը և խորագրվեց... «Նավահանգիստ»:

¹² Նույն տեղում, էջ 113:

Պիտի ինչպե՞ս ես անոր պատմեմ սերս իմ առաջին,
Որ այլեցավ անբեղհատ և դարձավ ափ մը մոխիր,
Ինչպե՞ս պիտի ան զգա քե մոխիրին տակ այդ հին՝
Իմ սիրտս կա անքեղված՝ որ կրհա դեռ բռնկիլ¹³:

Որ կարող էր դեռ բռնկիլ... ճիշտ էր նաև դա:

Որ սերն առաջին դարձավ «ափ մը մոխիր», երևի, առա-
վել ճիշտ կլինե՞ր, ինչպես շարքի խորագիրն էր ասել՝ «բա-
ժակ մը սեր», բայց ամենաճիշտը, ինչպես ցույց տվեց ժա-
մանակը, շարքի վերջին վերոհիշյալ «նավահանգիստն» էր:

Գառնիկ Աղդարյան բանաստեղծի սիրտը՝ «Սիրո նա՞վն
է իմ հոգիս», «հանգրվանեց... նավահանգստում» և այլևս,
դժբախտաբար, խառիսխ չվերցրեց այնտեղից... Թվականը
1954-ն էր:

¹³ Նույն տեղում, էջ 115:

ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Գառնիկ Ազգարյանի առաջին «Պատենշին վրա» ժողովածուն շատ բանով էր բնութագրական նրա ողջ գալիք ճանապարհի համար: Այդ հատորում բանաստեղծը իր բաղմակի կողմերով ու միտումներով, կարծես, ինքն իր անձը զրեց մարդկանց... «ափի մեջ»: Դրեց այնպես, ինչպես ինքն էր, և մնաց մի ողջ կյանքի համար: Մնաց՝ չգրժելով իր հավատքին ու էությանը: Եվ եթե սիրո մասին իր բանաստեղծությունները վերջապիտվեցին հենց առաջին խսկ զրքում, ու հետագայում մենք չկարողացանք հետևել նրա զարգացմանն ու վերիվայրումներին, ապա բանաստեղծի ու քաղաքական գործչի կյանքին, այս վերջինի վերընթաց ուղուն և դիրքորոշմանը նույնպես ծանոթ դարձանք նույն այդ առաջին դրքի ծրագրային բանաստեղծություններում:

Քաղաքական հանդանակները չգրվում են մեկ անգամի համար, երբ հանդես է գալիս մարդը, բանաստեղծը, քաղաքական գործիչը հասարակության առջև: Եվ հասարակությունը կա՛մ ամբողջովին ընդունում է իր «թեկնածուին», կա՛մ երես թեքում նրանից: Գառնիկ Ազգարյանը ընդունվեց սիրով ու անցնող տարիների հետ կրկնապատկվող, բաղմապատկվող սիրով մնաց ընթերցող հասարակության հոգու մեջ: Դրա պատճառն այն էր, որ գծված ու ներկայացված հանդանակը ու նրա հեղինակը միշտ մնացին տրված ու գծված ուղու վրա: Մի խոսքով՝ պայքարի մարտական դիրքերի վրա: Խսկ այդ դիրքերը արդեն պարզ ու հստակ էին «Պատենշին վրա» հատորի երևանյան «Նախերգանք»-ում:

Զգա՛լ հիմա,
Որ բանվորի ձեռք մը բարի՝
Վազր պիտի քերթե հոգիս ամեզրական,
Ամեն էջի մեջ գտնե կո՛չ մը պայքարի,
Նվ բառերուն հետ գրոհող՝
Դառնա բոունցք ամենագոր։

Յուրաքանչյուր էջի մեջ «կո՛չ մը պայքարի» և այդ «պայքարի կոչը» մարդկային ու հայ կյանքը ընդգրկող հասարակական ու քաղաքական բոլոր ճակատներում՝ միտում ու նըպատակ ունենալով հետևյալը.

Նա՛ իմ երգը, ողջ աշխարհի մարդկա՛նց համար է
ծնվում.
Ու զոհվում է մարդկանց համար – զոհվի՛ր քող.
Թող բարձրացող իմ սերնդին տանի առաջ պայքարում,
Ու պատենշին վրա իյնա ես մի օր²:

Դառնիկ Աղդարյանը հավատացած էր, որ հայ քաղաքական և նաև հասարակական կյանքի շատ կնճռոտ հարցեր անմիջականորեն կապ ունեն միջազգային հարցերի հետ և դրանց լուծումները, ոչ քիչ անգամ, շաղկապված են այս վերջինների ընթացքի հետ, կախում ունեն այս վերջինների լուծումներից։ Գիտեր, որ հայ ժողովուրդը, նաև սփյուռքում, կապված է մարդկությունը հուզող խնդիրների հետ և չի կարող հանդես գալ մեկուսացած վիճակում և առանձին միավոր որպես։ Իհարկե, այս բոլորը չէին նշանակում «Ամերիկա հայտնարերկ»։ Ժամանակաշրջանը ետպատերազմյան անմիջական տարիներն էր, և մարդկության մեծ մասի համար, հատկապես աշխարհում դեմոկրատական վերելքի այդ տարիներին, շատ բան պարզ ու հստակ իր տեսքն ու ուղղությունը ուներ։ Զհաշված, որ համաշխարհային գրականությունում և նաև սփյուռքահայ գրականության մեջ, նախքան համաշխար-

¹ Դառնիկ Աղդարյան, Նախերգանք (այս և հետագա բանաստեղծությունները վերցվել են «Պատանշին վրա» հատորից, Երևան, «Հայպետհրատ», 1957 թ.), էջ 9։

² Նույն տեղում, երգ՝ Երգերիս մասին, էջ 13։

հային պատերազմի ավարտը, դեռևս Երեսուն-քառասնական թվականներին ոչ քիչ անուններ և նրանց երգերը հենց նույն միտման կրողներն էին եղել և նաև ղոհվել էին «մարդկանց համար» և «բարձրացող սերունդներին» տարել առաջ պայքարում: Այդ անունների առաջին շարքերում էին Վազգեն Շուշանյանը, որպես բանաստեղծ ու արձակագիր, Ա. Սեման (Գեղամ Աթմաճյանը), Լասր (Լուիզա Ասլանյանը), Միսաք Մանուշյանը, որոնք ընկել էին նաև պատմեհների վրա, վերջին երկուսը՝ գերմանական ֆաշիզմի ճիրաններում, և ուրիշներ, որոնք շարունակում էին ապրել ու մնալ... պատմեհների վրա: Այս վերջիններից էին հատկապես Զարեհ Որբունին, Բյուզանդ Թոփալյանը, Հակոբ Գույումճյանը և ուրիշներ: Խոսքը այստեղ ետպատերազմյան սերնդի մասին էր և նրանց զործը շարունակող, առավել բացահայտ ու ուղղակի խոսքով հանդես եկող, նշված անունների կտակած ավանդները յուրացրած երիտասարդ բանաստեղծի, որ Գառնիկ Ադդարյանն էր:

Այո՛, այդ ամենը դալիս էին անցյալից, անցյալի հին ու նոր արմատներից և շարունակում էին հարատևել դեպի... գալիքը: Ամեն ինչ իր բնականոն հունի մեջ էր: Գառնիկ Ադդարյանը որսաց ժամանակաշրջանի հեքը և արձագանքեց դրան «Ես գալիքն եմ» բանաստեղծությունում:

Ով որ կույր է,
 Ով որ ունի միայն մշուշ աչքերուն մեջ,
 Ով որ իր ջերմ մատներուն տակ
 Ջի հաջողի քերքել գալիքը էջ առ էջ,
 Ով որ հոգվույն դռները միշտ կը պահե փակ
 Ու ծով կյանքեն այս անհատակ
 Կառնե միայն քիչ մը մեմունջ ու պղպջակ,
 Ով որ հիմա կը խաբիափե խավաբին մեջ
 Տրտում ու վատ,
 Ով որ կույր է ու հուսահատ,
 Ինձի՛ բող գա:
 Բույր աչքերով Ես կը տեսնեմ հիմա արդեն
 Վաղն արևկա:
 Մատներուս տակ կապրի ահա

Գալիֆն ինչպես սիրտ մ'աղչկա:
Ու կը մոռնամ անցյալը մութ,
Այսօրն հղի...
Ես գալիֆն եմ...³

... Շարունակվող ավանդների մեջ, ինչպես արևմտահայ և սփյուռքահայ, նույնպես մեծ էր դերն ու տոկոսը արևելահայ պոեզիայից ժառանգված գեների, և այդ գեների մեջ մասնավորապես Նզիշն Զարենցի, որի բարերար ազդեցությունը մեծ եղավ Գառնիկ Աղդարյանի վրա: Բանաստեղծ, որի տողերի տակ, հետագայում հատկապես, իր բաժինն ունեցավ ուղղակիորեն նաև... Պարույր Սևակը: Իհարկե, ծրագրային այս բանաստեղծությունների շարքում բանաստեղծին երբեմն դավաճանում էր կյանքի զգաստ ընկալումը, մղում նրան պայքարի ծայրահեղ ու ոչ բնական ընթացքի մեջ, եղրակացնելով, որ,

Ապրիլն ի՞նչ է, Եթե ոչ վազե՛լ, կովի՛լ, մաֆառի՛լ,
Մոռնալ ծաղիկ ու քիթեռ, շսեկ կանչը գարնան,
Մինչև որ կյանքը բանա լայնախարիսխ դուռն իր՝
Քու ֆայլերուդ, ֆայլերու, ֆայլերո՛ւն դեմ

մարդկության:

Աղվո՛ւր, աղվո՛ւր է ապրիլ վաղվան համար

մանավանդ...⁴

Այս տողերը գրվել էին 1950 թ., այսինքն այն թվականներին արանքում, երբ գրվեցին բանաստեղծի սիրո երգերը՝ «Գարունի՛ն հետ, գարունի՛ն պես, սե՛ր, ծաղկեցար սրտիս մեջ»: Այս տողը հատկապես՝ 1950 թվականից էլ մի տարի առաջ: Ինչպե՞ս կարելի էր կյանքի վաղը ու կովի մեջ մոռանալ «ծաղիկ ու թիթեռ, շսեկ կանչը գարնան»: Դա, ինչ խոսք, անբնական էր և տուրք նույնպես ժամանակաշրջանի ձախուժյանը, որ երբեմն մոռանալով մարդ էակին, նրան դնում էր շինծու կադապրների մեջ՝ հանուն լողունգային ու պլակատային պոեզիայի, որ նույնպես իր «ավանդներն» ուներ, ձախուժյան հի-

³ Նույն տեղում, էջ 15:

⁴ Նույն տեղում, Ապրիլ, էջ 19:

վանդությունից եկող ավանդները, որոնք բարերախառբար քիչ եղան Գառնիկ Աղդարյանի բանաստեղծություններում: Իսկ այն մասին, թե «աղվոր, աղվոր է ապրիլ վաղվան համար մանավանդ...», իհարկե, ճիշտ էր, եթե չէր մոռացվելու այն ճշմարտությունը, որ մարդկային կյանքի առջև դրված այդ հաստատումը երբեք չէր բացառել այսօրվա, ապրված կյանքի... «աղվորությունը», ինչքան էլ ապրվածը դառն ու դաժան լիներ: Գառնիկ Աղդարյանը շուտ հասավ «իմաստության», ուղղեց իր «սխալը» և գտավ, որ վաղը, գալիքը այլ բանի համար է տրված մարդուն, հատկապես պայքարող մարդ ու մարտիկին: Ապրելը նաև... «Մենքիլ գիտնալ է քիչ, քիչ»⁵, «Հոգին այրել ամեն ժամ, ու մեկնիլ օր մը հանկարծ՝ ծափերուն տակ գալիքին»: Ուղղից և այդ ուղիղ ճանապարհով էլ քայլեց իր կյանքում՝ «օր մը հանկարծ՝ ծափերուն տակ գալիքին» իրավամբ ու բառացիորեն... «մեկնելով»: Առաջին օրից մինչև վերջը պայքարի մարտական դիրքերում գտնված բանաստեղծի ուժը և իր գործի նկատմամբ ունեցած «վստահությունը» Գառնիկ Աղդարյանը բացատրում էր աշխատավոր մարդկության ու զանգվածների ունեցած ուժ ու վստահությամբ.

Բառաբանին մեջ օրերուն խոր է իմաստը բառերուն,
Երբ կրեսն շես» - ժողովուրդն է ու կը կանգնի
բանակի պես.
Մեռնող հինին դիմաց անող հորն եմ վերտ ու
վառարուն,
Ես՝ աշակերտ համեստագույն, և ուսուցիչ
պայծառատես:

Ժողովուրդն էր նրա թիկունքին, և ինք՝ «համեստագույն աշակերտն» ու «պայծառատես ուսուցիչը» միաժամանակ, լինելով մասնիկը իր իսկ ժողովրդի ու մարդկության, հավատում էր, որ «գալիքը» իր ու իր ժողովրդինն է լինելու, իսկ ինչ վերաբերում է այդ «գալիքի» ճանապարհները ականոդ-

⁵ Նույն տեղում, Իմաստություն, էջ 20:

ներին, նրա ընթացքը խանգարողներին, նրանք լինեին ար-
յունակից թե օտար, արժանանում էին նրա «Ատեղությանը»:
Այդ բուն «ատեղության» դրսևորումն էր հենց «Ատեղություն»
բանաստեղծությունը.

Բառերն ընել հիմա բոունցմ անպարտեղի,
Ու չախշախել, փշրել բոլոր զանգերը մութ,
Ու կը դավեն մեր կյանքին դեմ:
Բառերն ընել դաշույն վսեմ
Ու խրել զայն կոկորդին մեշ պիղծ ու դաժան
Անոնց՝ որ մեր երակներեն կառնեն սնունդ
Ու կը խնդան երե մենք լանք:
Բառերն ընել հորձանք անել
Ու տապալել. տանիլ բնդմիշտ
Երեկն անշունչ.
Այսօրն հիվանդ,
Ու զալիքի դռներուն դեմ դեռ կապկանծող
Ոհմակն անսանձ:
Բառերն ընել հրդեհ անհուն
Ու հրկիզել, այրել հե՛տքն իսկ անարձագանք
Ձեր բայերուն:
Բառերն ընել – ատելություն:

Բառերն ընել հիմա չվան կախաղանի,
Եվ օրորվող դիակներուն դեմ ձեր անարգ՝
Երջանկության երգ մը երգող
Քերթողն բլլալ⁶:

Բանաստեղծի (քերթողի) ծրագրային էջերը, ինչպես սի-
րային, սահմանափակվեցին առաջին գրքի սահմաններում:
Երկրորդի պարագայից անկախ, ծրագրային բանաստեղծու-
թյունների վերջակիտումը հասկանալի էր նաև: Ընթերցողը
այլևս գիտեր նրան. նրա պայքարող պոետիայի այլևայլ ե-
րևանները որպես հրատապ, լուծում պահանջող հարցեր, ի
հայտ եկան տարբեր, հետագա ժողովածուներում և դրանց
մեջ առաջինը, որպես սեփական ժողովրդի ամենաառաջնա-
յին, կենսական հարցի... ազգապահպանման, հայապահպան-

⁶ Նույն տեղում, Ատեղություն, էջ 39, 42:

ման խնդրում: Հարցերի հարց, որ բանաստեղծը աշխատում էր լուծել ոչ թե ազգայինի նեղ սահմանների մեջ, այլ մարդկային ու մարդկության կյանքի ընդհանուր հոլովույթում՝ հրբեկ շղիջելով իր ծրագրային դրույթներից և, իհարկե, շատ բան վերանայելով իր երիտասարդական տարիների ընթացքում սնուցած զգացումներից և նաև «Ատելութունից»: Դառնալով արդեն իսկապես «ուսուցիչ պայծառատես» և համովելով, որ նույնիսկ դաժան թշնամու դեմ «կույր ատելութունը» կովի ու պայքարի այն զենքը չէ, որ ուղեցույց պիտի լինի և՛ ազգային, և՛ նաև համաշխարհային հարցեր լուծելիս: Եվ ի պատիվ բանաստեղծի հարկ է ասել, որ նա այդ հարցում սփյուռքահայ գրողների մեջ հզավ այն առաջիններից մեկը, որոնք պիտակցեցին, որ էականը հաշտարար ոգին է և դա, ով էլ լինի ախոյանը, կարողանալ իրագործել: Ինչից էլ ծագեն դրդապատճառները, չի կարելի, անհնար է բառերը վերածել «կախաղանի շվանի» և առավել ևս այդ բոլորից հետո «երջանկության երդ մը երգող քերթողն ըլլալ»: Մանավանդ որ Գառնիկ Աղգարյանը մարդկային երջանկության հիմնաքարերից մեկը համարում էր խաղաղութունը և նրա հաղթանակի համար տարված անդիջում պայքարը և այս՝ դեռևս իր ստեղծագործության առաջին տարիներից.

Բայց բանվորի ձեռքեր հուժկու՝ իրենց մեջ տե՛ղն
 աշխատանքի.
 Հողին վրա կյա՛նք ակոսող շինականի ձեռքեր անխոնջ,
 Բռնության դեմ պատենք կանգնող հերոսներու ձեռքեր
 արի.
 Ու խավաբեն լույս հուրինող բանաստեղծի ձեռքեր
 րմբոստ,
 Նո՛ւյն պայքարեն, նո՛ւյն երազեն առած հավատք ու
 զորություն,
 Քեզ կպարզեն արևին դեմ, հաղթանակի իրեն դրոշ.
 — Խաղաղությո՛ւն...⁷:

Խաղաղության կողքն ի վեր ժողովուրդների հղբայրութունն էր մարդկային երջանկության հիմնաքարերից մեկ

⁷ Նույն տեղում, Վասն խաղաղության, 1950, էջ 24:

ուրիշը և այս, առաջին հերթին, հայ և արաբ ժողովուրդների
եղբայրությունը, որովհետև,

Տարահաված ու նորի հայ մանուկները անո՛ք,
Բիրբերուն մեջ իրենց մութ՝ յարադանի ցո՛լքն անգուր,
Երբ բախեցին դուռը հեզ՝ դաշունահաւ մատներով,
Դուն բացիր սիրտդ ամբողջ, արաբ բարի՝ ժողովուրդ:

Դա էր պատմական ճշմարտությունը և այն, որ հենց այդ
նույն արաբ ժողովուրդն էր, որ գաղթականացած հայ խլյակ-
ներին ընծայեց այն, ինչ որ «ունենր թանկագին» ու «խնդաց»,
հրբ այդ խլյակները վերապտան իրենց անցյալի ուժն ու կո-
րովը, և երբ «մոմի մը պես սպառող մեր երազը նախկին»
«դարձավ լույսի Երևան»: Ահա այդ ամեն արվածի համար էլ,

Ուսյեսգի դուն տունիդ մեջ ըլլաս տանտե՛րը միակ,
և պարտիզպանը ազատ՝ պարտեզի՛ն քու օրերուդ,
կը՝ քաղհրանա երբ այսօր ձայնիդ ակի՛ն անպարփակ,
կը խուժե մեր ձայնն իր հետ, արաբ արի՝ ժողովուրդ:

Ու քեզ զարման կամբողջ գոտեմարտին մեջ գալիք,
Երբ դուն կանգնիս անվտանգ՝ հողին վրա հայրերուդ,
Եղբայրական իրեւ ձեռք, իրեւ խորո՛ւնկ երախտիք,
պիտի գտնես մեզ կողքիդ, արաբ հերո՞ս ժողովուրդ:

Այս տողերը, այս տողերի մեջ տրված հավաստիացում-
ները ավելի իրականացան հետագա տասնամյակներում, իսկ
ամենակարևորը՝ այդ տողերի հեղինակը եղավ մեկը հայ ժո-
ղովրդի այն զավակներից, որոնք մինչև վերջն էլ մնացին
իրենց խոսքի «պատեններին» վրա, միշտ արաբ ժողովրդի
արի ու հերոս զավակների հետ պայքարի նույն մարտական
դիրքերում, որպես... «եղբայրական անդամաճան ձեռք»: Եվ
գեոևս «իրեւ խորո՛ւնկ երախտիք»՝ տալով նաև իրենց ար-
յունն ու կյանքը:

⁸ Նույն տեղում, Եղբայրական, 1954, էջ 58:

ԽՈՇԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Գառնիկ Աղդարյանի բանաստեղծական շարքերում (անկախ պոեմներից), որոնք ամփոփված են ավելի քան տասնամյա ընդմիջումով «Պատնեշին վրա» և «Ապրիմ-մեռնիմ» ժողովածուներում, խոհական բանաստեղծությունները նույնպես շատ քիչ քանակ են կազմում և հատկապես տեղ են գտել երկրորդ հատորում: Եվ դա հասկանալի է: «Պատնեշին վրա» գիրքը բանաստեղծի երախտյրիքն էր, գրված դեռևս երիտասարդական վառ տարիներին և անխուսափելի կնիքն ուներ նշված տարիների հայ հասարակական ու քաղաքական կյանքը հուզող ոչ սովորական հուզում ու խանդավառությունների: Գառնիկ Աղդարյանը այդ բոլորի կիզակետում էր և համոզված էր, որ հարկ է

Գիտնալ բե դառ մը կայծի տեղ՝
կարծե ապրիլ բուլեի մը կրակը մեծ,
հովիտներուն մեջ մրմնջող առվի փոխան՝
սլան մը ըլլալ հուրող ջրվեժ մը զահավեժ,
ու երկաթող երգի մը տեղ անաբժազան՝
ձայնն սպառել կանչի մը մեջ անմահական:

Բանաստեղծը հենց ապրում և գործում էր այդ նշանաբանով: Անցնող տարիները սակայն, ինչպես լինում է մարդկային կյանքում, բանաստեղծին ևս պետք է քերեին բազում դառնություններ և հուսախաբություններ:

Այնուհանդերձ, մնալով միշտ «պատնեշի վրա», Գառնիկ Աղդարյանի մեջ խոսում էր ոչ թե այնտեղ բարձրացած խան-

1 Գառնիկ Աղդարյան, Պատնեշին վրա, Երևան, Հայպետհրատ, 1957, էջ 52:

դավառ, «խենթ ու խելառ» երիտասարդն ու սիրահարը, այլ հասունացած, կյանքում շատ բան տեսած ու ապրած իմաստուն աչքը.

Ու պետք եղավ,
Ու կասկածին ձեռքեր քաց՝
Հետախուզեն մտածումիդ ծալքերն ամեն,
Եվ հոգնատանջ գլխուդ վրա
Փռվ գա ցավին առաստա՛ղը հանկարծորեն,
Ու պետք եղավ
Ու մենությունն անաբձագանք՝
Հիշողության զիծերն անգամ ձևագերծե,
Եվ ծովամույն ըլլաս անբավ
Անհուստության ջուրերուն տակ դանդաղորեն,
Ու պետք եղավ որ պաղատի՛ս՝ բայց չլեն,
Փորձես կանգնի՛լ՝
Բայց բեզ կրկին ոտնակոխեն,
Ապրիս՝ կարծես չապրելու պես
Եվ մահաճա՛ս՝ վերապրելո՛ւլ ամեն բոպե,
— Ուրպեսզի դուն սորվիս քե մարդ կրճա ինչհան
Տառապիլ՝ այլ մարդերու բիրտ անխղճությամբ,
Կրճա ինչպես՝ տառապելով՝

Վերածնի՛լ ու մարդանա՛լ...²:

Տառապանքի դասերը վերածնել ու առավել մարդկայնացրել էին բանաստեղծին: Հիմա նա, որ հրապարակագիր էր և հասարակական ու քաղաքական գործիչ նաև և, առաջին հերթին, դիտեր-հասկացել էր, որ գործի, նպատակի ու գործելակերպի միջոցների մեջ խտրությունը միշտ հարկավոր է և հարգի չէ՝ այն մաքիավելիզմը, որ արտոնում է ամեն ինչ՝ հանուն նպատակի իրագործման,

Այլ երբեք մի քսեր քե կերբաս աղբյուրին՝
Մաղիկներ ու բուխեր նզմելով,
Թե կրճաս հրկիզել խուրձերը ցորյանին՝
Գալիքի հունձներուն համար ծով.

² Գառնիկ Աղդարյան, Ցմրուր: (Այս և հետագա բանաստեղծությունները վերցված են «Ապրիլ-մեղմիմ» ժողովածուից, Երևան, «Հայաստան», 1968, էջ 75):

Աչքերդ մի՛ փակեր՝ երբ անմեղ մը իյնա.
— Միջոցը սրբազան է նույնքան,
Նպատակն անաղարտ դրո՛շ է՝ զոր կրնաս
Պարզել ջինջ հոգիո՛վ միմիայն³:

Ինչքա՛ն բան էր փոխվել թեկուղ 1952 թվականին գրի առնված «Ատելությունից» մինչև 1968 թվականի վերոգրյալ բանաստեղծությունը:

Հասկացվել էր, որ... «Միջոցը սրբազան է նույնքան» և, ամենաէականը՝ «նպատակը անաղարտ դրո՛շն է...» և պետք է այդպիսին լինի:

Եվ վերջապես բանաստեղծը հանգել էր հետևյալին.

Ես այլևս չեմ մեղադրեր քեզ, Պիղատո՛ս,
— Մենք բոլորս Պիղատոս ենք քիչ մը արդեն,
Մենք բոլորս
Խաչած ենք զայն — խաչեցյալը,
Երկրագունդի.
Խաչեցյալներն անհաշվելի⁴:

Այս եզրահանգումները կյանքի դասերն էին, տառապանքի դասերը, որոնք հասցրեցին «Ի հեճուկս» խորագրյալ հիանալի բանաստեղծության վերջին տողերին.

Ի հեճուկս այս քննին ու ոխին՝
Որո՞նք սերն անխնա կերծեն,
Անհամար վերքերո՛ւն՝ որո՞նք իմ
Մտքես ներս կկոտտան անընդմեջ,
Քառերո՛ւն, բառերո՛ւն ի հեճուկս՝
Որո՞նց մեջ ժանգը կա աշխարհին,
— Դեռ գիտնալ բողոքո՞ւմ տալ մարդուն,
Դեռ գիտնալ ձեզ սիրել, ո՛վ մարդիկ⁵:

Այո՛, այս տողերի մեջ էր նրա բանաստեղծության բարձրակետը: Կյանքի իրապաշտ այդ ըմբռնման, որ ի հեճուկս մարդ արարածի բոլոր ժխտական կողմերի, հարկավոր է գտնել նրա մեջ առկա դրականը և կարենալ սիրել, գիտնալ

³ Նույն տեղում, Նպատակ և միջոց, էջ 72:

⁴ Նույն տեղում, Պիղատոս, էջ 68:

⁵ Նույն տեղում, Ի հեճուկս, էջ 82:

սիրել նրան՝ քաջ գիտակցելով, որ մարդը, բանաստեղծը-նաև, ինքը սրբություն չէ երբեք և առավել ևս մարդկային ցավ ու հոգսերի դեմ Պիղատոս է հաճախ՝ քիչ, շատ քիչ բացառություններով երեկ...

Գառնիկ Աղգարյանը այդ դաժան գիտակցությամբ էր սիրելի նաև:

ՀԱՅԲԵՆԻՔ, ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄ

Գառնիկ Աղզարյանի բանաստեղծության ծանրության կենտրոնը, և այս նաև քանակական ու որակական առումով, բաժին է հասնում հայրենասիրական քնարին, որը հանդես է եկել նրա ստեղծագործական կյանքի առաջին օրից մինչև վերջին օրը: Բանաստեղծի հայրենասիրությունը՝ արտահայտված հայրենի հողի նկատմամբ պաշտամունքի հասնող սիրով ու նաև սփյուռքում հայապահպանման հոգս ու ցավերով ու առաջարկված դեղամիջոցներով, կլանել է նրան բոլոր մտահոգություններից առաջ և մեծ տեղ է զբաղեցրել լույս բնծայված բոլոր ժողովածուներում: Նույնիսկ մղել է գրելու պոեմներ, որոնցից մեկը՝ «Միլյուտ» խորագրվածը, լույս է տեսել «Ապրիլ-մեռնիմ» հատորում, իսկ երկրորդը՝ «Մատ-յան ցավի և հատուցման»՝ առանձին գրքով: Հարկ է շեշտել նաև, որ հանգավոր խոսքի այս ժանրը սփյուռքահայ բանաստեղծության մեջ եզակի երևույթներից մեկն է, ինչպիսին Կոստան Զարյանի «Տառագոմի հարսը» (1930), Անդրանիկ Ծառուկյանի «Թուղք առ Երևան» (1945), Վազգեն Շուշանյանի «Երկիր հիշատակաց» (1927—28, լույս է տեսել Երևանում, 1956 թ., «Հայաստան» հրատարակչության կողմից), Վահե Վահյանի «Հուշարձան Վահրամիս» (1977) ստեղծագործությունները և այլն:

Դեռևս 1952 թվականին, Գառնիկ Աղզարյանը «Ես կը քալեմ հաղթական» խորագրյալ բանաստեղծությունում, որը ձոնված է «Սովետական Հայաստանին», խոսել է իր էությունը պարուրած հայրենի հողի մասին: Հող, որ, ինչպես ասվեց, դեռ իր գրական առաջին քայլերից նրա պոեզիայի մղիչ ուժըն է հանդիսացել.

Ամեն, ամեն նամփայե բեզի կուգամ վերստին,
Ամեն, ամեն նանապարհ գիս կը տանի միշտ բեզի,
Լուսամուտներն հոգիիս՝ հիմա բեզի կը հային,
Եվ անոնցմե դարձյալ դուն հոգիիս մեջ կը հոսիս:

Կը բարձրանան շրթներես՝ երգի մը պես մտերիմ
Երկու բառերն անունիդ ու կը բալեմ ես կարծես
Քու մայրերեդ հաղթական և աշխուս կը ժպտին
Տուներ, ծառեր, ծաղիկներ, ու կըլլա կյանք՝ պարտեզ¹:

Գեռես պատանեկան սիրո ձոն հիշեցնող այս տողերը, որոնք երբեմնի սիրո երգերի մեջ հիշատակված սիրված էակի անվան «երկու վանկերը» փոխարինել են հայրենի պետականության «երկու բառերով», խոստում են այն մասին, որ բանաստեղծի համար հայրենիքը բռնել է նաև սիրածի տեղը իր հոգու մեջ, և այս վերջինից դուրս չկա նաև հիմնական այլ նպատակակետ, որ անդամվածանորեն հատուցի իր նվիրումն ու անսակարկ սերը և, ավելին՝ կյանքը դարձնի... «պարտեզ»՝ նրան զոհաբերված սրտի համար: Այդ է պատճառը, որ «Լուսամուտներն հոգիիս՝ հիմա քեզի կը հային»: Շատ ժամանակ չի անցնում, և հայրենասիրական շնչով գրված բանաստեղծությունները ստանում են նոր որակ, և արդեն 1954 թվականին շարքի մեջ ավելանում է «Ես ժողովուրդ հայոց» խորագրվածը, որը հանդիսանում է բանաստեղծի ձեռքբերումներից մեկը և ո՛չ միայն բանաստեղծի: Բերում ենք տեքստը ամբողջությամբ.

Ես՝ հեռավոր Հայկի բոռը հաղթահասակ,
Ես՝ Վաղանի կողքին կոժող գիւղորն արի,
Սիրո անմար երազ՝ ես նահապետ Քուչակ,
Ու կյանքի պես խորունկ՝ ես «Վերհ Հայաստանի»:

Սմբակներու ետեքն մեռնող ես հայ մանուկ,
Դիշերին մեջ լացող՝ ես վաճառու հառաչ,
Ես՝ իր հողին վրա պանդխտացող աշուղ,
Ու երկինքին հայող՝ հաճատակի ես աչք:

¹ Գառնիկ Աղդաբյան, Պատանեշին վրա, էջ 69:

Ես ցավիմ զեմ կանգնող բանվորներու բանակ,
Սրերուն զեմ դժգույն՝ ես պայքարի դրոշ,
Կյանքիմ իմաստ տվող՝ ստեղծագործ կրակ,
Եվ արշունով գրված՝ խաղաղության ես կոշ:

Ամեն երկրի մեջ նոր՝ արձագանքող ես երգ,
Ամեն տանտիրոջ հետ՝ եղբայրացող նամիւրդ,
Երևանին մեջ բորբ՝ տուն կառուցող ես ձեռք,
Երևանեն հետու՝ գիւղ ուրնող ես որբ:

Հայոց աշխարհին մեջ՝ ես՝ բե՛րք անեղբական,
Բարձունքներու նայող՝ ես երջանիկ սերունդ,
Նոր շեշտերով հնչող՝ Կոմիտասի՝ ես ձայն,
Ու հայ ձայնի կառոտ՝ հայրենարա՛ղձ ես ունկ:

Այլ ես՝ զարեւուն մեջ կանգնող Նայիրյան լեռ,
Պատմության մեջ անծիր՝ հավերժակա՛ն ես բոց,
Եվ մարդկության անհուն երկինքին մեջ՝ ամմեռ
Աստղի մը պէս ժպտող՝ ես ժողովու՛րդ հայոց²:

Հայն շառավիղ ընդգրկած այս բանաստեղծությունը՝ սեղմ գծերի մեջ ընդգրկելով նաև հայ ժողովրդի պատմության դաժան էջերն ու ուրախությունները, պարտություններն ու հաղթանակները, համեմայնդեպս, տալիս է հայ լինելով հպարտ պալու այն ազդականները, որոնք հեռու են մնում լուր խոսքային սահմաններից և վերածվում են պատճառարանված ու գիտակցված ուժի, հպարտության աղբյուրի:

Իհարկե, ձեռքբերումները միշտ չէ, որ հաջորդում են իրար: 1968 թվականին, առաջին գրքի բեյրության հրատարակությունից գրեթե տասնհինգ տարի հետո լույս ընծայված «Ապրիմ-մեռնիմ» ժողովածուում, բանաստեղծի հայրենասիրական քնարը կրկին վերադարձավ նախկինների վրա ու չինչ ավելացնող զեղումներին: Այստեղ հիմնականը, սակայն, կարոտի այն երանգն էր, որ մաս էր կազմում սփյուռքահայ բանաստեղծության հետպատերազմյան սերնդի մոտ, որպես «նոր կարոտի գրականության» միտում, և որը նպատակադրված էր անցյալի կորուսյալ հայրենիքի նկատմամբ

² Նույն տեղում, էջ 85—86,

դրսևորված կարոտը (որը հատկապես դասական դարձած ստեղծագործություններ ու անուններ էր տվել, ի մասնավորի՝ արձակում) սեևել արդեն վերածնված նոր հայրենիքի ուղղությամբ: Ավելին. պարզվեց, որ կարոտի այդ հիմքը գլխավոր ազդակներից մեկն է սփյուռքում ամենահրատապ հարցերից մեկի, թերևս ամենաառաջինի՝ ազգապահպանման, հայապահպանման համար տարված պայքարում: Եվ եթե լինի այդ գլխավոր կարոտը գեպի հայրենին, որ հոգեկան միակ կամուրջն է լինելու, զուր են գաղթօջախներում տարված ճիգ ու ջանքերը: Գիտակցվեց մի ճշմարտություն, թե ինչքան կա հայրենին, կա և կլինի նաև սփյուռքը: Ահա կարոտի նման երանդն էր, որ իր հայրենասիրական քնարի մեջ ներառել էր նաև Գառնիկ Աղզարյանը: Այդ երանդն ու երակն էին, որ նոր լիցք ու նոր սահմանագծեր պարզեցին նրա բանաստեղծությանը, և եթե առաջինը բանաստեղծությանը, ապա ոչ միայն դրան, այլ նաև արձակին ու հրապարակագրությանը: Բայց նախ այդ կարոտի մասին:

Թեկուզ հիմա ամբաստանեն զիս տրտմությամբ,
Անհուրիզոն մտածումով.

Թեկուզ ցույց տան օտար հողի վրա անած

Հասկեր ստո՛ք,

Թեկուզ այրող իմ աբցունիս դիմաց բանան

Գունավորված բաշկինակներ ասեղնագործ.

Թեկուզ խնդան՝ երբ էս պոռամ,

Ու Բեհշան՝ երբ իյնամ ծո՛ղն անհուսության,

Ես պիտի միշտ, դարձյալ, կրկին ու հավիտյան

Կառչիմ հողին, հողի՛ն կառչիմ իմ սպալերու՝

Իրեւ միակ փրկության լաստ ու միակ հույս.

Պիտի որպես նոր օրերու Ձենով Օհան՝

Կոչեմ օրեր – դարե՛րն ի վեր,

Թե Սփյուռք, հույնիսկ երբ լույս է փայլիլող,

Կսպառե յո՛ւղն իր աննորոգ,

Մինչ հայրենիքն իր խորշերուն մեջ իսկ մուշլ՝

Որոնո՛ւմն է վաղվան լույսին,

Կաթիլ – կաթիլ գումարվող յո՛ւղն է նրադին:

Թեկուզ ցավին այս շտովամ,

Թեկուզ այս ցավն երկարելուս համար հիմա

Զիս ցավազար կաժճէն անբույժ,
 Թեկուզ նույնիսկ ոմանք գտնեն զաւմանալի՝
 Ինչ ցավին մեջ իսկ բուժումն եմ գտած արդեն,
 Պիտի յարձալ, իբրեւ միակ դարմանագիր,
 Արձանագրեմ այս շարձարող դեղը հզօր,
 Զոր ամեն տան, ամեն սրտի մեջ տարագիր՝
 Պետք է դողով, վախով պահել,
 Այս դեղը դառն ու բուժավոր,
 Բայց կյանքին պես՝ ամենաբո՛ւյժ,
 Այս դեղը զօր մենք կկոչենք

—Հայու կարոտ...³

Հրապարագրութեան որոշ տարրեր պարունակող այս բանաստեղծությունը սկիզբն էր «Կարոտ» շարքի, որը ինչպես ասվեց, հենց նույն հատորում էլ պիտի ունենար իր իսկական ու իրավ զրոհորումները: Ի վերջո, այս մեկը խորագրված էր «Փոխան նախամուտի», որին հաջորդում էր արդեն խորագիր դարձած «Սա Կարոտը», որը մի անգամ ևս տալիս էր բառի էությունն ու բնութագիրը:

Սա Կարոտը
 Ու հայերեն գիտե միայն
 Ու բիրեւուն մեջ կտանի
 Այրող պատկերն Հայաստանին...⁴

Էությունն ու բնութագիրը, որ Շահան Շահնուրինն էր նաև երեսնական թվականներին, բայց որը իր անառարկելի բարձր որակը ձեռք բերեց նաև Գառնիկ Աղզարյանի պոեմներում: Բայց մինչ այդ Գառնիկ Աղզարյան բանաստեղծի ստեղծագործության բարձրակետերից մեկի՝ «Փոխան ուխտադրության» խորագրյալի մասին, որը կրելով հանդերձ Պարույր Սևակի պոեզիայի խոր ազդեցությունը, իր ինքնուրույն կերտվածքով դարձավ սփյուռքահայ պոեզիայի գլուխգործոցներից մեկը:

³ Այս և հետագա բանաստեղծությունները վերցված են «Ասորիմ-մեռնիմ» ժողովածուից, Երևան, «Հայաստան», 1968, էջ 30—31:

⁴ Նույն տեղում, էջ 33:

վա՛յ ինձ, վա՛յ ինձ, բազում վա՛յ ինձ,
 երբ օր մը շրթներս քսեն – իմ Հայաստան,
 եվ իմ հոգիս շաբստա
 Անօրինակ այս ապրումով, զոր չի կրնար
 Չափել ո՛չ մեկ ջերմաստիճան,
 երբ բանամ լուսամուտը մեր պատմության,
 Ու դեպի ներս նայելու տեղ,
 Ապակիին մեջ որոնեմ
 Այլ աստղերու ցո՛լիք միայն,
 երբ բախեմ լույսն դո՛ւր մեր ներկային,
 Ու պատասխան առնելուս պես,
 Ունկս խցեմ՝ կանչին դիմաց,
 եվ կոտրելով փորձեմ մտնել
 Արդեն իսկ բաց դռներեն ներս օտարության:

Կրկնվող «վա՛յ ինձ, վա՛յ ինձ»-երը, որոնք նարեկացիա-
 կան աչքումի մի երանդ էին հաղորդում բանաստեղծությանը
 և ամբողջովին ուղղված էին սփյուռքում աղքատահպանման
 խորը մտահոգություններին՝ այդ ինքնապահպանման դժից
 դուրս տեղի ունեցող ու կատարվող գիտակցված կամ անգի-
 տակից խոստորումների ընդգծումներով, հանգում էին ու խո-
 ցում նույն թիրախը.

Ու վա՛յ մեզի, ու վա՛յ մեզի՝ այժմ և միշտ,
 երբ բողոմք որ անհետի
 Իր ցավո՛վն իսկ՝ մեզ զբառող,
 Իր լացո՛վն իսկ՝ մեզ ավիշող,
 Իր խոցո՛վն իսկ՝ մեզ պաշտպանող

Սա Կարոտր...⁵

Այս աչքն ստեղծագործություններից էր, որ Գառնիկ Ադ-
 դարյանին մղելու էր առավել բացելու շակերտները և ստեղ-
 ծագործելու առավել լայն կտավի վրա՝ տալով «Սփյուռք»
 պոեմը, Վահան Թեքեյանի բնաբան դարձած տողերով.

Խլված իրենց արմատներեն ամենքն ալ՝
 Մեր հին, հին ազգը ահա՛

⁵ Նույն տեղում, էջ 59

⁶ Նույն տեղում, էջ 61:

Ուր չի կրնար իւր հողերուն վրա մնալ,
Չորհալ ուրիշ տեղ կերթա...⁷

Սփյուռք և սփյուռքահայություն: Այս հասկացությունները, եթե աշխարհի շատ ժողովուրդներին թվում են անհասկանալի և կամ ընկալվում են ծուռ հայելու մեջ, ապա հայ մարդու համար պարզ են ու հասկանալի: Ժողովուրդ, որ խլված իր արմատներից, Արևմտահայաստան կոչվող հայրենի հողատարածություններից, ստիպվել է արտագաղթել աշխարհի շորս ծագեր, դառնալ հողմացրիվ և, ի վերջո, ունենալ, ո՛չ իր ցանկությամբ, հաղար հասցե ու անուն: Ժողովուրդ, ի վերջո, որ իր պատմության սկզբնական քառուղիներից էլ ապրել է անհանգիստ կյանքով, միշտ կրունկի տակ, միշտ սպառնալիքի տակ սրի ու թրի և, այս բոլորով հանդերձ՝ մնալ պատմության անցյալի ու ներկա էջերում: Մնալ, որովհետև իր դավալենների թվում ունեցել է Հայկ ու Վարդան, դեռևս Գավիթ ու Անդրանիկ և առաջին հերթին նաև... Մաշտոց: Բայց ահա պատմության գրքում նոր դաժան էջ է բացվել, բացվել է և կոչվել Սփյուռք: Իդուր չէ, որ Գառնիկ Ադգարյանը իր պոեմի սկզբում հիշատակել է հայոց պատմության այդ մեծ այրերին: Հիշատակել է, որ հողմացրիվ դարձած հայոց սերունդները հասկանան, թե որտեղի՞ց են գալիս դարեր տևած տոհմության արմատները: Թեպետ քաջ գիտակցելով, որ երևի նաև ղուր է սփյուռքում հայ ողու հզոր այդ պահապանների հոգևոր առկայությունը: Կարևորը գիտակցելն է ներկա իրադրությունը, որպեսզի հասկանալի դառնա.

...Թե ես կապրիմ բազում կյանքով,
Կապրիմ երկրագունդի բոլոր մասերուն մեջ,
Ու երբ ես այնտեղ, ժայռին վրա ծանոթ,
Հրաշխի պես անող բաղնի մըն եմ հուարտ,
— Ամենուրեք շո՛ւղ եմ՝ հովին բերանն ինկած,
Ամենուրեք բո՛ւղբ եմ՝ բոցին լեզվին վրա,
Ամենուրեք նախա՛նջ և փախո՛ւստ եմ անդեկ՝
Երգո՛ւլ ըլլա քեկուզ և կամ առա՛նց երգի՞ս:

⁷ Նույն տեղում, էջ 87:

⁸ Նույն տեղում, էջ 93:

Կրկին շահնուրյան եզրակացությունը, միշտ՝ նահանջը... «առանց երգի» կամ թեկուզ երգով, որը եթե դեռևս արձանագրում է ժայռի վրա «հրաշքի պես աճող բարդու» գոյությունը, որպես առանձնակի երևույթ, ինչպիսին «նահանջը առանց երգի» վեպի դաժան եզրակացությունների դեմ կանգնած վեպի հեղինակն իսկ է՝ Շահան Շահնուրը, ապա մնացյալը, մեծամասնությունը «շո՛ւղ է՝ հովին բերանն ինկած», «թուղթ է՝ բոցին լեզվին վրա» և «նահա՛նջ ու փախո՛ւստ անդեկ»:

Իրավացի էր Շահնուրը.

«Կնահանջին ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, բմբռնում, բարոյական, սեր: Կնահանջն լեզուն, կնահանջն լեզուն, կնահանջն լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՜, մեղա՜ Արարատին»⁹:

Քսանիական թվականների վերջին գրված այս տողերում Շահան Շահնուրը մեղա՜ է ասում Արարատին, հայրենիքին: Մոտ չորս տասնամյակ անց (1968 թ.) Գառնիկ Աղդարյանը շեշտում է, ընդգծում նահանջի դեմ առկա խարխախը, միշտ նույն Արարատը:

Երեւ հազար տարի
Ես երկրագունդն ափիս մեջ եմ տաքած կարձես,
Ափս վերածած եմ ես փառեզի անգիր,
Չափած եմ հողն անծայր՝ գաղթականի ֆայրով,
Պանդուխտի խոնջ ոտքով՝ անցած Երկրե երկիր,
Բայց վնասկան պահում
Ես կմոռնամ դարձյալ
Թե ժամանակն ամեն, ամեն բան կփոխե,
Բայց հողն անշա՛րժ է միշտ,
Մաղր կրեա փոխվիլ, այլափոխվի՛լ նույնիսկ,
Բայց դիրքն իր երդիկին՝ անփոփոխ է հավերժ,
Կրեան հազար խոստում, հազար անգո պատրանք՝
Մոխի նման պատել ողեղ ու պատուհան,
Բայց իմ միակ խարխախ ապառաժն է այդ հին,
Բայց իմ անցյալս այնտեղ է փնջակված ընդմիշտ,
Ներկա այնտեղ, այնտեղ կբարձրանա հիմա,

⁹ Շահան Շահնուր, *Երկեր, երեսն*, «Հայպետհրատ», 1962, էջ 254:

եկ այդ կտոր հողը
Մեկնակետն է միակ վաղվան իմ խոյանքիս
—Գալիս մեր հաղորդյան¹⁰:

Հարց է առաջանում. ինչո՞ւ առաջինում... մեղա, երկրորդում՝ հաստատումը, բնագծումը խարխսխի առկայության, դեղատոմսը. «Ներկառ այնտեղ, այնտեղ կբարձրանա հիմա» և «այդ կտոր հողը», որ Հայաստանն է:

Պատասխանը պարզ է մեղայի և նաև երկրորդի: Գլխադիր, մեծատառ ժամանակը, որ հստակություն մտցրեց գաղթական դարձած ժողովրդի «ուղեղ»-ում ու կյանքի «պատուհանում» և հայրենի հողը դարձրեց իսկական հայապահպանության բերդ ու կուլան: Թե չէ, ինչո՞ւ շահնուրյան համակրելի Լոխումները, այն ժամանակների «աճող բարդիները» պիտի հոգեկան հիվանդների դառնային: Թեկուզ «Լոխումներ»:

Գառնիկ Աղդարյան բանաստեղծի համար ժամանակը, հենց ժամանակը, հետպատերազմյան տասնամյակները ցրրեցին Արարատը պատած մշուշը՝ ցույց տալով, որ ողբերկը կուլաններից այն կողմ կա նաև իրական, շոշափելի կուլանը, հայրենին ու այժմ կա հայրենի՜ք, կա տո՛ւն, և ուրանալ դա նշանակում է սփյուռքը կանգնեցնել փակուղու առջև... նշանակում է տանուկ տալ ազգապահպանման պայքարը, նշանակում է «չորացնել» ազգը:

Փակուղի՜ է երկար հիմա մեր կյանքն այստեղ,
—Ու կտղանք ահա մենք արանետն ի վեր՝
Արմունկներով, կուրծքով, ատամներով՝ նույնիսկ,
Մեր մատներով վտիտ՝
Գոյատևման ամեն ծեղի՜ մենք կկառնենք,
Մեր ծունկերով անու՜մ՝
Կրաճաճաճա՜նք ահա ու կկփի՜նք կրկին,
Եվ մեր գոյապայքարն իմաստ ունի միայն
Անոր համար, որ հո՞ն՝ փակուղիի ելքին՝

¹⁰ Դանիկ Աղդարյան, Սփյուռք, «Ապրիլ-մեռնիս», էջ 100—101:

Մո՞ղ կա՝ մեր բոճերուն համար շնչասպառող,
Լու՛յս կա՝ մեր աշխերուն համար խավաւամուլ,
Կա հայրենի՛ւմ, կա տո՛ւն՝
Մեր շարշարվող մարմնին
Ու պանդուխտի հոգվույն համար մեր դեզերող¹¹:

Հասնելով նման ձշմարտության, որ, պիտի անկեղծ լինել և ասել, ոչ միայն բանաստեղծի հայտնագործումն էր, այլ ավելի ճշգրիտ՝ հայրենիքի իսկ թելադրածը, նրա իսկ դեպի իր տարագիր որդիները ցուցաբերած անկաշառ սիրո արգասիքը, որ դժբախտաբար դաժան տասնամյակներ վարագուրվել ու արդևակավել էին, բայց արդեն ղգացնել էին տալիս, թե ի՛նչ է նշանակում դոնել հարադատ մորը, ակունքը: Եվ բանաստեղծը իրավացի էր՝ ասելով.

Իմ խաբիսխեն հետո ուրախությո՛ւնն անգամ՝
Պղպա՛կ է պայքող,
Եր՛գրս՝ անարձագանք ձա՛յն է անհետացող,
Ճիգրս՝ ասպառածի կողերուն դեմ խփվող
Այի՛մ մրն է միայն¹²:

Եվ վերջապէս վերջակիտել էր իր պոեմը հետևյալ տողերով.

Ես Սփյուտֆն եմ՝ խոցված մտքերուս մեջ անգամ,
Ես Սփյուտֆն եմ – գիրք մը իւր ավարտին հասնող,
Հառաչարանն անոր՝ գրվեցավ լոկ արշամբ,
Վերջաբանը պիտի գրվի արտասուհով:
Բայց ե՞րբ պիտի գրվի վերջին էջն այդ տխուր,
Պիտի արդյոք գրվի՞ ան անպայման և ո՞ւր,
Հրածեշտի զանգը ո՞վ պիտի տա արդյոք,
Եվ ո՞վ պիտի ըլլա վերջին համփորդն հայոց:
Կրնա գիրքն այս դեռևս ունենալ նոր էջեր,
Էջեր սեփ – սև երբեմն, այլ երբեմն ալ պայծառ,
Վերջաբանը կրնա գրվիլ բիշ մը ո՛ւշ դեռ,
Եվ կամ գրվիլ այնտեղ՝ հայոց հողին վրա:
Կրնա... Երե հիմա, ես մեկանի փոխան

¹¹ Նույն տեղում, էջ 110—111:

¹² Նույն տեղում, էջ 113:

Թարխնմ գրիչս՝ անքիժ արեին մեչ մեւ վառ,
 Երե նիմա բողբոս եւ պատրաստեմ անդամ
 Հայրենական հողով ու կարոտով անխառն:
 Տառի փոխան՝ երե արձանագրեմ ոգի,
 Բառերու անդ անգույն՝ անշա՛փ հայրենի սեր.
 Մտփի փոխան՝ երե դենմ հավատք դեպի
 Ներկա՛ն մեւ կառուցվող ու զալի՛ք լուսեղ:
 Երե, երե միայն եւ իմ տեղերս ամեն,
 Իմ կեանքս բոլոր, լուսանցֆեն՝ րո նույնիսկ,
 Հոգիներու անտես հեռատիպով ուղղեմ
 Դեպի ան՝ որ մա՛յրս է՝ երեկ, այսօր և միշտ:
 Բայց ո՞վ եմ եւ նիմա, ո՞վ է մայրս արդյոք...
 Ես՝ Սփյուռմեմ եմ Հայոց,

Մայրս՝ կտոր մը հող...¹³

Այս տողերից հետո անցավ երկու տասնամյակ, եկավ 1988 թվականը: Հայ ժողովրդի պատմության վերածննդի ու վերակառուցման այդ անմոռանալի տարեթիվը և տարեթիվը նաև՝ դաժան ու սահմուկեցուցիչ էջերի, որ վերջում բերեց բրնձի սահմանափակ արհավիրքը: Հայ ժողովուրդը հայրենի հողում կորցրեց իր տասնյակ հազարավոր զավակներին: Բայց յուրաքանչյուր սև ժամանակաշրջան ունի նաև իրեն հաջորդող վառ տարեգրությունը: Այդ տարեգրության էջերը լուսավառվեցին նրա զավակների անմնացորդ լեռնացումով ու միասնականության մեջ, նաև Սփյուռքի հարումովը հայրենիքին, աննախընթաց հարումովը և նաև միասնականության այն դրսևորումով, որ նաև արտաշխարհինն է ինքն իր մեջ: Միասնականություն, որ պակասում էր անցնող ողջ տասնամյակների ընթացքում, և ահա այդ ամենը կտախպեին նաև բանաստեղծին՝ վերանայել իր եզրափակիչ տողերը, եթե նա ապրեր, իհարկե, և հավատալ, որ Սփյուռքն ու հայրենին կան ու կլինեն, և Սփյուռքը, այնուամենայնիվ «գիրք մը չէ» իր ավարտին հասնող, և եթե «հառաջարանն անոր գրվեցավ լոկ արյամբ», ապա վերջաբանը արտասուքով չէ, որ պիտի գրվի.

¹³ Նույն տեղում, էջ 115—116:

...եվ այդ կտոր հողը
Մեկնակե՛տն է միակ՝ ներկա իմ խոյանքիս
— Գալիք մեր հաղորդյան¹⁴:

Ապա՛ նաև... Սփյուռքի գեռես շատ երկարատև գոյու-
թյան:

*
* *
*

Գառնիկ Աղդարյանը իր երկրորդ պոեմը՝ «Մատյան ցա-
վի և հատուցման», գրեց ավելի վաղ (Յեկուզ հրապարակեց
1965 թվականին)՝ բաց անելով Սփյուռքի արյամբ գրված
պատմության էջերը և առավել խորացնելով այնտեղ հայրե-
նի իրականության գաղափարը: Առաջինը՝ «Մատյանը», գը-
րեթե իր մեջ կլանեց «Սփյուռքը» կամ, ավելի ճիշտ՝ այդ եր-
կուսը ամբողջացրին իրար և, կարելի է ասել՝ դարձան եր-
կուսով մեկի մեջ անմեռ հուշարձանը Գառնիկ Աղդարյան
բանաստեղծի: Վիպերգը բաղկացած է չորս գլուխներից, թե-
պետ այդ բաժանումները առանձին ենթախորագիր չունեն:
Բայց բնաբան վերցված տողերը բնութագրական են գլուխ-
ների ներքին բովանդակությանը:

Թվում է՝ ստեղծագործությունը գրվել է մեկ շնչով
(այսինքն — հունիս 1964) և, ինչպես երևում է՝ «Սփյուռք»-ից
առաջ և ավելի բաց շահերտնետրով ու առավել խորը: Այս-
պես՝ պոեմը ձոնված է

Անոց՝ որոնք կը ծնին

Օտար ափերու վրա.

Բայց կը մեան միշտ

Բեկորները Մեծ եղեռնին:

Այսինքն, կարճ ասած՝ սփյուռքահայությանը, նրանց, ով-
քեր ծնվեցին օտար ափերում, բայց միշտ խարանը իրենց
ճակատին: Չտեսան ահավոր ողբերգությունը, լսեցին միայն,
հետո եթե առիթ ունեցան, կարդացին նաև, և եղան ոչ փոք-
րաթիվներ, ովքեր գիտակցաբար կամ անգիտակցաբար ու-

¹⁴ Նույն տեղում, էջ 117:

զեցին և ջանացին մոռացության տալ անցյալը, այն պատմությունը, որ իրենց պապերինն էր, հայրերինն ու մայրերինը: Ահա այդ նկատառումից ելնելով՝ առաջին զլխի համար բնարան է վերցվել Կոմիտասից, հենց Կոմիտասից և ուրիշ ոչ ոքից, և դա խորհրդանշական է, պատգամ է հետեզեռնյան սերունդներին.

Աշխարհում ո՛վ մոռանա,
Ձո՛ւստ աշխով քող Բողանա...

Դաժան կյանքով ապրած հայ ժողովրդի մեծություններից մեկի, նրա անմահ սրդիներից Կոմիտասի դաժան պատգամն է դա և իրավացիորեն տեղին, որովհետև մոռանալ նրման անցյալը նշանակում է՝ զիծ քաշել ներկայի վրա և ընդհանրապես շունենալ ապագա: Եվ ընդհանրապես, ինչպե՞ս կարելի է մոռանալ... անմոռանալին: Այդ անմոռանալին մոռանալու անկարելիության մասին է պատմել պոեմի առաջին զլուխը: Որովհետև մոռանալ այդ անցյալը, նշանակում է մոռանալ ու զիծ քաշել Սիամանթոյի վրա, նաև Վարուժանի, Ջոհրապի և բազում այն այրերի, որոնք ազդ էին պահում ու հավատք և մեռան ու նահատակվեցին, որովհետև հայ էին: Մոռանալ անցյալը, նշանակում է մոռանալ Տիգրանակերտն ու Հաճրնը, Սասունն ու Վանը և դեռ բազում հերոսական այն քաղաքներն ու շեները, որոնք հող էին ու օջախ և որոնք հայրենիք էին կոչվում: Այսինքն՝ հող, որ կյանք էր պարգևում, հենարան, որի վրան ու մեջը ապրում էին նրանք, ովքեր քո պապերն էին ու նաև հայրերը: Չկան նրանք. ինչպե՞ս կարելի է մոռանալ անմոռանալին:

Եվ նաև նրանց, ովքեր այդ անմոռանալին ուզեցին թաղել, այսինքն նաև քեզ թաղել՝ դարձնելով սփյուռք, և որոնք կոչվեցին երիտթուրքեր, կոչվեցին էնվեր, Քեմալ ու Բալեհաթ, և նաև Չանդրրից մինչև Դեր-էլ-Ջոր, քաղաքներ ու անապատ՝ քո իսկ ծնողների անթաղ դիակների համար: Անթաղ դիակներ ու այդ դիակների սահմոկեցուցիչ վշտից լեռնացած ֆիդայիներ. այո, այս բոլորը ինչպե՞ս կարելի է մոռանալ:

Չմոռանալ և հիշել պատգամը Կոմիտասին, հիշել նաև և հատկապես այն բանի համար, որ սփյուռքում

Կր նահանջենք բանիլ և զործով,

Կամա քե ակամա,

Մեղա՛, մեղա՛ Արարատին...

Շահան Շահնուրի ստեղծագործությունների մեջ հաճախ անդրադարձվող այս տողերով է սկիզբ առել պոեմի երկրորդ ենթագլուխը: Եվ դա նրա համար, որ Գառնիկ Աղզարյանը նույնպես լավ է գիտակցել, որ Սփյուռքը, հատկապես իր կազմավորման և հետագա տասնամյակներին, եթե այլևս դերդուրյան ավազներով բնթացող ճանապարհ չէր, այնուամենայնիվ, «մոլորող մայթի՛ղբ էր լուկ» հասակ առնող սերունդների համար: Եվ այս նաև 1965 թվականի սեմին, որովհետև

Մեր անսանձան վի՛շոր անցյալ՝

Գարձած է լուկ հոգեհանգիստ կամ սգաառն,

Գիտեմ, հիմա

Այլասերման դահլիճն անդեմ՝

Հնաանած է իր չարադանն աներևույթ,

Ու մարմնի տեղ

Կր գլխատեն հայու հոգին¹⁵:

Իսկ մենք՝

Հիմնականեն շատ ավելի՝

Կլանված ենք մանրուհներո՛վ:

Գառնիկ Աղզարյանի պոեմի նպատակն է, և սա նաև նրա զլխավոր արժանիքներից է, Շահան Շահնուրի վեպի նման ցույց տալ նահանջի ցավը, նրա ողբերգությունը, ցույց տալ առանց քողարկելու, իր ահավոր ուժգնությամբ, որի պատասխանատուն եթե այլասերման անդեմ դահլիճն է, նաև, և հիմնականը, մենք ենք: Այո, աներևույթ չարադանի քովն ի վեր նաև մեր պատասխանատվության մասին է խոսքը, և սա այնքան մերկապարանոց և թեկուզ ծայրահեղ ինքնաքննա-

¹⁵ Այո (էջ 22) և հետագա մեջբերումները վերցված են «Մատյան ցավի և հատուցման» հատորից, Բեյրութ, 1965:

դատության ոգով, որ առաջիններից մեկն է սփյուռքահայ բանաստեղծության, իսկ ինքնախարադանման ուղիով՝ նաև հայ գրականության մեջ: Որովհետև

Զբաղած ենք
Աննպատակ կոխին մեջ՝
Մեր ուժերո՛ւն սպառոտել,
Պատենշներու կառուցման տեղ՝
Խրամատի՛ բնդլայնումով,
Հրդեհները մաքելու տեղ՝
Զուրերն ի գո՛ւր սպառելով,
Վերջին ծառը փրկելու տեղ՝
Արմատները կացինելով,
Նավը խառխա տանելու տեղ՝
Ալիքները ականելով,
Առազաստը պարզելու տեղ՝
Սալանները պատռտելով,
Չեղբերն իրար բերելու տեղ՝
Մեր մատները կտրատելով,
Դալիքը մեր փրկելու տեղ՝
Ներկա՛ն անգամ վտանգելով,
Ու աղմուկո՛ւմ, ու փրփուրո՛ւմ,
Ու ուրումո՛ւմ, ու մրուրո՛ւմ¹⁶:

Շատ խիստ է ասված, բայց նրանց համար, ովքեր ծանոթ են սփյուռքահայ ներքաղաքական կյանքի պայմաններին, այնտեղ պործող քաղաքական կուսակցությունների գործելակերպին և այս՝ հատկապես երեսնական թվականներից հետո, թեկուզև մինչև յոթանասունական թվականները (և ոչ միայն քաղաքական կուսակցությունների, որոնք տառապում էին նաև ներքին պառակտումներով), կարող են հաստատել, որ այս խիստ տողերը նշարակի հարված էին թարախակալված վերքի բուժման ճանապարհին: Եվ իրավացի էր բանաստեղծը, երբ ավելացնում էր,

Բայց չես կրնար
Լռել հիմա ու հանձնվիլ
Նահանգի գաղջ ալիքներուն,

¹⁶ Նույն տեղում, էջ 24—25:

Աչքը փակել օր ցերեկով

Ու շտեմնել

Շարունակումն այս շրջահատված կոտորածի¹⁷:

Սփյուռքահայ գրականությունը, հատկապես արձակը, տալսնամյակներ ամբողջ «չընդհատված կոտորածի» դառն իրականության անդրադարձով՝ գլխավոր մեղքը բարդելով մասնավորապես արտաքին պայմանների վրա: Այդ ուղղությամբ ստեղծված նահանջի գրականության ջախջախիչ տոկոսը ցույց տվեց օտարամոլ բարքերի, պերճության, շվայտության և դեռևս բազում գործոնների ժխտական ազդեցությունը՝ խուսափելով այդ բոլորի մեջ ունեցած մեր պատասխանատվության բաժնից: Բայց ամենից առաջ խուսափելով, շրջանցելով, բայց պարզապես մոռացության տալով և մեր նախկին պայքարներում տարած «աննպատակ կռիվները»: Կռիվներ, որոնք, թողած գլխավոր հոգսը՝ ազգապահպանումը, հանուն ազգապահպանման ջլատում էին ուժերը, հանուն հայ ժողովուրդի գերագույն շահերի՝ կացնահարում հենց այդ գերագույն շահերը: Ոչ ոք չունեցավ քաջությունը իր մատը դրնելու իսկական վերքի վրա, որովհետև «ուժերի միացումը» դեմ էր յուրաքանչյուրի հավակնած ուժի ցուցադրմանը: Եվ այս՝ նաև շխորչելով եղբայրասպան «պայքարների» առջև: Ինչ որ ասում ենք, դրա վկաներն են սփյուռքահայ նշված թրվականների մամուլը, այդ մամուլի էջերում հրապարակված հարյուրավոր անմեղ հայ նահատակների մասին գրված հողվածներն ու նկարները: Հողվածներ ու նկարներ, որոնց մեղավորները, համենայնդեպս... օտար բարքերն ու սովորույթները չէին, ոչ էլ անդեմ կոչված օտար դահիճը: Օտար բարքերը մեզանից խլեցին մեր հայությունը, թողնելով, որ այդ հայը ապրի որպես ֆրանսիացի, ամերիկացի կամ նույնիսկ որպես թուրք ու թրքացած, բայց ապրի, համենայնդեպս: Իսկ մե՞նք... այդ բոլորի վրա ավելացրինք հայ մարդու նաև ֆիզիկական կորստի ցավը և այն հայ մարդու ու մարդկանց,

¹⁷ Նույն տեղում, էջ 27:

որոնք լավագույններն էին, հրեի, սփյուռքում՝ հայ ազգային շահերի համար գործի լծվածներից: Եթե նայենք այդ տեսանկյունից, բանաստեղծի ինքնաքննադատությունը նույնիսկ թվում է, թե մեղմ է հնչում, ամեն ինչ չէ, որ հրապարակված է, թեպետ կա և այն վերջին հզրակացությունը, որ նույնքան դաժան է.

Բայց չես կրճար

Հիմա կրկին

Հանդարտորեն նայիլ կյանքին,

Որովհետև

Կոիվը մեր պիտի գտնե օր մը վախճան՝

Կովողներու շղթայոյրա՛ն հետևանքով¹⁸:

Կովողներու շղթայոյթյո՞ւն... Այո, հրեի նաև շղթայոյթյուն, քանի կոիվը և նրա ականապատումը և՛ դրսից է, և՛ ներսից:

Գառնիկ Աղդարյանը լավ էր ընկալում այդ իրականությունը: Դրա մասին են խոսում ոչ միայն պոեմները, այլ նաև առանձին բանաստեղծություններ, որոնց մասին խոսեցինք նախորդ գլուխներում: Բայց կոիվը, նրա ականա դադարեցման մասին հայտնված արդեն հոգետեսական հետեւությունը, շունեցավ իր վերջակիտումը. բանաստեղծը գիտեր նաև, որ կար հիմնական մի հուսո կովան ևս, և դա այս անգամ արդեն շինարար կոիվն էր, որ պետք է հաղորդեր լավատեսական կեցվածք, ապահովեր նրա շարունակումը՝ մոտ ապագայում սփյուռքին ևս նոր մտածելակերպ ու գործելակերպ հաղորդելով: Իսկ դրա հիմքը պոեմի երրորդ մասում բնաբան ընտրված Պարույր Սևակի տողերն էին.

Բայց... արդ տուն եմ շինում փեշերի տակ Մասյաց,

Հրազդանի ափին, Արտաշատում...

Նա հեռանում է իբրև պատանեկա՛ն հասակ,

Իբրև վերադարձած երջանկայրյուն:

Եվ իբրև նոր մտածողության ելակետ... Սփյուռքում և նրա պայքարում՝

¹⁸ Նույն տեղում, էջ 29:

Ախոր էր ու գաղթի ճամփա,
Հիմա կ'ենէ հայրենական,
Մարած օջախ էր նայիրյան
Հայաստա՛նն է հիմա ծաղկլալ¹⁹:

Գառնիկ Աղդարյանը, հենվելով հայրենի հողին, այդ հողի պարգևած հույս ու հավատքին, այնուամենայնիվ, այս հարցում ևս եղել է՝ ոչ սոսկ զովերգակ, այլ կանգնել է իրապաշտության դիրքերում՝ ցույց տալով նույնիսկ այդ միակ խարիսխի ունեցած մութ ու մռայլը: Եվ նման դիրքավորումը նույնպես նորություն է սփյուռքահայ բանաստեղծությունում, որը բանաստեղծին չի դարձնում անվերապահ հիացող և դրրանով էլ՝ ոչ այնքան վստահելի, այլ հաստատում է նրա հայրենասիրության առողջ խորքը և մղում ընթերցողին հավատալ նրան, իսկ էականը՝ նրա ասածի ճշմարտացիությունը:

Ի՛նչ փույր, քե հոն հիմա ամպեր կան դեռ անշարժ,
— Վաղը պիտի ցրվի՛ն անոնք,
Լույսերու մեջ դեռ համեցող ստվերե՛ր կան,
— Վաղը պիտի լուծվի՛ն անոնք,
Ցավե՛ր կան դեռ և տրտմության շեշտե՛ր հիվանդ,
— Վաղը պիտի բուծվի՛ն անոնք,
Յորյանին մեջ դեռ սրտմե՛ր կան դառնության,
— Վաղը պիտի մաղվի՛ն անոնք:
Ի՛նչ փույր, քե դեռ կյանքն աղբյուր չէ առատության,
— Անսպառ է աղբյուրն հայոց,
Օրերը միշտ երգ չեն անհոգ ու կենսուրախ,
Երգը մեր հո՛ղն է հավերժող,
Երազները վիրավո՛ր են վերժով անցյալ,
Երազը մեր վա՛ղն է բոսոր,
Ճամփան տատա՛սկ ու արյունող խի՛ն է հաճախ,
— Գազարն է բարձր ու լուսաշող²⁰:

Իսկական ու իրավ հայրենասիրության նման կեցվածքը, հատկապես վաթսուևական թվականների կեսերին, երբ լճացման տարիներ էին մեր մոտ և զժվար ասելի նման տողերը,

¹⁹ Նույն տեղում, էջ 37:

²⁰ Նույն տեղում, էջ 42—43:

առավել ևս արժեքավորում են պոեմը և հասցնում նրա նույն-
քան իրապաշտ ու լավատես ավարտին: Ավարտ, որ իր շոր-
րորդ մասում նույնքան խորհրդանշական բնարան է վերցրել
արդեն Սիրվա Կապուտիկյանի տողերը.

Դու պիտի վրեժ առնես ապրելով,
Ապրելով համա՛ն, հազարապատի՛կ...

Այո՛, ապրելով և պայքարելով, իսկ Սփյուռքը դարձնելով
նոր Մուսա լեռ, որովհետև արդեն ինքնին.

Սփյուռքն ամբողջ՝ Մուսա լե՛ռ է հիմա, տղա՛ս,
Մուսա լեռ մը անծայրածիր,
Ու ամեն ծերայ
Կարծես ձե՛ռք մը մարտնչումի,
Ամեն բարձունք՝
Դիմադրական դի՛րք մը անհաս,
Եվ ամեն ժայռ՝
Խիզախումի՛ փամփշտակալ:
Սփյուռքն ամբողջ՝ հիմա խրամ է նոգեկան,
Ուր զենքի տեղ՝
Հայոց տա՛նն ու քա՛նն են միայն ամենագոր²¹:

Գտնված է աղգապահականման հիմնական ղեկքը... հա-
յոց տառն ու բանը: Անհրաժեշտ է միասնականություն. ան-
հրաժեշտ է հանուն աղգի, հանուն հայ լինելու գոյության
միասնաբար օգտադործել այդ ղեկքը, միանալ այդ գաղափա-
րի շուրջ և այս հասկանալով, որ

Սո՛վ է հանախ ու երաշտի
Մարախնե՛ր կան քազմահազար,
Մուք է հանախ ու խավարի
Չղջիկնե՛ր կան մահագուժկան,
Դասալման սողոսկումնե՛ր կան տակավին,
Եվ վատուրյան քափանցումնե՛ր դեռ դավադիր,
Ոայց կը կովինք մենք շարունակ՝
Մուսա լեռան վրա անծայր:

Ի՛նչ սրբազան կոիվ է առաջարկում բանաստեղծը, կոիվ,

²¹ Նույն տեղում, էջ 52:

պայքար՝ քաջ դիտակցելով, որ «Ծովն է Լաթին», ինչպես Մուսսա լեռում,

Բայց այս անգամ
Ոչ քե ծովը անորոշին,
Ուրիկե կրճան զալ նավերը ողորմության,
Կրճան չգալ գուցե բնավ,
Այլ հարագատ՝
Մովն հայրենի²²:

Եվ այսպիսով՝

Հեռեկ նահանջն առանց երգի,
Երգը հեզել դիմադրության:
Ու հավատ՝ տեն իր՝
Ընել շաղախ ու պատվանդան²³:

Պոեմի հրապարակումից անցել են տասնամյակներ: Շատ ջրեր են հոսել այդ ընթացքում: Այդ ջրերը նպաստավոր տաք հոսանքներ են բերել մեր և սփյուռքահայություն կյանքում: Ինչ-որ չափով՝ Սփյուռքում իրադրություն է հայ ժողովրդի ցանկալի միասնականությունը կամ առողջ հիմքեր են դրվել դրա համար: Մնում է, որ մեկ ժողովուրդ և մեկ զրականություն նանապարհի վրա արվի նաև այն ամենաէական քայլերից մեկն ու առաջինը, որ ազգապահպանման զենքերից ամենաառաջավորինն է և կոչվում է լեզվի միասնություն: Իսկ այդ հարցում, թվում է, թե, հրամայական քայլը պատկանում է... հայրենիքին: Մի քայլ, որ նշանակում է պատմական խեղաթյուրումների ուղղում և լեզվում բանականության ու բնականության հաստատում: Մի խոսքով... վերականգնում:

²² Նույն տեղում, էջ 55:

²³ Նույն տեղում, էջ 57:

ԱՐՁԱԿԱԳԻՐԸ (ՍԵՎ. ԵՎ. ԿԱՐՄԻՐ)

Յոթանասունական թվականներին սփյուռքահայ արձակը աչքի ընկավ նաև ներքին՝ տնտեսական, և արտաքին՝ ազգային-քաղաքական հակասությունների բացահայտման միտումներով: Թեպետ պիտի անմիջապես ասեի, որ 1975 թվականին Լիբանանում պայթած ներքաղաքական պատերազմը դժվար հաղթահարելի թեմա է՝ հենց դեպքերն ու նրանց իսկական խորքը սառնասրտորեն դիտել կարենալու համար: Բայց և այնպես նրա անմիջական մասնակից և դեպքերի ընթացքին մոտից կամ հեռվից ականատես դրոշների կողմից արվել են փորձեր, որոնցից եթե ոչ յուրաքանչյուրը առանձին, այլ ամբողջը միացրած կարելի է դիտել որպես ամբողջական մի վեպ՝ Լիբանանյան ներքաղաքական պատերազմի անցնող տարիների մասին:

Ժամանակագրական կարգով այդ ստեղծագործություններից երեքը հաջորդել են իրար. Վեհանուշ Թեֆյան՝ «Ճեղքված մանրանկար», Բեյրութ, 1977, Գառնիկ Աղդարյան՝ «Սև և կարմիր», Բեյրութ, 1978, Աբամ Սեփեթյան՝ «Ողջակեզ», Բեյրութ, 1979 թ.: Հետագայում դրանց վրա ավելացել են Պեպո Սիմոնյանի «Ծվեն ծվեն երազներ» ժողովածուն, Բեյրութ, 1980, Պողոս Գուրելյանի՝ այդ տաղանդավոր արձակագրի պատմվածքները, Օննիկ Սարգիսյանի «Կարավանները այստեղեն կանցնին» և Հայկ Նազգաշյանի «Անավարտ պատմություն» վեպը, Բեյրութ, 1984 թ. և այլն:

Գառնիկ Աղդարյանի «Սև և կարմիր» այդ շղթայի մի օղակն է:

Նախ՝ ինչո՞ւ է գրվել այս գիրքը, ինչո՞ւ է բանաստեղծին ստիպել գառնալ արձակագիր և գրել պատմվածքների ու ակնարկների այս ժողովածուն: Այդ հարցի պատասխանը տալիս է հենց ինքը՝ հեղինակը, նշված գրքի վերջաբանը հանդիսացող «Երկխոսություն» գլխում:

«Որովհետև չէի կրնար չգրել, որովհետև եթե չգրեի՝ պիտի խենթանայի պարզապես, որովհետև պիտի բարձրանայի տանիք ու պոռայի ամբողջ ձայնով, պիտի իջնեի փողոց ու փաթթվեի առաջին անցորդին, որովհետև առանձին չեմ, կըհասկնա՞ս, առանձին չեմ, բոլոր զոհերը, բոլոր նահատակները, բոլոր հերոսները կապրին ինձմե ներս, ես մեռա անոնց հետ և անոնք հիմա կապրին ինձմե ներս, ամեն արձակված փամփուշտ ծակեց սիրտս, մարմինս հաղար անգամ քաշկըրավեցավ փողոցներուն մեջ, լացի մայրերուն հետ ու որբերուն հետ թափառեցա ոտարորիկ, բնթերցողեն առաջ՝ ես գրեցի ինձի՝ համար, թուղթը, սպիտակ թուղթը բալասան էր կտրծես, գրեցի, վերջացավ, ուրիշներ ի՞նչ կուզեն թող խորհին...»¹:

Գառնիկ Աղզարյանը գրել է այս գիրքը, որովհետև անկարելի էր չգրել այն: Որովհետև խսկական գրողը գրում է ոչ թե ծրագրված, ոչ թե հանուն գրելու, այլ որովհետև չի կարող չգրել. այդ է թելադրում խիղճը, գրիչը, որը տարբերվում է մյուսներից նրանով, որ այս վերջինները կարող են... չգրել նաև: Պատահում է նաև, որ գրվածք այն չի լինում, ինչ որ ակնկալելի էր տաղանդավոր բանաստեղծից, բայց փաստը փաստ է, որ այն գրվել է և գրվել է պարզապես ու ամեն բանից առաջ իր համար, իր հուզմունքների և ապրումներից կերած տառապանքի համար: Եվ այստեղ է տվյալ ստեղծագործության արժանիքը: Եվ մենք հասու ենք դառնում, որ «պատերազմը այս է նաև», որ «ճշմարիտը կթվի անճշմարտանման

¹ Գառնիկ Աղզարյան, Երկխոսություն, էջ 113: Այս և հետագա մեջբերումները վերցված են «Սև և կարմիր» հատորից, Երևան, «Սովետական գրող», 1959:

ու վաժերականը՝ մտադածին: Իսկ լիրանանյան պատերազմը՝ բան մը ավելի...»²:

Բան մը ավելի... «որովհետև լիրանանյան պատերազմի յուրահատկությունը և՛ դեպքերի անճշմարտանման բարբարոսության, և՛ մտադածին թվացող դառնությունների մեջ է կայանում և այն էլ այնպիսի մի քաղաքում—Բեյրութ (ներշնչված ստեղծագործությունների մեջ դեպքերը մասնավորվում են միայն տվյալ քաղաքի սահմաններում), որտեղ մարդիկ կան՝ որոնք պիտի կարդան գրածդ ու չհավատան...»³:

Այո, պիտի չհավատան, որովհետև այդպիսին է, անհավատալի՝ լիրանանյան եղբայրասպան պատերազմի էությունը՝ ընդհանրապես, և հայ գաղութին վիճակված անսպասելի ու դառը ողբերգությունը՝ մասնավորապես: Ինչպե՞ս թե... կարող է հարց տալ ընթերցողը: Որովհետև զարմանալի այդ պատերազմը տնտեսապես և քաղաքականապես եթե հարվածում է ամբողջ երկրին, հետևաբար և մայրաքաղաքին, այնուամենայնիվ, փլուտակներ, ավեր ու սպանություններ լինում են նրանց միայն մի մասում: (Այդպիսին էր իրողությունը, երբ գրվեց «Սև և կարմիրը»):

Անհավատալի... քաղաքի մի մասում ընկնում են հարյուրավորներ, բռնաբարվում են աղջիկներ, կտրատված գլուխներով մարդկային մարմիններ են քարշ տալիս փողոցներով, քանդվում են եկեղեցիներ, հիվանդանոցներ, վաճառատներ, կողոպտվում, հրկիզվում, մինչ մյուս կողմում, քաղաքի հանդիպակաց կողմում՝ մարդիկ հանգիստ գնումներ են կատարում և դիտում կինոժապավեններ և նույնիսկ ճաշում... ուստորաններում: Պատերազմ, որ մի կողմից սնանկացնում է նախկին առևտրականներին, բայց նաև երևան է բերել նորերին, որոնք հարստացել են օգտվելով առիթից, օգտվելով մաքսային անարխիայից և գլխավորապես՝ կողոպուտից: Տնատերեր, որ անօթևան են մնացել, և շքեղ հյուրանոցներ, որոնք բնակեցվել են նախկին խրճիթաբնակներով և բնակեց-

² Նույն տեղում, էջ 7:

³ Նույն տեղում, էջ 112:

վել են անվճար... Առավել ողբերգականը այդ բոլորի մեջ այն է, որ լիբանանահայ հոծ գաղութի մեծամասնությունը պարտադրված ապրում է կամ ապրել է քաղաքի այն մասում, որտեղ որոշ մի ժամանակահատված սանձարձակ կամայականությունն էր աջ ծայրահեղականների, ֆրանկոյական նորեղուկ ֆալանկիստների, և նրանց ոճրային բնազդների իշխանությունն էր տիրում:

«Լուսաբացին, նկատեցի անմիջապես—երիտասարդ աղջիկներ կծկառած էին պառավներուն միջև, հայացքները՝ դեռնին: Երեի աչսպես՝ կղեռնի տարիներուն... նայեցա մյուսներուն՝ 16—20 տարեկան տղաք էին, մորուսավոր, մազերը՝ խոփվ, կուրծքերնուն վրա՝ փայտե խոշոր խաչեր, հիշեցի տարիներ առաջ տեսած ֆիլմ մը—այնտեղ կուրծքերուն վրա կեռ խաչեր էին, աչստեղ՝ խաչեր: Միակ տարբերությունը»⁴:

Խաչեր... համեմայնողես, նորօրյա ֆաշիստների սիմվոլը, որոնք սպանում են, հրկիզում, կողոպտում, բայց մանավանդ սպանում և ունեն նշանաբան՝ «Աստված, հայրենիք, բնտանիք», և հանուն ասածո, հայրենիքի ու բնտանիքի վարվում են անմեկնաբանելի սադիզմով: Յնցող են վերև նըշված հեղինակների առանձին-առանձին և հատկապես Գառնիկ Ազգարյանի հանգած եզրակացությունները.

«Յոթը օր՝ առանց հացի: Իր հոգը չէր, աչսպես թե այնպես կգիմանար, բայց թոռները... Ուրկե՞ր եկավ այս մարդը՝ պահված մոտակա մեծ հյուրանոցին վերի հարկի շես գիտեր որ անկյունը, և պատրաստ կրակելու շարժուն ամեն բանի վրա, շրջապատի բոլոր փողոցներուն մեջ: Նոր բան մըն ալ սորվեցանք՝ մարդորսություն: Քանի՞ հոգի սպաննվեցան կամ վիրավորվեցան աչգպես՝ մեկ մացթեն մյուսը անցնելու պահուն: Ու երբ աչկես ոչ ոք համարձակեցավ դուրս գալ տունեն, վերի մարդը սկսավ ձանձրանալ—երեկ սպաննեց հարևանի շունը, առջի օր՝ կատու մը: Մարդը կզվարճանար—շունշանորդին, ինչպես ալ նշան կառներ հեովեն...»⁵:

⁴ Նույն տեղում, էջ 107:

⁵ Նույն տեղում, էջ 27—28:

Նման պայմաններում, նման անարխիայում ի՞նչ է սպասում հայ զաղութին, երբ մանավանդ բանվորն ու գործակատարը, ուսուցիչն ու պաշտոնյան, որոնք պետք է ապրեն օրավարձի կամ ամսավճարի հաշվին, կանգնած են անգործության, մեծ անորոշության առջև... լավագույն դեպքում ընդհատումներով են աշխատում և վարձատրվում ոչ կայուն սակերով: Գաղթի դեպի առավել խաղաղ վայրեր, փախու՛ւտ ԱՄՆ, Կանադա և ուր ուղե՛ս... Առհասարակ արտագաղթի, գաղութից վերջնականապես հեռանալու դեմ են բոլոր հեղինակներն էլ և, առաջին հերթին՝ Գառնիկ Աղգարյանը, որ նախքան «Սև ու կարմիրը» նման անշեղ ձգտումով ու հաստատակամությամբ էր հանդես եկել և՛ իր հրապարակախոսական հոդվածներում, և՛ նաև, զխավորաբար, իր բանաստեղծություններում: Եվ դա, ըստ մեր կարծիքի, թեմայի առաջադրած հիմնական և ամենակարևոր միտումն է: Որովհետև լինել արտագաղթի դեմ, նշանակում է նման պատերազմի պատճառած ողբերգություններից ամենամեծագույնի կանխմանը նպաստել:

«Մեր հեռացումով կբայցքայվի այս զաղութը, և ամենասրբազան իրավունքը, զոր իրրե ժողովուրդ ունինք, կսահի մեր ձեռքերին»⁶, — կարդում ենք «Ճեղքված մանրանկարում», որտեղ «Արևելյան ձեղքված ձայնապնակը» պատմվածքի հերոսներից մեկը ստում է իրավամբ և՛ այս, որը մանավանդ հարկ է իմանալ.

«Հսկա դարպասի» (իմա՝ ԱՄՆ. Գ. Ս.) խաբկանքի մասին, որտեղ կփլչին բոլոր արժանիքները, կանհետին սրբությունները և, ամենևն սարսափելին, կարհամարհվին ավանդությունը և լեզուն, ու կանհետի ժողովուրդը: Կամքի երիտասարդին հայությունը, պատանին հայությունը կապրի դեղերու, դոլարի կամ չափազանցված սեռի անկյուններուն մեջ...»⁷:

⁶ Վեհափառ Թեոֆան, Ճեղքված մանրանկար, Բեյրութ, 1977, էջ 27:

⁷ Նույն տեղում, էջ 56:

Անցել է չորս տասնամյակ, և դարմանալի ու նաև ահա-
վոր է տեսնել, որ սփյուռքահայ գաղթօջախներում տարբեր
քաղաքական ազդակների արդյունք, բայց միշտ՝ հայտնի ու
դասականացած բարքերի բերմամբ, գաղթահայ զանգված-
ների տարբեր հորիզոնականներում և տարբեր ժամանակա-
հատվածներում սպառնում է նույն շահան-շահնուրյան «Նա-
հանջի» սարսափը և տարեց ու երիտասարդ դրողներին և նը-
րանց մեջ Գառնիկ Աղգարյանին հուզում է նույն «Նահան-
ջից» խռոտափելու միտումը: Եվ այդ հիմքի վրա էլ թվում է
նույնիսկ, որ այնքան էլ «սարսափելի» չեն Գառնիկ Աղգար-
յանի «Սև և կարմիր»-ում նկարագրված այն տեսարանները,
որոնք սլափում են միմիայն ձախակողմյան թերթեր կարգա-
լու համար ի կատար ածված գնդակահարումները, անհիմն ու
անբացատրելի այն առևանգումները, որոնք որը են թողնում
զավակներին ու այրի՝ կանանց, և դեռևս այն մորթված հա-
յերին, որոնք դարձել են ոչխարներ միայն՝ հանուն չգիտակց-
ված կրոնական պատկանելիության, և հայ անշափահաս աղ-
ջիկներ, որոնք ականատեսներն են ցեղերի վրա բարձրացված
զլովանների և կորցրել են հոգեկան հավասարակշռությունը, և
դեռևս մարտիկներ, որոնց կառքերին լծված դիակները քաշ-
կըստվում են հայկական թաղերով և այս բոլորին ի տես մա-
նուկներ, որոնք ճանաչում են երկու դուշն միայն՝ սևը, որպես
սղի ու մահվան, ու կարմիրը՝ որպես... արյան:

Բայց ինչո՞ւ գրեցիր այս գիրքը, և նույն պատասխանը...
Ուզվե՞տե՞ շէի կրճառ չգրել...: Եվ ի՞նչ էիր ուզում ասել...
Ուզում էի, որ մարդիկ կարդան այս բոլորը և հասկանան, որ
քարուքանդ եղած գրադարանների, ածիացած գրքերի, աննը-
պատակ գնդակներից բնկած հայր ու որդիների, մայր ու
հարսների, չորս օր առաջ մահացած մոր դիակը իր սեփական
ձևորով այրող որդու դաժան ճակատագրին հակառակ, հարկ
է տոկալ դեռևս:

Գիրքը գրված է հենց դրա համար: Տոկալու ուժ ու հա-
վաք հաղորդելու համար:

«Սև և կարմիր» ստեղծագործությունը պիտի ընդունել
Գառնիկ Աղգարյան մարդու և նրա ստեղծագործության ամ-

բողջութեան մեջ: Սա աչն վաղերաթուղթն է, աչն վիպագիրութեանը, որ մուսլ իր էջերով և կատարողական պատշաճ մակարդակով ապագայի համար փրկում է փաստերի աչն վաղերականութեանը, որոնք ապրվել են բառացիորեն: Ճշմարտացի են ու իրավ: Այո՞, ապշել կարելի է, թե ինչպիսի աշարիւրը ապրող մարդը, աչն էլ բանաստեղծը, գեռես կառնած է մնացել աչն երբեմնի հայաբուշր դաղութից, որ Լիբանանն է, որ, հակառակ անցնող տարիներին և կրած փորձութեաններին, գեռես համառում է մնալ նույնը, և աշար՝ բազում դահերի գնով, և նրանց, որոնք կենդանի են, բայց լքել ու լքում են ծննդավայր կոչվող... «հայրենին»: Իսկ «հայրենին», կմընա՞ նա, ինչպիսին որ կար: Դժվար թե... չէ՞ որ չկա ինքը, աշդ «հայրենին», երկրորդ հայրենիք ընդունած... Գառնիկ Աղգարչանը:

Ասվում է, թե անփոխարինելի մարդիկ չկան: Ճիշտ է դա: Բայց երեւի կան և բացառութեաններ, նման ձեռնկերպումից:

Գառնիկ Աղգարչան բանաստեղծը նախ, ապա և հրատարակագիրը, թերեւ՝ երկուսը միախառնված իրար և աշար երկուսին հավելագրած արձակագիրը, երբեք անփոխարինելի չի եղել և չէ: Աշդ ամենը սփյուռքահայ գրականութեան ոչ բացառիկ երևույթներից է և որակական իմաստով նաեւ նրա համեստ գրականութեանից մեկը, բայց տարօրինակորեն և, կասեինք՝ անմեկնելիորեն նաեւ, Գառնիկ Աղգարչան մարդն ու պրողը (իր աշխատանքը գրականութեանը) աշխարհի մի անհատականութեան էր՝ տոկուն ու ամրակայուն, որ աւամա հեռանալով ոչ թե շենքն է փլում, աշ պակասում է նրա սեյամիկ դիմադրողականութեանը: Սփյուռքը կա ու կլինի, բայց նրա սեյամիկ դիմադրողականութեանը առավել կայուն էր նաեւ նրանով: Աշար մասին դժվար թե լինի երկու կարծիք:

Դրա փաստը հենց ինքն է՝ Գառնիկ Աղգարչանը:

ՎԵՐՋԱՐԱՆ

Տվյալ պատմական ժամանակաշրջանում, 1945—1985 թթ., եթե չհաշվենք «Սև և կարմիր»-ի վերջին տասնամյակը, սփյուռքահայ գրական, հասարակական, բայց նաև հատկապես քաղաքական կյանքը ապրում ու գործում էր տարանջատված, իրարամերժ հոգեբանությամբ: Այս ֆոնի վրա, հատկապես վերջին շրջանում, Գառնիկ Աղզարյանը հանդես եկավ որպես քաղաքական այն բացառիկ գործիչներից մեկը, որոնք շուտ բմբունեցին ազգային շահերի բոլորից վեր լինելու հանդամանքը: Եվ ոչ միայն բմբունեցին, այլև գործեցին այդ ուղղությամբ:

Իսկ այժմ, մեր վերջավորող խոսքում, որպեսզի մեր ասածները առավել շոշափելի լինեն հատկապես այն իմաստով, որ մենք գործ ունենք բանաստեղծի հետ, խոսենք Աղջարյանի այն վերաբերմունքի մասին, որ առնչվում է սփյուռքահայ գրականության նկատմամբ նրա ունեցած կեցվածքի խնդրին: Այն կեցվածքի, որը մեր ներկա իրականությունում, որպես գրական գործոն, վերաբերվում է «սպիտակ բծերի» վերացմանը:

Հիմա մեղանում ոչ քչերն են այդ մասին գրում, բայց ե՛մեզ մոտ, ե՛սփյուռքում, դժվար էր այն հանդգնությունը, որ հանդես էր բերվում, ում կողմից որ ուղես: Գառնիկ Աղզարյանը գեոեա բոլորից առաջ, այս՛, բոլորից առաջ, պիտակեել էր այդ այսպես կոչված «սպիտակ բծերի» վերացման անհրաժեշտությունը, և դրա լավագույն ապացույցը նրա «գրականագիտական» աշխատանքներում հանդես բերված անկողմնակալությունն էր: Անկողմնակալություն, որ ելնում էր միայն ու միայն հայ գրականության և նրանից բխող ազգա-

պահպանման միասնական պայքարի շահերից: Այս հարցում էր Գառնիկ Աղդարյան մարդու, բանաստեղծի, կասեինք նաև՝ քաղաքական գործչի ոչ դյուրին ճանապարհը և արդեն առաջամարտիկներից մեկը լինելու հանգամանքը: Խնշումն էր բանը: Դեռևս «Կանչ»-ի էջերում նա հայ ժողովրդի միասնականության խնդրում օրինակ էր բերում սփյուռքահայ գրականության մեծագույն գրողներից մեկին՝ «Վազգեն Սֆանչելիին», և գրում հետևյալը.

«Բայց ո՞վ կրնա առարկել — եթե հետեզեռնյան տարիներուն չըլլար ֆրանսահայ գրական սերունդ ու չըլլար Շահնուր, չըլլար Վազգեն Շուշանյան մանավանդ՝ հիմնովին տարբեր կրնար ըլլալ ընթացքը սփյուռքահայ գրական կյանքին, բանով մը, մեծ բանով մը խոչընդոտված կըլլար կազմավորումը սփյուռքահայ գրական հաջորդող սերունդներուն:

Եվ այս՝ առանց գաղափարական որևէ խտրության: Կրսենք՝ գաղափարական, ու կհիշենք վերջերս արժարժված բյուզանդական վեճ մը՝ Շուշանյանը քմահաճորեն հատվածական պիտակի մը տակ առնելու ձգտող: Չտարվինք հոսանքով ու չփորձվինք իր իսկ գրական վկայություններով կամ իր իսկ հասարակական գիրքավորումներով ապացուցել, անառարկելիորեն ապացուցել, որ Շուշանյան վաղուց ձերբազատված էր ամեն պատկանելիութենե և ունի միայն մեկը — պատկանելիությունը ժողովուրդին, հայրենիքին, մարդկության (ընդգծումը մերն է. Գ. Ս.): Այլ բսենք հետևյալը — կը բավե որ բոլորս, ներառյալ անոնք՝ որոնք ժամանցված պատկանելիություններ որոնելու մտասեռումը ունին հիմա, ըլլանք հավատարիմ Շուշանյանի 16 փետրվար 1940-ի օրագրին, որ իր կտակն է նաև, կը բավե, որ կենսագործենք խորհուրդը այդ կտակին, որպեսզի ամեն պատկանելիություն գտնա երկրորդական, փուլ գա հատվածական ամեն պատվար և պատկանելիության ամեն որոնում դառնա ինքնին ծիծաղելի»¹:

¹ Գառնիկ Աղդարյան, Վազգեն Սֆանչելին, «Կանչ» շաբաթաթերթ, Բեյրութ, թիվ 7477, 3 հուլիսի 1983, էջ 8:

Վաղգեն Շուշանյանի նկատմամբ խորունկ սեր ու հարգանք ունեցող բանաստեղծից այս մեջբերումը պետք չունի մեկնաբանությունների:

Վաղգեն Շուշանյանի օրագրային այդ գրառումը, որ բավականին բնորոշակ է, մենք արդեն հիշատակել ենք «Հայրենիք և մշակույթ» հնթազվիում: Իսկ ներկա պարագային արժե հիշել այդ գրառումից այն հատվածը, որ, իրոք, կտակ էր, անժամկետ կտակ.

«...Կանցնին բոլոր փիլիսոփայություններն ու կանցնին բոլոր օտար կրքերը, ինչ որ կմնա՝ ժողովուրդն է, իր բեղուն երանգներով, ուր կեռեփին վաղվան բոլոր փառքերն ու հաղթանակները: Որքան ատեն որ կանգուն է մեծ լեռը, և անոր արքայական սովերին տակ աղյուր կապրի, հոգ չէ թե տվայտանքով, կարելի են բոլոր վարձներները: Կանցնին բոլոր վերքերն ու բոլոր հուսահատությունները, բոլոր նվաստություններն ու բոլոր ստորջանքները,— ինչ որ կմնա՝ հայ մանուկն է հայրենի հողին վրա:

Ահա այս պետք է ըլլա մեր Ալֆան ու մեր Օմեգան, մեր ճշմարտությունն ու մեր արդարությունը: Թող այս օտար եղերքներուն վրա մեր վերջին երգը լուս հավիտյանս հավիտենից՝ միայն թե հայ շինականը լուսաբացին կարենա իր զբվարթությունը մրմնջել:

Թող նոր աժգահա մը ելլեր երկրքին Մասյաց, սրունքներեն մեկը նետեր մեկ լեռան և մյուսը Արագածի լեռի գագաթին ու ողջ հայոց աշխարհը երիկամունքներեն սարսող ձայնով մը որոտար, լեցնելով կիրճերու մեր խոնարհ դյուղերը, Սանահինեն մինչև Սևանի եզերքը, Զանգեզուրեն մինչև Շիրակա դաշտ, թող որոտը գոռալով թավալեր ավաններեն ու բաղաքներեն:

Կանցնին բոլոր փոթորիկներն ու բոլոր ահագնադուրդ պատերազմները, կանցնին բոլոր հորդաներն ու բոլոր բարբարոսները, կանցնին բոլոր հերետիկոսներն ու բոլոր պղծտիկ պարոնները՝ իրենց սուտ իմաստությունամբ, հայոց աղգ, քալերդ դուրս մի նետեր այս ավանդակներեն, այս ծործորներեն ու այս խոսքան հողերեն: Եթե նույնիսկ բազուկներդ

շկրնան հրացան բռնել, մագիլներովդ ճանկե արդարությունդ, եթե նույնիսկ ստիպված ըլլաս, անգամ մը ևս, ողնաշարդ ծռել, ողջ հասակովդ ընկիր մեր կարմիր հողերուն վրա: Ավելի լավ է սողալ աչտտեղ՝ քան թե գլուխ ցցել ուրիշին սահմաններուն: Ոչ մի նոր ելք այլևս այս հողերին: Ճակատագիրդ հոս է և սրբությունդ հոս, վասնզի հոսկե է միայն, որ վաղը բոլոր փառքերը կրնան արթննալ և բոլոր ցորենները բարձրանալ գեղողեշ բոլոր աղոտներեն» (Վ. Շուշանյան, Օրագիր, 16 փետր. 1940, «Հալլեհի» ամսաթերթ, մայիս—հունիս, 1943):

Ազգարյանը այս կտակի իսկական ժառանգորդն էր և նաև կենսագործողը:

Գառնիկ Ազգարյանի մյուս ուսուցիչը Եղիշե Չարենցն էր և այս՝ նաև նրա մեծ պատգամի կրողը լինելու իմաստով: «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: «Չարենցը մեր պաշտելին», այսպես էր խորագրված նրա խոսքը մեծ բանաստեղծի ծննդյան 70-ամյակի առթիվ Բեյրութում կայացած հանդիսության րացման խոսքում:

«Ազգայինը— սերունդներուն իբրև ավանդ տրված պատգամը, հայ ժողովուրդին փրկությունը իր հավաքական ուժին մեջ փնտրելու կոչը, որուն մեջ՝ Չարենցի բառով, կարգ մը ֆիլիստրներ կարծած էին զոտած ըլլալ ապացույցը պաղատարական շեղումի կամ ազգայնամոլության, մինչ ան հաստատումն էր ոչ միայն հայ ժողովուրդին, այլ բոլոր ժողովուրդներուն համար ի զորու ճշմարտության մը և կը հիշեցներ անգամ մը ևս՝ թե մարդկությունը լավագույնս կարենալ սիրելու համար պետք է նախ գիտնալ սիրել իր իսկ ժողովուրդը, կամ բոլոր ժողովուրդներուն միասնությունը ապահովելու համար պետք է նախ ապահովել միասնությունը իր իսկ ժողովուրդի զավակներուն»²:

² Կառնիկ Ազգարյան, Չարենցը մեր պաշտելին..., Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին, կազմող՝ Գրիգոր Գույումճյան, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, էջ 306—307:

Գառնիկ Աղդարյանը իր ելույթներում, և այս նաև Երևանում, հաճախ է անդրադարձել Եղիշի Չարենյին և սփյուռքում հաճախ գրել ու խոսել Վազգեն Շուշանյանի մասին: Այս երկուսը, որպես խորհրդանշ միասնականության, հիմք են հանդիսացել նրա կյանքի և գրականության համար: Չհաշված, որ նա նաև մենագրական աշխատանք է գրել երկրորդի մասին: Հետաքրքիր է նաև, որ նա հայրենական գրողներից և գրականագետներից առանձին համակրանք է տածել նաև Պարույր Սեակի նկատմամբ³, Գուրգեն Մահարու, Հրանտ Թամրազյանի⁴, Համո Սահյանի⁵ և, ինչ խոսք՝ նաև Հովհաննես Շիրազի⁶ հանդեպ, ոչ պակաս նաև՝ Զոն Կիրակոսյանի⁷, որոնք նշված միասնականության աչքի ընկնող ջատագովներն են հանդիսացել:

Իսկ ինչ վերաբերում է խորհրդահայ և հատկապես ամերևոտահայ և սփյուռքահայ գրականություններում առկա «սպիտակ բծերի» վերացմանը, Գառնիկ Աղդարյանը, շեշտենք մի անգամ ևս՝ հակառակ իր քաղաքական ակնհայտ դիրքորոշման, կոչմ էր, որ հայ գրականությունից արհեստական պատվարներով դուրս շմնան Լևոն Շանթն ու Հակոբ Օշականը, Համաստեղն ու Մուշեղ Իշխանը, Արամ Հայկազն ու Սիրան Սեզան և շատ ուրիշներ և՛ ինչքան շատ, այնքան լավ, դառնան հայ միասնական գրականության սեփականությունը:

³ Կառնիկ Աղդարյան, Եղիցի լույս, «Ազգային մշակույթ», Բեյրութ, 15 ապրիլի 1984, էջ 1, 8:

⁴ Կառնիկ Աղդարյան, Գրական ընդմիջում, «Ազգային մշակույթ», Բեյրութ, 2 նոյեմբերի, 1986, էջ 8:

⁵ Կառնիկ Աղդարյան, Մեր բանաստեղծության Ալբինոսը, Դեռ վարումաններ կը դան աշխարհ, Սիամանթոներ կը դան..., «Ազգային մշակույթ», Բեյրութ, 5 օգոստոսի 1984, էջ 5:

⁶ Կառնիկ Աղդարյան, Հովհաննես Շիրազ, Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին, էջ 286—305:

⁷ Կառնիկ Աղդարյան, Հայոց դատախազը, «Ազգային մշակույթ», Բեյրութ, 30 հունիսի 1985, էջ 8:

Այսօր նրա անվան դպրոցը նորքի բարձունքներում «մեկ ժողովուրդ և մեկ գրականութիւն» խորհրդանիշն է և հենց այդ խորհրդանշական հիմքն է, որից պիտի դաս առնեն և դաստիարակվեն մեր հայրենի և սփյուռքի նորահաս սերունդները, որոնք կանգնելու են մեր հրատարակչութիւնների ղեկավար մարմիններում, դառնան գրականագետներ և ամենակարեւորը՝ ուսուցիչներ մատաղ սերունդների համար:

Ուշացումով, բայց ոչ ուշ, Գառնիկ Աղդարյանը, որին ոչ քիչ անդամներ նիւթնեւական վզկապներ են ամրացրել մեր դպրոցներում, երբ նա այցելում էր հայրենիք, պիտներն էր հայ միասնական գրականութիւն: Այն միասնականութիւն, որն արդեն մտել էր հունի մեջ: Հուն, որի կազմավորման ընթացքի մեջ քիչ չեղավ նաև նրա դերը: Եվ այդ դերը ստիպում է մեզ գնահատել իր վաստակը այնպես, ինչպես արվել է սիրով գրված այս ուսումնասիրութիւնում: Վաստակ, որի առաջին քայլերից իսկ վկան ու ընկերակիցն է եղել առկարիս հեղինակը՝ կրելով ու բաժանելով ընկերակցութիւն արխուր ու ուրախ, մոռյլ ու, առավել շատ՝ պայծառ օրերը:

11

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հեղինակը և իր հերոսը	3
Կյանքը	7
ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ	
Խմբավիրը և հրապարակավիրը	26
Հայրենիք ու մշակույթ	29
Արտադաղձ... Զուլում	43
Լիրանան և լիրանանահայտություն	54
Մեծ ու փոքր ցավեր	64
Քանասանդժր	
Սիրո երգիչը	76
Մարտական զիբրերում	86
Խոհական երգեր	94
Հայրենիք, հաջապահականում	98
Արձակավիր	
(Սև և կարմիր)	118
Վերջարան	126

ԴԵՂԱՄ ՍԵՎԱՆ

ԳԱՌՆԻԿ ԱԴԴԱՐՅԱՆ

(Կյանք և ստեղծագործությունը)

Հրատ. խմբագիր Ա. Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Տեխ. խմբագիր Վ. Զ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հանձնված է շարվածքի 31.03.1998 թ.: Ստորագրված է տպագրության
30.04.1998 թ.: Չափը $84 \times 108^{1/32}$: Թույլ № 1: Տառատեսակ «գրքի
սովորական»: Բարձր տպագրություն: Տպագրական 8,25 մամուլ:
Տպաքանակ 500: Պատվեր № 2: Դինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24դ.:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
378410, ք. Աշտարակ, Գիտավան, 2:

11.

300 pp

A $\frac{11}{85174}$

//